ըստ այդմ պնդում դրաանհրաժեշտությունը:

Այսպես, հայցերի մրցակցության  
հնարավորությունը բացառում են Օ.Ս. Իոֆեն, Օ.Գ.  
Երշովը և այլ հեղինակներ: Օրինակ՝ Օ.Ս. Իոֆեն  
գտնում է, որ, քանի որ վիճող կողմերը գտնվում են  
մեկ իրավահարաբերության մեջ, իսկ վեճը  
առաջանում է որոշակի խախտման հետևանքով,  
հետևաբար խոսք կարող է լինել միայն մեկ հայցի  
մասին: Երշովի կարծիքով դեղիկտի դեպքում  
խախտվում է տուժողի բացարձակ իրավունքը, իսկ  
պայմանագրային պատասխանատվությունը միշտ  
առաջանում է պարտապանի կողմից համապատասխան  
իրավահարաբերության կոնկրետ պարտականության  
խախտման պատճառով, և հետևաբար բացառվում է  
հայցերի մրցակցությունը: Ռ.Վ. Խալիևը, իր հերթին  
նշում է, որ Ապրանքների թերությունների  
հետևանքով պատճառած վնասի դեպքում  
օրենսդրորեն արտադրողին կամ վաճառողին  
հատուցման պահանջ ներկայացնելու

<sup>28</sup> Տե՛ս **Блинкова Е.В.**, "Конкуренция договорных и деликтных исков в гражданском праве: исторический и сравнительно-правовой аспект", известия Юго-Западного государственного университета, История и Право, Курск, 2011, N 2, էջեր՝ 17-18:

այլ ընտրանքային հնարավորություն նախատեսումը չպետք է դիտարկել որպես հայցերի մրցակցություն, քանի որ տուժողին ընձեռվում է ոչ թե վնասի հատուցման հիմքերի, այլ վնաս պատճառած սուբյեկտների միջև ընտրություն կատարելու հնարավորություն<sup>29</sup>:

Մենք գտնում ենք, որ արտապայմանագրային կամ պայմանագրային պատասխանատվություն սահմանող նորմերով վնասի հատուցման պահանջներ կայացնելու տուժողի ընտրություն իրավունքը որևէ առնչություն չունի և ըստ այդմ չի կարող նույնանալ վնաս պատճառած սուբյեկտի ընտրության հետ, քանի որ հայցերի մրցակցությունը վերաբերելի է ոչ թե սուբյեկտների, այլ վնաս պատճառած անձի դեմ արտապայմանագրային կամ պայմանագրային պատասխանատվություն սահմանող նորմերով հատուցման պահանջներ կայացնելու ընտրության հնարավորությանը:

Յեղիսակների մյուս խումբը (Ա.Կուկիկ, Վ.Մոզոլիև, Ա.Կաբալկին) գտնում է, որ սպառողներին՝ որպես առավել չպաշտպանված կողմի, պետք է ընձեռվի հայցերի մրցակցության իրավունք: Իր հերթին, Ն.Մ. Ֆրոլովան, անդրադառնալով Ռուսաստանի Դաշնության (այսուհետ՝ ՌԴ) քաղաքացիական օրենսդրության վերլուծությանը, գտնում է, որ վեճի կողմերի՝ պայմանագրային կամ արտապայմանագրային հարաբերությունների մեջ գտնվելու դեպքում անձին չի ընձեռվում հայցի տեսակը ընտրելու հնարավորություն՝ դրանով իսկ չթույլատրելով հայցերի մրցակցություն, և քաղաքացիական օրենսդրությամբ միայն

<sup>29</sup> Տե՛ս այս հեղինակների կարծիքը **Халин Р.В.**, "Гражданско-правовая ответственность за вред, причиненный недостатками товаров, работ и услуг по праву России, Англии и США", дисс. к.ю.н., Белгород, 2015, էջեր՝ 56-57:

բացառություն կարգով է թույլատրվում պայմանագրային և արտապայմանագրային հայցերի մրցակցություն՝ ընտրություն հրավույնքը վերապահելով սպառողին <sup>30</sup>:

Ապրանքների թերությունների հետևանքով պատճառված վնասի դեպքում հայցերի մրցակցության խնդիրը ծագել է նաև եվրոպական և անգլո-ամերիկյան հրավական համակարգի երկրներում: Արևմտյան հրավական գրականությունում պատասխանատվության բաժանումը պայմանագրային և արտապայմանագրային էնթարկվում է քննադատություն՝ ընդգծելով, որ նման բաժանման գոյությունը պայմանավորված է բացառապես պատմական պատճառներով <sup>31</sup>: Շատ զարգացած երկրներում՝ ինչպիսիք են օրինակ՝ Գերմանիան, Ճապոնիան, Անգլիան, Ամերիկայի Միացյալ Նահանգները, ճանաչվում է տուժողի ընտրություն հրավույնքը՝ ներկայացնել պայմանագրի խախտման կամ դելիկտի հետ կապված հայց: Իրավաբանական գրականության մեջ ընտրություն այս հրավույնքը որակվում է որպես պայմանագրային և արտապայմանագրային պատասխանատվության մրցակցություն: Մասնագիտական գրականության մեջ հայցերի մրցակցությունը բնորոշվել է նաև որպես պարտատիրոջը պատկանող և պարտապանի դեմ ուղղված հավասարաբեք պահանջներ, որոնք, ունենալով այլ ընտրանքային բնույթ, ուղղված են միևնույն հրավույնքների և օրինական շահերի

<sup>30</sup> Տե՛ս այս հեղինակների կարծիքը՝ **Мамин А.С., Халин Р.В.**, "Сравнительно-правовой анализ разграничения договорной и деликтной ответственности за вред, причиненный вследствие недостатков товаров, работ или услуг по действующему законодательству РФ", Бизнес в законе, Экономико-юридический журнал, Москва, 2013, N 6, էջ 47:

<sup>31</sup> Տե՛ս **Բարսեղյան Տ.Կ.**, Գույքային պատասխանատվության հասկացությունը, հրավագիտություն հարցեր, Եր., 2003, N 4, էջ 25:

պաշտպանությունը<sup>32</sup>, իսկ այդ մրցակցությունը հնարավոր է այն դեպքում, երբ պաշտպանության համապատասխան միջոցներ նախատեսող նորմերը հավասարապես կիրառելի են վիճելի իրավահարաբերություն նկատմամբ<sup>33</sup>:

ԵՄ իրավական համակարգում, որպես կանոն, Ապրանքների թերությունների հետևանքով պատճառված վնասի դեպքում սահմանվում է պատասխանատվության միասնական ռեժիմ<sup>34</sup> և տարբերակում չի դրվում պայմանագրային և արտապայմանագրային պատասխանատվության միջև: Այս կապակցությամբ նշվում է, որ նման կարգավորումը ապահովում է սպառողների՝ պայմանագրից բխող հայց ներկայացնելու և արտապայմանագրային հարաբերությունների շրջանակում իրացվող բոլոր իրավունքները<sup>35</sup>:

Այսպես, օրինակ՝ Ֆրանսիայի իրավական համակարգում չի թույլատրվում պայմանագրային և արտապայմանագրային պատասխանատվության մրցակցություն, և եթե վնասը պատճառվել է պայմանագրային պարտավորության խախտման արդյունքում, ապա կարող է ծագել միայն պայմանագրային պատասխանատվություն<sup>36</sup>: Դրան հակառակ օրինակ՝ Անգլիայի դատական պրակտիկայում, տուժողին ընձեռվում է հայցերի

<sup>32</sup> Տե՛ս **Мамин А.С., Халин Р.В.**, "Сравнительно-правовой анализ разграничения договорной и деликтной ответственности за вред, причиненный вследствие недостатков товаров, работ или услуг по действующему законодательству РФ", Бизнес в законе, Экономико-юридический журнал, Москва, 2013, N 6, էջ 46:

<sup>33</sup> Տե՛ս **Груздев В.В.**, "Проблема конкуренции исков", Юридическая наука, Москва, 2011, N 4, էջ 39:

<sup>34</sup> Պատասխանատվության միասնական ռեժիմ նախատեսված է ինտելլեկտուալ հիմնավորվում է Դիրեկտիվի 13-րդ հոդվածով, որը սահմանում է, որ այն չի կարող ազդել վնաս կրած անձի որևէ իրավունքի վրա, որով վերջինս օժտված է պայմանագրային կամ արտապայմանագրային պատասխանատվություն և սահմանող նորմերով կամ պատասխանատվության հատուկ ռեժիմ սահմանող համակարգով, որը գործում է Դիրեկտիվի վերաբերյալ անդամ պետություններին ծանուցելու պահին:

<sup>35</sup> Տե՛ս **McDougall Arundel and Prashant Popat Q.C.**, International Product Law Manual, Austin, Wolters Kluwer Law & Business, The Netherlands, Kluwer Law International, 2011, էջ 40:

<sup>36</sup> Տե՛ս **Мамин А.С., Халин Р.В.**, "Сравнительно-правовой анализ разграничения договорной и деликтной ответственности за вред, причиненный вследствие недостатков товаров, работ или услуг по действующему законодательству РФ", Бизнес в законе, Экономико-юридический журнал, Москва, 2013, N 6, էջ 46:

մրցակցու թյան իրավունք՝ պայմանավորված պատասխանատվու թյան ծավալի տարբերու թյամբ<sup>37</sup>:

Վերլուծելով վերը նշված բոլոր տեսակետները և հաշվի առնելով արտապայմանագրային և պայմանագրային պատասխանատվու թյան առանձնահատկու թյունները՝ գտնում ենք, որ Ապրանքների թերու թյուններին հետևանքով պատճառված վնասի դեպքում, Քաղաքացիական օրենսգրքով, որպես ընդհանուր կանոնից բացառու թյուն, թույլատրվում է պայմանագրային և արտապայմանագրային հայցերի մրցակցու թյուն: Մեր կարծիքով, օրենսդրի կողմից բացառու թյան կարգով  հայցերի մրցակցու թյուն  թույլատրելու իրավական հնարավորու թյունը պայմանավորված է պաշտպանու թյան ենթակա օբյեկտների կարևորու թյամբ, և այդ օբյեկտներին վնաս պատճառելու դեպքում պաշտպանվածու թյան ավելի բարձր աստիճան ապահովելու և վնասի հատուցման ամբողջական ծավալով իրականացումն ապահովելու անհրաժեշտու թյամբ:

ՀՀ Քաղաքացիական օրենսդրու թյան վերլուծու թյունը հնարավորու թյուն է ընձեռում առանձնացնել այն պայմանները, որոնց առկայու թյան դեպքում կարող է ծագել հայցերի մրցակցու թյան հարցը: Մեր կարծիքով, դրանք են՝

1. վնաս պատճառողի և տուժողի՝ պայմանագրային հարաբերու թյուններին մեջ գտնվելը.

2. վնաս պատճառողի կողմից պայմանագրային հարաբերու թյուններին մեջ գտնվելու դեպքում անձի կյանքին, առողջու թյանը կամ գույքին վնաս պատճառելը.

3. օրենսդրորեն վնասի հատուցումը պայմանագրային կամ արտապայմանագրային

<sup>37</sup>Տե՛ս նույն տեղում:

պատասխանատվությունը սահմանող նորմերով պահանջելու հնարավորություն ամրագրելը .

Հարկ է նշել, որ Քաղաքացիական օրենսգրքը, (հոդված 1089) ամրագրելով պայմանագրային կամ արտապայմանագրային պատասխանատվությունը սահմանող նորմերով հատուցման պահանջներ կայացնելու տուժողի ընտրություն իրավունքը, հստակ լուծում չի տրվել պայմանագրային կամ արտապայմանագրային պատասխանատվության կիրառելիության հարցին: Ուշադրություն է արժանի այն, որ Քաղաքացիական օրենսգրքի 868-րդ, 1077-րդ հոդվածներով և նախատեսվում է պայմանագրային և արտապայմանագրային հայցերի մրցակցություն տուժողի և վնաս պատճառողի պայմանագրային հարաբերությունների մեջ գտնվելու դեպքում, ինչը կախված է պայմանագրով կամ օրենքով պատասխանատվության ավելի քարձր չափ նախատեսված լինելու հանգամանքից: Այսինքն՝ միայն պայմանագրով կամ օրենքով պատասխանատվության ավելի քարձր չափ նախատեսված չլինելու դեպքում է թույլատրվում արտապայմանագրային պատասխանատվությունը սահմանող նորմերով վնասի հատուցումը:

Մասնավորապես, Քաղաքացիական օրենսգրքի 868-րդ հոդվածով ամրագրվում է ուղևորի կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի համար փոխադրողի արտապայմանագրային պատասխանատվության հնարավորությունը միայն այն պարագայում, երբ փոխադրողի առավել խստացված պատասխանատվություն նախատեսված չէ օրենքով կամ փոխադրման պայմանագրով, իսկ 1077-րդ հոդվածով նախատեսվում է պայմանագրային պարտավորություններ և այլ պարտականություններ կատարելիս քաղաքացու կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի



հատուցման հնարավորություն  
արտապայմանագրային պատասխանատվությունը  
սահմանող նորմերով այն դեպքում, երբ  
պատասխանատվության ավելի բարձր չափ  
նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

Չաշվի առնելով վերը նշվածը՝ գտնում ենք, որ  
Ապրանքների թերությունների հետևանքով  
պատճառված վնասի դեպքում վնաս պատճառողի և  
տուժողի պայմանագրային հարաբերությունների  
մեջ գտնվելու պարագայում անձի կյանքին,  
առողջությանը կամ գույքին վնաս պատճառելու  
դեպքում պայմանագրային պատասխանատվություն  
սահմանող նորմերով վնասի հատուցում  
պահանջելու հնարավորությունը անհրաժեշտ է  
պայմանավորել պայմանագրով  
պատասխանատվության ավելի բարձր չափամրագրված  
լինելու հանգամանքով:

Այլ կերպ ասած՝ որպես պայմանագրային  
պատասխանատվության կիրառելիության չափանիշ  
անհրաժեշտ է առանձնացնել պայմանագրով  
պաշտպանվածության առավել բարձր մակարդակի  
(պատասխանատվության առավել բարձր չափի)  
ամրագրումը: Սա նախ և առաջ պայմանավորված է  
պատճառված վնասի լրիվ և ամբողջական ծավալով  
հատուցման ապահովման անհրաժեշտությունից, որն  
իր հերթին բխում է վնասի հատուցման  
հարաբերությունների քաղաքացիական  
օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված՝  
խախտված իրավունքների վերականգնման  
ապահովման սկզբունքի ընդհանուր  
տրամաբանությունից: Սա բացատրվում է նաև  
նրանով, որ միայն պայմանագրով  
պատասխանատվության առավել բարձր ծավալի  
նախատեսման պարագայում իրավաչափ կլինի  
արտապայմանագրային պատասխանատվությունը

սահմանող նորմերով վնասի հատուցում  
չպահանջելը՝ հաշվի առնելով այն, որ  
պայմանագրով արդեն իսկ երաշխավորված է վնասի  
ամբողջական ծավալով հատուցման  
հնարավորությունը:

**§1.2. Արտապայմանագրային պատասխանատվության  
պայմանները՝ ապրանքների, աշխատանքների,  
ծառայությունների թերությունների հետևանքով  
պատճառված վնասի դեպքում**

Իրավաբանական գրականության մեջ որպես  
քաղաքացիաիրավական պատասխանատվության միակ  
ընդհանուր հիմք առանձնացվում է սուբյեկտիվ  
քաղաքացիական իրավունքների խախտումը, իսկ  
հակաիրավականությանը, վնասների  
առկայությունը, քաղաքացիական իրավունքների  
խախտման և վնասների միջև պատճառական կապը,  
մեղքը դիտարկվում են որպես պատասխանատվության  
պայմաններ կամ իրավական նախադրյալներ, որոնց  
առկայությունն անհրաժեշտ է սանկցիաներ  
կիրառելու համար<sup>38</sup>: ՀՀ-ում ձևավորված դատական  
պրակտիկայի վերլուծությունը վկայում է  
արտապայմանագրային պատասխանատվության  
պարտադիր չորս պայմանների առանձնացումը՝  
իրավունքը խախտած անձի ոչ օրինաչափ վարքագծի,  
վնասների, վնասների և ոչ օրինաչափ  
գործողության միջև պատճառահետևանքային կապի,  
մեղքի միաժամանակյա առկայությունը<sup>39</sup>:

<sup>38</sup> Տե՛ս **Բարսեղյան Տ.Կ.**, Գոլյբային պատասխանատվության  
ինստիտուտի էվոլյուցիան և արդիական հիմնահարցերը, Եր.,  
Երևանի համալս. հրատ., 2006, էջեր՝ 223, 226-227:

<sup>39</sup> Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 27.11.2015թ. թիվ ԵԱԲԴ/0233/02/11, 13.03.2009թ.  
թիվ ԵԲԴ/0036/02/08, 13.02.2009թ. թիվ ՀԲԴ3/0016/02/08, 14.10.2011թ. թիվ  
ԵԱԲԴ/0610/02/10, 27.04.2012թ. թիվ ՍԴ3/0498/02/09, 23.03.2012թ. թիվ ԵԱՆԴ/1097/02/10,  
04.07.2013թ. թիվ ԱՎԴ/0306/02/11 քաղաքացիական գործերով  
արտահայտած դիրքորոշումը:

Արտապայմանագրային պատասխանատվության պայմաններին՝ վնաս պատճառողի գործողություններին հակաիրավականության մեղքի հետ կապված հարցերի մանրամասն ուսումնասիրությունը և վերլուծությունը կարևորվում են նաև Ապրանքների թերություններին հետևանքով պատճառված վնասի դեպքում՝ հաշվի առնելով մի կողմից օրենսդրական կողմից առանց մեղքի պատասխանատվություն նախատեսելու հանգամանքը, մյուս կողմից վնաս պատճառողի հակաիրավական վարքագծի դրսևորման առանձնահատկությունները: Այս հարցի քննարկումը կարևոր են առկա իրավաբան ճիշտ պրակտիկա ձևավորելու տեսանկյունից՝ հաշվի առնելով այն, որ դատական պրակտիկայում վնաս պատճառողի մեղավորության հարցին տրվել է սխալ մեկնաբանություն, իսկ վնաս պատճառողի հակաիրավական վարքագծի որակումը առաջացրել է որոշակի խնդիրներ իրավական որոշակիության տեսանկյունից:

Ինչպես վերը նշեցինք, վնասի հատուցման պարտադիր պայման է իրավունքը խախտած անձի հակաիրավական վարքագիծը:

Հակաիրավական է այն գործողությունը կամ անգործությունը, որը խախտում է իրավական ակտի նորմը, ինչպես նաև անձի սուբյեկտիվ իրավունքը: Գործողությունը անձի նպատակադրված, կամային ակտիվ արարքն է, որի հետևանքով կարող են խախտվել սեփականության, կյանքի կամ առողջության իրավունքները, իսկ անգործությունը հակաիրավական է այն դեպքում, երբ գործողություն կատարելը եղել է անձի պարտականությունը, սակայն անձը զանց է առել այն<sup>40</sup>:

<sup>40</sup> Տե՛ս **Բեքմեզյան Գ.Յ.**, Հակաիրավական արարքը որպես պարտավորություններին առաջացման

Ինչպես արձանագրել է ՀՀ վճռաբեկ դատարանը, հակահիրավական, ոչ օրինաչափ վարքագիծն այն գործողությունները կամ անգործողություններն է, որը խախտում է օրենքի, այլ հրավական ակտերի պահանջները, ինչպես նաև անձի սուբյեկտիվ հրավուները: Գործողություններն անձի նպատակաուղղված, կամային արարքն է, իսկ անգործողություններն՝ անհրաժեշտ և պարտադիր վարքագիծ դրսևորելու ցճեռնպահմանը<sup>41</sup>:

Հարկ է նշել, որ Քաղաքացիական օրենսգրքի 1088-րդ հոդվածի 1-ին մասով որպես հատուցման ենթակա վնաս է<sup>42</sup> դիտարկվում Ապրանքների կառուցվածքային, բաղադրամասային կամ այլ թերույությունների, ինչպես նաև դրանց մասին ոչ ճիշտ կամ ոչ բավականաչափ ճշգրիտ տեղեկատվություն տրամադրելու հետևանքով պատճառված վնասը:

Քաղաքացիական օրենսգրքի 1088-րդ հոդվածի 1-ին մասից բխում է, որ վնաս պատճառած անձի հակահիրավական վարքագիծը կարող է արտահայտվել հետևյալ գործողությունների (անգործության) դրսևորմամբ՝

- 1) Ապրանքների կառուցվածքային, բաղադրամասային կամ այլ թերույություններ թույլ տալով.

---

պայման, ՌԲ անբերերկանի Համալսարանի. Իրավագիտություն, Երևան, 2015, N3(18), էջեր՝ 60-61:

<sup>41</sup> Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 30.04.2015թ. թիվ ԵԿԴ/2128/02/13 քաղաքացիական գործով արտահայտած դիրքորոշումը:

<sup>42</sup> Ինչպես արձանագրվել է ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից վնասը պետք է հանդիսանա ոչ օրինաչափ վարքագծի ուղղակի, անմիջական հետևանք: Այն դեպքում, երբ վնասն անհրաժեշտաբար թելադրված է ոչ օրինաչափ գործողությամբ, կամ գործողության (անգործության) և վնասի միջև կապն անուղղակի է, վնասի հատուցման համար անհրաժեշտ պատճառահետևանքային կապի պայմանն առկա է: Այդ մասին առավել մանրամասն տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 27.11.2015թ. թիվ ԵԱԲԴ/0233/02/11 քաղաքացիական գործով արտահայտած դիրքորոշումը:

2) Ապրանքների մասին ոչ ճիշտ տեղեկատվություն տրամադրելով .

3) Ապրանքների մասին ոչ բավականաչափ ճշգրիտ տեղեկատվություն տրամադրելով :

Մենք այն կարծիքին ենք, որ օրենսդրի կողմից Քաղաքացիական օրենսգրքի 1088-րդ հոդվածի 1-ին մասում □ոչ ճիշտ□ կամ □ոչ բավականաչափ ճշգրիտ□ եզրույթների օգտագործումը կարող է առերևույթ առաջացնել շփոթ: Սա պայմանավորված է նրանով, որ □ճշգրիտ□ ածականը նշանակում է ստույգ, հավաստի, իրական, □ճիշտ□ ածականը՝ ճշմարիտ, ստույգ, հավաստի<sup>43</sup>: Այսինքն՝ Քաղաքացիական օրենսգրքի 1088-րդ հոդվածի 1-ին մասում օգտագործվող □ոչ ճիշտ□ կամ □ոչ բավականաչափ ճշգրիտ□ եզրույթները բովանդակային առումով ունեն համանման իմաստ:

Քաղաքացիական օրենսգրքի 1088-րդ հոդվածի 1-ին մասում □ճշգրիտ□ ածականից առաջ □ոչ բավականաչափ□ ածականի առկայությունն է միայն հնարավորություն տալիս □ոչ ճիշտ տեղեկատվության տրամադրում □-ը տարանջատել □ոչ բավականաչափ ճշգրիտ տեղեկատվության տրամադրում □-ից՝ հիմք ընդունելով այն, որ առաջին դեպքում վնաս պատճառողի հակաիրավական վարքագծը դրսևորվում է Ապրանքի մասին ամբողջական ծավալով ոչ հավաստի, իսկ մյուս դեպքում՝ մասնակի հավաստի տեղեկատվություն տրամադրելով: Վերը նշված խնդիրը իրավակիր ապրակտիկայում կարող է հանգեցնել վնաս պատճառածանձի կողմից դրսևորվող հակաիրավական վարքագծի՝ ճիշտ իրավաբանական որակման դժվարություն և դրսևորվող վարքագծի տեսակների հստակ տարանջատման անհնարինություն: Օրինակ՝

ԵԷ Դ/0655/02/11 քաղաքացիական գործով հայցվորը

<sup>43</sup> Տե՛ս **Աղայան Է.Բ.**, Արդի Յայերենի Բացատրական բառարան, Երևան, «Յայաստան» հրատ., 1976, էջեր՝ 942, 946:

ն երկայացրել է վնասի հատուցման պահանջ, քանի որ Յայաստանի առիթմով նոգիական սրտաբանական կենտրոնում վիրահատության արդյունքում իրեն պետք է տեղադրվեր երկու խոռոչանի սրտի խթանիչ, որը պետք է աշխատեր 10 տարի, սակայն տեղադրվել է PHILOS DR մոդելի երկխոռոչանի խթանիչ, որի գործարանային նախատեսված ծառայություն ժամկետը 5 տարի 5 ամիս է: Գործի քննության արդյունքում հայցապահանջը բավարարվել է մասնակի, որպես կիրառելի իրավանորմեր դիտարկվել են Քաղաքացիական օրենսգրքի 1088-1089-րդ հոդվածները, սակայն դատական ակտում հստակ անդրադարձ չի կատարվել այն հարցին, թե 1088-րդ հոդվածում ամրագրված հակաիրավական վարքագծի որտես սակն է թույլ տվել պատասխանողը, այլ միայն արձանագրվել է, որ վնասը պատճառվել է ծառայությունների ոչ պատշաճ մատուցման արդյունքում<sup>44</sup>:

Ուշադրության է արժանի այն, որ Քաղաքացիական օրենսգրքի 1089-րդ հոդվածը, կարգավորելով Ապրանքների թերութայնների հետևանքով պատճառված վնասի համար պատասխանատու անձանց շրջանակի հարցը, որպես վերջիններիս կողմից դրսևորվող հակաիրավական վարքագիծ առանձնացնում է՝

1. Ապրանքների թերութայնություններ թույլ տալը .
2. Ապրանքների մասին լիակատար կամ հավաստի տեղեկատվություն չտրամադրելը :

Վերը նշված նորմի և Քաղաքացիական օրենսգրքի 1088-րդ հոդվածի 1-ին մասի համադրված

<sup>44</sup> Այդ մասին առավել մանրամասն տե՛ս Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԵԵԴ/0655/02/11 քաղաքացիական գործով 04.11.2013թ. վճիռը: Մեր կարծիքով տվյալ գործով վնաս պատճառողի հակաիրավական վարքագիծը դրսևորվել է մատուցվող ծառայության վերաբերյալ ոչ հավաստի տեղեկություն տրամադրելով:

վերլուծությունից բխում է, որ օրենսդիրը վնաս պատճառած անձի կողմից դրսևորվող միևնույն հակաիրավական վարքագծի բնորոշման համար օգտագործում է երկու տարբեր եզրույթներ, որոնք, մեր կարծիքով, միմյանցից տարբերվում են բովանդակային առումով: Մասնավորապես, օրենսդիրի մոտեցման համաձայն Ապրանքների մասին ոչ ճիշտ տեղեկատվության տրամադրումը նույնանում է Ապրանքների մասին հավաստի տեղեկատվություն չտրամադրելու հետ, իսկ ոչ բավականաչափ ճշգրիտ տեղեկատվության տրամադրումը՝ լիակատար տեղեկատվություն չտրամադրելու հետ, մինչդեռ, մեր կարծիքով, դրանց միջև առկա են տարբերություններ:

Եթե բովանդակային առումով  հավաստի  ածականի օգտագործումը արտահայտում է տեղեկության՝  իրականությանը համապատասխանելու հանգամանքը, ապա  լիակատար տեղեկատվության տրամադրում -ը չի նույնանում  ոչ բավականաչափ ճշգրիտ տեղեկատվություն  տրամադրելու հետ, քանի որ  լիակատար <sup>45</sup> տեղեկատվության տրամադրում -ը վերաբերելի է տեղեկության՝  ամբողջական  ծավալով տրամադրմանը, այլ ոչ թե դրաստոլյգլիներելուն:

Յաշվի առնելով վերը նշվածը՝ գտնում ենք, որ վնաս պատճառած անձի հակաիրավական վարքագծի բնորոշման հարցում պետք է որդեգրվի միասնական, նույնաբնույթ մոտեցում, ինչը կապահովվի ՀՀ սահմանադրական դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի բազմաթիվ գործերով արձանագրված իրավական

<sup>45</sup>  լիակատար  բառը նշանակում է ոչ մասնակի, լրիվ, ամբողջական: Այդ մասին առավել մանրամասն տե՛ս **Աղայան Է.Բ.**, Արդի Հայերենի Բացատրական բառարան, Երևան, «Հայաստան» հրատ., 1976, էջ 528:

որոշակիություն սկզբունքի հետևողական  
կենսագործումը<sup>46</sup>:

Սա պայմանավորված է նաև նրանով, որ  
Քաղաքացիական օրենսգրքի վկայակոչված  
հոդվածներում օգտագործվող «նչ ճիշտ», «նչ  
բավականաչափ ճշգրիտ», «լիակատար»  
տեղեկատվություն է գրող թնտրել, լինելով  
գնահատողական բնույթի կատեգորիաներ,  
գործնականում կարող են հանգեցնել նույն  
իրավիճակում գտնվող սուբյեկտների կողմից  
դրսևորվող վարքագծի որակման դեպքում  
տարբերակվող վերաբերմունքի դրսևորման և  
կամայական մոտեցման վտանգի: Մենք այն համոզման  
ենք, որ օրենքի կանխատեսելիության,  
որոշակիության և հստակության սկզբունքի  
երաշխավորման նպատակով որպես վնաս պատճառած  
անձի հակիրճակ վարքագծի տեսական հրաժեշտ է  
առանձնացնել Ապրանքի վերաբերյալ ոչ հավաստի  
տեղեկություններ տրամադրելը և Ապրանքի  
վերաբերյալ ոչ ամբողջական տեղեկություններ  
տրամադրելը:

---

<sup>46</sup> Տե՛ս օրինակ ՀՀ սահմանադրական դատարանի 27.12.2016 թվականի ՍԴՈ-1334 որոշումը, որով արձանագրվել է, որ իրավական  
որոշակիության ապահովման տեսանկյունից օրենսդրության  
մեջ օգտագործվող հասկացությունները պետք է լինեն հստակ,  
որոշակի և չհանգեցնեն տարաբնույթ մեկնաբանությունների  
կամ շփոթության, օրենքում ամրագրված  
իրավակարգավորումները պետք է անձի համար կանխատեսելի  
դարձնեն իր իրավաչափ ակնկալիքները,  
իրավահարաբերություններին բոլոր սուբյեկտների  
գործողությունները պետք է լինեն կանխատեսելի ու  
իրավաչափ: 14.03.2017 թվականի ՍԴՈ-1357 որոշմամբ արձանագրվել է  
նաև, որ իրավական որոշակիության սկզբունքը իրավունքի  
գերակայության գլխավոր պահանջներից մեկն է, և դրա  
գործողությունը տարածվում է բոլոր օրենքների վրա՝ անկախ  
այն հանգամանքից, թե վերջիններս ունեն հիմնական  
իրավունք սահմանափակող, թե հիմնական իրավունքի իրացումը  
կարգավորող բնույթ: Իրավական որոշակիության սկզբունքի  
վերաբերյալ առավել մանրամասն տե՛ս ՀՀ սահմանադրական  
դատարանի 18.04.2006թ. ՍԴՈ-630, 29.01.2008թ. ՍԴՈ-731, 13.05.2008թ. ՍԴՈ-753, 15.07.2011թ.  
ՍԴՈ-984, 02.04.2014թ. ՍԴՈ-1142, 02.12.2014թ. ՍԴՈ-1176, 09.06.2015թ. ՍԴՈ-1213, 03.05.2016թ.  
ՍԴՈ-1270 որոշումները:



Ուստի, առաջարկում ենք Քաղաքացիական օրենսգրքի 1088-րդ հոդվածի 1-ին մասում «ոչ ճիշտ», «ոչ բավականաչափ ճշգրիտ» բառերը համապատասխանաբար փոխարինել «ոչ հավաստի», «ոչ ամբողջական» բառերով, իսկ 1089-րդ հոդվածի 3-րդ մասում «լիակատար» բառը փոխարինել «ամբողջական» բառով: Հակաիրավական վարքագծի այս տեսակների առանձնացումը կապահովվի անհրաժեշտ երաշխիքներ դրանց հստակ տարանջատման և դրսևորվող վարքագծի ճիշտ որակման համար:

Այժմ անդրադառնանք՝ Ապրանքների թերուժյուններ թույլ տալու՝ որպես հակաիրավական վարքագծի առանձին տեսակի: Հարկ է նկատել, որ մասնագիտական գրականության մեջ գլխավորապես առանձնացվում են Ապրանքների երեք խումբ՝ թերուժյուններ՝ արտադրական, կառուցվածքային և ոչ բավարար նախագրու շացման հետկապված<sup>47</sup>:

Ընդ որում, Ապրանքի թերուժյուն ունենալու հարցի որակումը տարբեր լուծումներ է ստացել ամերիկյան և եվրոպական իրավական համակարգերում: Մասնավորապես, ԵՄ իրավական համակարգում ապրանքը թերուժյուն ունեցող է, եթե այն չի կապահովում այն անվտանգությունը, որը անձն իրավունք ունեւր ակնկալել: Ապրանքը չի կարող համարվել թերուժյուն ունեցող միայն այն պատճառով, որ հետագայում շրջանառության մեջ է դրվել առավել որակյալ ապրանք<sup>48</sup>: Այսինքն՝ եվրոպական երկրներում չեն առանձնացվում ապրանքի թերուժյուններ թերուժյուններ, իսկ

<sup>47</sup> Տե՛ս **Reimann Mathias**, "Liability for defective products at the beginning of the twenty-first century: Emergence of a worldwide standard", *The American Journal of Comparative Law*, 2003, N 51, էջ 769:

<sup>48</sup> Տե՛ս **Council Directive** 85/374/EEC of 25 July 1985 on the approximation of the laws, regulations and administrative provisions of the Member States concerning liability for defective products, *Official Journal L* 210, 07/08/1985, P.0029-0033, հոդված 6:

ապրանքի թերույթյունն ունենալը կախվածություն մեջ է դրվում դրա անվտանգության ապահովման հատկությունից:

Օրինակ, Իսպանիայում ապրանքը թերույթյունն ունեցող է, եթե այն չի ապահովում այն անվտանգությունը, որն իրավաչափորեն կարող էր ենթադրվել, և թերույթյունն ունենալը պայմանավորված է ոչ թե ապրանքի որակի կամ ամբողջականության, այլ անվտանգության հետ<sup>49</sup>: Անգլիայում ապրանքը թերույթյունն ունեցող է, եթե շրջանառության մեջ դնելու ժամանակ այն այնքան անվտանգ չէ, որքան անձինք կարող էին ակնկալել, իսկ ապրանքի անվտանգությունը որոշելու համար հաշվի են առնվում մի շարք հանգամանքներ՝ այդ թվում նախագգուշացումները և հրահանգները, ապրանքի իրացման ձևը<sup>50</sup>: Իտալիայում ապրանքը դիտարկվում է որպես թերույթյունն ունեցող, եթե այն չի ապահովում այն անվտանգությունը, որը ողջամտորեն կարելի էր ակնկալել՝ հաշվի առնելով բոլոր հանգամանքները՝ այդ թվում՝ ապրանքի շրջանառության մեջ դնելու եղանակը, արտաքին տեսքը, բնութագիրը, ապրանքի վերաբերյալ նախագգուշացումները և հրահանգները, դրա ակնկալվող և կանխատեսելի օգտագործումը, ապրանքաշրջանառության մեջ դնելու ժամանակը<sup>51</sup>: Ճապոնիայի 1994 թվականի հունիսի 1-ի □Ապրանքների թերույթյունների համար պատասխանատվության մասին □ ակտով<sup>52</sup> ապրանքի թերույթյունն ունենալը որոշվում է՝ հաշվի առնելով դրա բնույթը,

<sup>49</sup> Տե՛ս **Sanchez Antonio J. Vela**, "Products Liability in Spain", *Tex. Tech L. Rev.*, 2000, N 32, էջեր՝ 1002-1003:

<sup>50</sup> Տե՛ս **Wilkinson D.**, "Mass Tort Treatment of Pharmaceutical Product Liability Cases in England", *Def. Counsel J.*, 2006, N 73, էջ 265:

<sup>51</sup> Տե՛ս **Dreyfuss Richard H.**, "The Italian Law on Strict Products Liability", *NYL Sch. J. Int'l & Comp. L.*, 1997, N 17, էջ 56:

<sup>52</sup> Մինչ նշված օրենքի ընդունումը Ճապոնիայում ամկաչի եղել ապրանքների թերույթյունների համար պատասխանատվության հարցերը կարգավորող որևէ հատուկ իրավական ակտ: Այդ մասին ամավել մանրամասն տե՛ս **Kobayashi Hideyuki and Yoshimasa Furuta**, "Products Liability Act and Transnational Litigation in Japan", 1999, *Tex. Int'l LJ*, N 34, էջեր՝ 94-95:

ակնկալվող օգտագործումը, ապրանքի առաքման ժամանակ թերու թյան առկայությունը<sup>53</sup>:

Ի տարբերություն եվրոպական իրավական համակարգի՝ ամերիկյան իրավական համակարգում առանձնացվում են ապրանքների երեք խումբ թերու թյուններ: Մասնավորապես, ապրանքը թերու թյուն ունեցող է, եթե վաճառքի կամ բաշխման ժամանակ այն ունի արտադրական, կառուցվածքային թերու թյուն կամ հանդիսանում է թերու թյուն ունեցող՝ ոչ բավարար ցուցումների կամ նախագգու շացման պատճառով: Մասնավորապես, ապրանքը արտադրական թերու թյուն ունեցող է, եթե այն չի համապատասխանում նախատեսված կառուցվածքին՝ չնայած դրա պատրաստման և իրացման ընթացքում ձեռնարկվել են բոլոր հնարավոր նախագգու շական միջոցները: Ապրանքը կառուցվածքային թերու թյուն ունեցող է, եթե ապրանքի հետկապված վնասի կանխատեսելի ռիսկերը կարող էին նվազեցվել կամ վերացվել (ապրանք վաճառողի կամ առևտրի շղթայում այն բաշխող այլ սուբյեկտի կողմից)՝ ապրանքի ողջամիտ այլ ընտրանքային կառուցվածք նախատեսելու արդյունքում, և որի չնախատեսումը հանգեցրել է ապրանքի ոչ բավարար անվտանգությանը: Ապրանքը թերու թյուն ունեցող է ոչ բավարար ցուցումների կամ նախագգու շացման պատճառով այն դեպքում, երբ ապրանքի հետկապված վնասի կանխատեսելի ռիսկերը կարող էին նվազեցվել կամ վերացվել ապրանքի վերաբերյալ բավարար ցուցումներ և նախագգու շացումներ ապահովելու միջոցով, և որի չնախատեսումը հանգեցրել է ապրանքի ոչ բավարար անվտանգությանը<sup>54</sup>:

<sup>53</sup> Տե՛ս Kobayashi Hideyuki and Yoshimasa Furuta, նշված աշխատ., էջ 98:

<sup>54</sup> Տե՛ս Restatement of the Law, Third: Torts: Products Liability, American Law Institute, 1998, հասանելի է՝ [https://ius.unibas.ch/fileadmin/user\\_upload/fe/file/Vorlesung\\_vom\\_13.1.\\_Restatement\\_of\\_the\\_law\\_thirds\\_tords\\_Product\\_Liability.pdf](https://ius.unibas.ch/fileadmin/user_upload/fe/file/Vorlesung_vom_13.1._Restatement_of_the_law_thirds_tords_Product_Liability.pdf) հղումով՝ 23.03.2017 թվականի դրությամբ:

Վերլուծելով տարբեր երկրների օրենսդրական կարգավորման առանձնահատկությունները՝ կարող ենք եզրահանգել, որ եվրոպական երկրներում ապրանքի թերույթյունը և նենալը անմիջականորեն առնչվում է դրա անվտանգության հետ, և օրենսդրորեն չեն առանձնացվում ապրանքների թերույթյունների առանձին տեսակներ, մինչդեռ ամերիկյան իրավական համակարգում հստակ տարանջատում է դրվում ապրանքների թերույթյունների միջև:

Քաղաքացիական օրենսգրքի վերլուծությունը վկայում է, որ օրենսդրորեն սպառիչ չեն սահմանվում Ապրանքների թերույթյունների առանձին տեսակները: Քաղաքացիական օրենսգրքի 1088-րդ հոդվածի 1-ին մասում որպես Ապրանքի թերույթյունների տեսակներ ուղղակիորեն առանձնացվում են կառուցվածքային, բաղադրամասային թերույթյունները՝ միաժամանակ չբացառելով թերույթյունների այլ տեսակների առկայությունը: Քաղաքացիական օրենսգրքի 1088-րդ հոդվածի 1-ին մասում օգտագործվող «այլ թերույթյուններ» եզրույթի ներքո կարող են ներառվել Ապրանքի արտադրական թերույթյունները, և բոլոր այն թերույթյունները, որոնք ունեն անձի կյանքին, առողջությանը կամ գույքին վնաս պատճառելու հատկություն:

Այս առումով ուշադրության է արժանի այն, որ Քաղաքացիական օրենսգրքով Ապրանքների մասին ոչ հավաստի կամ ոչ ամբողջական տեղեկություններ տրամադրելը դիտարկվում է որպես վնաս պատճառած անձի կողմից դրսևորվող հակաիրավական վարքագծի առանձին տեսակ, և չի նույնանում Ապրանքի թերույթյունները լի տալու հետ<sup>55</sup>: Մենք կարծում ենք,

<sup>55</sup> Չնայած նրան, որ Քաղաքացիական օրենսգրքի 1089-1091-րդ հոդվածներում որպես միասնական եզր օգտագործվում է

որ նման տարբերակման անհրաժեշտությունը բացակայում է, քանի որ Ապրանքի վերաբերյալ ոչ հավաստի կամ ոչ ամբողջական տեղեկությունների տրամադրումը արդեն իսկ համաձայն Օրենքի ենթադրում է, որ տվյալ Ապրանքը թերություն ունեցող է: Վերը նշվածը հիմնավորվում է Օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի իրավակարգավորման լույսի ներքո, որի համաձայն Ապրանքի թերությունը դրա անհամապատասխանությունն է նորմատիվ փաստաթղթերին, պայմանագրի պայմաններին կամ Ապրանքի որակին սովորաբար ներկայացվող պահանջներին: Նույն հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով որպես նորմատիվ փաստաթղթեր առանձնացվում են Ապրանքների վերաբերյալ պարտադիր պահանջներ սահմանող օրենքները, օրենքով նախատեսված այլ իրավական ակտերը (տեխնիկական կանոնակարգեր): Միաժամանակ, Օրենքի 9-րդ հոդվածի և 11-րդ հոդվածի 1-ին մասերով ամրագրվում է արտադրողի (վաճառողի, կատարողի)՝ Ապրանքների վերաբերյալ անհրաժեշտ և ստույգ տեղեկատվություն տրամադրելու պարտականությունը:

Վերը նշված իրավանորմերի համադրված վերլուծությունից կարող ենք եզրահանգել, որ Ապրանքի վերաբերյալ անհրաժեշտ և ստույգ տեղեկություններ տրամադրելու պահանջը նորմատիվ փաստաթղթով ներկայացվող պահանջ է, իսկ այդ պահանջին անհամապատասխանությունը՝ Ապրանքի թերություն: Մեր կարծիքով, Ապրանքների թերությունների նշված տեսակները միմյանցից տարբերվում են միայն նրանով, որ Ապրանքի

---

□Ապրանքի թերություններ □տերմինը, սակայն թաղաքացիական օրենսգրքի 1088-րդ հոդվածի 1-ին մասը որպես հակաիրավական վարքագծի առանձին տեսակ է առանձնացնում Ապրանքների մասին ոչ ճիշտ կամ ոչ բավականաչափ ճշգրիտ տեղեկատվություն տրամադրելը:

կառուցվածքային, արտադրական (և այլ) թերույթյունները անմիջականորեն կապված են Ապրանքի ֆիզիկական օգտագործման հատկությունների հետ, քանի որ անձի կյանքին, առողջությանը կամ գույքին վնաս է պատճառվում Ապրանքի ոչ բավարար ֆիզիկական հատկությունների արդյունքում, մինչդեռ ոչ հավաստի կամ ոչ ամբողջական տեղեկություններ տրամադրելու հետևանքով պատճառված վնասը պայմանավորված է Ապրանքի ոչ բավարար ֆիզիկական հատկություններով: Յաշվի առնելով վերը նշվածը՝ գտնում ենք, որ Քաղաքացիական օրենսգրքի 1088-րդ հոդվածի 1-ին մասում և 1089-րդ հոդվածի 3-րդ մասում Ապրանքների վերաբերյալ ոչ հավաստի կամ ոչ ամբողջական տեղեկությունների տրամադրումը պետք է դիտարկվի որպես Ապրանքի թերույթյան մեկ այլ, առանձին տեսակ:

Վերլուծելով վնաս պատճառողի գործողությունների հակաիրավականության դրսևորման առանձնահատկությունները, անդրադառնալով նաև մեղքի՝ որպես պատասխանատվության առանձին պայմանի քննարկմանը: Մեղքի հետ կապված հարցերի պարզաբանումը կարևոր է նախևառաջ այն պատճառով, որ, որպես կանոն, մեղքի առկայությունը արտապայմանազրային պատասխանատվության պարտադիր պայման է, մինչդեռ Ապրանքների թերույթյունների հետևանքով պատճառված վնասի համար պատասխանատվությունը վրա է հասնում առանց մեղքի:

Քաղաքացիաիրավական մեղքն իր ստանձնած (կամ իր վրա դրված) պարտականությունների կատարման նկատմամբ հոգատարություն և շրջահայացություն ցուցաբերելու անպատասխանատվությունը կամ

անկարողությունն է<sup>56</sup>: Մեղքը անձի հոգեբանական վերաբերմունքն է իր կողմից կատարվող գործողության կամ անգործության և դրանից բխող հետևանքներին կատմամբ<sup>57</sup>: Ինչպես արձանագրել է ՀՀ վճռաբեկ դատարանը վնաս պատճառող անձի մեղքը նրա սուբյեկտիվ վերաբերմունքն է իր ոչ օրինաչափ գործողության (անգործության) և առաջացած հետևանքի՝ վնասի նկատմամբ, ինչը կարող է դրսևորվել թե՛ դիտավորության, և թե՛ անզգուշության ձևով: Ընդ որում, վնասի հատուցման հարաբերություններում գործում է վնաս պատճառած անձի մեղավորության կանխավարկածը, քանի դեռ վերջինս չի ապացուցել վնաս պատճառելու հարցում իր մեղքի բացակայությունը<sup>58</sup>:

Քաղաքացիական օրենսգրքի 1058-րդ հոդվածի 2-րդ մասը, կարգավորելով արտապայմանագրային պատասխանատվության պայմանների հարցը, սահմանում է, որ օրենքով կարող է նախատեսվել վնասի հատուցում՝ վնաս պատճառողի մեղքի բացակայությամբ, իսկ Քաղաքացիական օրենսգրքի 1088-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է ապրանք վաճառողի կամ արտադրողի, աշխատանք կատարողի կամ ծառայություններ մատուցողի՝ անկախ մեղքից պատասխանատվություն: Վերը նշված նորմերի համադրված վերլուծությանից բխում է, որ Քաղաքացիական օրենսգրքի 1088-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքը օրենքով նախատեսված այն բացառիկ դեպքերից է, երբ պատճառված վնասի

<sup>56</sup> Տե՛ս **Բարսեղյան Տ.Կ.**, Գույքային պատասխանատվության ինստիտուտի էվոլյուցիան և արդիական հիմնահարցերը, Երևան, Երևանի համալս. հրատ., 2006, էջ 266:

<sup>57</sup> Տե՛ս **Բեքմեզյան Գ.Յ.**, Տուժողի մեղքը որպես վնասի հատուցման ծավալների նվազեցման պայման, ՌԲ անբերերևանի Համալսարանի .Իրավագիտություն և Երևան, 2011, N 135.3, էջ 42:

<sup>58</sup> Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 30.04.2015թ. թիվ ԵԿԴ/2128/02/13, 04.10.2013թ. թիվ ԵԿԴ/2600/02/10 քաղաքացիական գործերով արտահայտած դիրքորոշումը:

համար պատասխանատվությունը վրա է հասնում վնաս պատճառողի մեղքի բացակայություն պարագայում:

Մինչդեռ, հարկ է նշել, որ իրավակիրառ պրակտիկայում որոշ դատական գործերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ քաղաքացիական օրենսգրքի 1088-րդ հոդվածի 1-ին մասին տրվել է սխալ մեկնաբանություն, և Ապրանքների թերությունների հետևանքով պատճառված վնասի դեպքում մեղքի բացակայությունը դատարանի կողմից առանձնացվել է որպես ապացուցման անարկայի մեջ մտնող փաստական հանգամանք կամ վնասի հատուցման անհրաժեշտ պայման <sup>59</sup>:

Այս առումով, գրականության մեջ հաճախ քննարկվում է Ապրանքների թերությունների հետևանքով վնաս պատճառելու դեպքում առանց մեղքի պատասխանատվության նախատեսման նպատակահարմարություն և հիմնավորվածության հարցը: Որոշ հեղինակներ կողմ են առանց մեղքի պատասխանատվության նախատեսմանը, որոշ հեղինակներ՝ ոչ: Օրինակ՝ Դ.Օուլենը նշում է, որ Ապրանքների թերությունների հետևանքով պատճառված վնասի համար վաճառողի՝ առանց մեղքի պատասխանատվության սկզբունքը արմատավորված է եղել դեռևս հռոմեական իրավունքում, երբ ապրանք վաճառողներին առաջադրվել է որակի երաշխիք ապահովելու պահանջ <sup>60</sup>: Մոնտգոմերը, Դ.Օուլենը, Չեկոլը Ապրանքների թերությունների հետևանքով

<sup>59</sup> Տե՛ս օրինակ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի ԵԿԴ/0465/02/09 քաղաքացիական գործով 25.09.2012թ. վճիռը, Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի ԳԴ4/0006/02/16 քաղաքացիական գործով 28.09.2016թ. վճիռը, Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 02.02.2015թ. ԱՐԱԴ/0430/02/13 քաղաքացիական գործով վճիռը, ՀՀ քաղաքացիական վերաքննիչ դատարանի՝ 15.04.2010թ վականի 08.02.2010թ. թիվ ԵԿԴ/0465/02/09 քաղաքացիական գործով վճռի դեմ ներկայացված բողոքի քննման արդյունքում կայացրած որոշումը:

<sup>60</sup> Տե՛ս **Owen D.G.**, "The Evolution of Products Liability Law", *The Review of Litigation*, 2007, N 26.4, էջ 956:



պատճառված վնասի համար առանց մեղքի պատասխանատվության նախատեսումը պայմանավորում են հետևյալ հանգամանքներով՝

1. սպառողներն ի վիճակի չեն ինքնուրույն և համարժեքորեն իրենց պաշտպանել թերույուններ ունեցող Ապրանքներից՝ հաշվի առնելով դրանց լայնածավալ քանակը, բազմազանությունը.

2. վաճառողները սպառողների համեմատ ունեն Ապրանքների հնարավոր ռիսկերը բացահայտելու, ռիսկերի հետ կապված ընդունելի սահմանները որոշելու և այդ սահմաններում ռիսկերը սահմանափակելու առավել լայն հնարավորություններ.

3. ըստ մեղքի պատասխանատվությունը կարող է հանգեցնել շուկա վտանգավոր Ապրանքներ ներմուծելուն, մինչդեռ առանց մեղքի պատասխանատվության նախատեսումը արտադրողների կողմից Ապրանքների անվտանգության ապահովմանյուրահատուկ խթան է.

4. Ապրանքների թերույունների հետևանքով պատճառված վնասի պարագայում վնաս պատճառողի մեղքի առկայության պարզաբանումը և ապացուցումը սովորաբար պրակտիկորեն անհնար է<sup>61</sup>:

Վազները առանց մեղքի պատասխանատվության նախատեսումը պայմանավորում է արտադրողների և սպառողների միջև տեղեկատվության տիրապետման անհամասնությունամբ, ինչն իր հերթին պայմանավորված է հետևյալով՝

1. արտադրողը ձեռք է բերում Ապրանքի բնույթի վերաբերյալ կարևոր տեղեկություններ դրանախագծման և արտադրության ընթացքում.

2. արտադրողն ունի Ապրանքի մասին փրացուցիչ տեղեկատվություն ձեռք բերելու առավել մեծ

<sup>61</sup> Տե՛ս նշված հեղինակների կարծիքը **Castillo J. González**, "Products Liability in Europe and The United States", *Revista Chilena de Derecho*, 2012, Vol.39 N2, էջեր՝ 289-291:

շահագրգռվածություն, քանի որ վերջինս է դրահետկապված հնարավոր ծախս կրողը .

3. սպառողները օժտված չեն Ապրանքի վերաբերյալ տեղեկատվություն պահանջելու արդյունավետ հնարավորություններ, և տիրապետում են սահմանափակ տեղեկատվության<sup>62</sup>:

Յեղիսակներին մեկ այլ խումբ դեմ է վնաս պատճառած անձի առանց մեղքի պատասխանատվությանը՝ պատճառաբանելով, որ այն կարող է հանգեցնել սպառողներին կողմից Ապրանքների ոչ ճիշտ օգտագործմանը, արտադրողներին կողմից ոչ բավարար քանակությունների արտադրելուն, ինչպես նաև արտադրական ծախսերի ավելացմանը<sup>63</sup>:

Ուշադրության է արժանի նաև այն, որ ամերիկյան և եվրոպական իրավական համակարգերում ըստ մեղքի կամ առանց մեղքի պատասխանատվության նախատեսման հարցը և ստացել է տարբերվումներ:

Առանց մեղքի պատասխանատվության ինստիտուտը, բացառությամբ օրենսդրությամբ նախատեսված առանձին դեպքերի, անհայտ է եղել ԵՄ անդամ պետություններին<sup>64</sup>: Միայն Միություն 1985 թվականի 85/374 Դիրեկտիվի ընդունումով որպես միասնական մոտեցում որդեգրվել է առանց մեղքի պատասխանատվության նախատեսումը<sup>65</sup>: Միություն

<sup>62</sup> Տե՛ս նշված հեղինակի կարծիքը, **Castillo J. González**, նշված աշխատ., էջ 290:

<sup>63</sup> Տե՛ս **Castillo J. González**, նշված աշխատ., էջ 291:

<sup>64</sup> Տե՛ս **De Lousanoff Oleg, and Klaus P. Moessle**, "German Products Liability Law and the Impact of the EC Council Directive", *The International Lawyer*, 1988, N22, էջեր՝ 669-670:

<sup>65</sup> Առանց մեղքի պատասխանատվություն նախատեսելու եզրահանգումը բխում է Դիրեկտիվի նախաբանի և 4-րդ հոդվածի վերլուծությունից: Դիրեկտիվի նախաբանում ուղղակիորեն նշվում է, որ արտադրողի՝ առանց մեղքի պատասխանատվությունը միակ համարժեք միջոցն է լուծելու այն պիսի կարևորագույն խնդիր՝ ինչպիսին է սպառողներին պատճառված վնասի դեպքում իրավունքների պաշտպանության միևնույն աստիճան ապահովելը, մրցակցությունը և միասնական շուկայում ապրանքների ազատ տեղաշարժը խթանելը: Ի տարբերություն Դիրեկտիվի նախաբանի՝ դրա 4-րդ

անդամ երկրները, հիմք ընդունելով Դիրեկտիվի պահանջները, իրենց ազգային օրենսդրության մեջ նախատեսել են առանց մեղքի պատասխանատվություն <sup>66</sup>:

Ի տարբերություն եվրոպական երկրների, ամերիկյան իրավական համակարգում որդեգրվել է այլ մոտեցում: Մասնավորապես, առանց մեղքի պատասխանատվությունը կիրառվում է այն պարագայում, երբ առկա են ապրանքի արտադրական թերություններ, իսկ ապրանքի կառուցվածքային կամ ոչ հավաստի տեղեկություններ տրամադրելու հետ կապված թերությունների դեպքում վնասի հատուցումը իրականացվում է միայն վնաս պատճառողի մեղքի առկայության պարագայում <sup>67</sup>:

Ինչպես նշում է Ռ.Ռեբեկան ամերիկյան իրավական համակարգում վտանգավոր ապրանքների առկայությունը դեռևս չի նշանակում, որ դրանք թերություն ունեցող են: Սպառողը կրում է ապրանքի թերությունների հետ կապված հնարավոր վնասից պաշտպանվելու պարտականություն, իսկ արտադրողները պատասխանատվություն են կրում միայն ապրանքի ողջամտորեն կանխատեսելի ռիսկերի համար <sup>68</sup>:

Իրականացված վերլուծությունը ցույց է տալիս, որ ամերիկյան իրավական համակարգում ապրանքների թերությունների հետևանքով պատճառված վնասի դեպքում գործողի նստիտուտը իր

---

հոդվածում առանց մեղքի պատասխանատվության հարցին անդրադարձ է կատարվում անուղղակիորեն, որտեղ որպես ապացուցման ենթակա հանգամանքներ առանձնացվում են վնասի, ապրանքի թերության, պատճառված վնասի և ապրանքի թերության միջև պատճառահետևանքային կապի առկայությունը:

<sup>66</sup> Դիրեկտիվի 19-րդ հոդվածով անդամ պետություններին առաջադրվում է իրենց օրենսդրության մեջ համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելու պահանջ՝ Դիրեկտիվի պահանջների կատարումն ապահովելու նպատակով:

<sup>67</sup> Տե՛ս **Castillo J.González**, նշված աշխատ., էջ 278:

<sup>68</sup> Տե՛ս **Rollo Rebekah**, "Products Liability: Why The European Union Doesn't Need the Restatement", *Brooklyn Law Review*, 2004, N 69 (3), էջեր՝ 1098-1101:

բնույթով օխառն է՝ ապրանքի արտադրական թերույթյունների համար նախատեսվում է առանց մեղքի պատասխանատվություն, իսկ կառուցվածքային կամ ոչ հավաստի տեղեկություններ տրամադրելու հետ կապված թերույթյունների դեպքում՝ ըստ մեղքի պատասխանատվություն:

Իրականացված վերլուծությունից կարող ենք արձանագրել, որ ՀՀ օրենսդրի մոտեցումը մոտ է եվրոպական երկրների մոտեցմանը, քանի որ ՀՀ-ում ևս Ապրանքների թերույթյունների հետևանքով պատճառված վնասի համար նախատեսվում է առանց մեղքի պատասխանատվություն: Մենք գտնում ենք, Ապրանքների թերույթյունների հետևանքով պատճառված վնասի դեպքում առանց մեղքի պատասխանատվության նախատեսումը առավել նպատակահարմար և հիմնավոր է՝ հաշվի առնելով այն, որ սպառողները գործնականում ապահովված չեն Ապրանքների վերաբերյալ հավաստի և ամբողջական տեղեկատվություն ձեռք բերելու, դրանց անվտանգության ապահովման արդյունավետ միջոցներ ձեռնարկելու, Ապրանքների հետ կապված հնարավոր ռիսկերից իրենց ապահովագրելու և անհրաժեշտ գործիքակազմով, իսկ արտադրողները և վաճառողները՝ ի տարբերություն սպառողների, օժտված են Ապրանքների անվտանգությունն ապահովելու, դրանց ռիսկերը նվազեցնելու գործնական հնարավորություններով թե՛ ապրանքի արտադրության, և թե՛ իրացման ընթացքում:

Ընդ որում, առանց մեղքի պատասխանատվության նախատեսումը համահունչ է նաև Քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 3-րդ մասի իրավակարգավորման ընդհանուր տրամաբանությունը՝ հաշվի առնելով այն, որ մեղքը չի դիտարկվում որպես ձեռնարկատիրական

գործունեությունն իրականացնող սուբյեկտների պատասխանատվության պայման: Այլ կերպասած՝ այս պարագայում պատասխանատվությունը վրա է հասնում անկախ նրանից, թե ձեռնարկատիրական գործունեություն իրականացնողը մեղավոր է, թե ոչ հակաիրավական վարքագիծ դրսևորելու համար, քանի որ ի սկզբանե մեղքի առկայության կամ բացակայության հարցը ապացուցողական որևէ նշանակություն չունի, իսկ պատասխանատվությունից ազատվելու միակ հիմքը այս պարագայում անհաղթահարելի ուժի առկայությունն է:

**§ 1.3. Ապրանք, աշխատանք և ծառայությունն հասկացությունների իրավական բնորոշման հիմնահարցը**

Ապրանքների թերությունների հետևանքով պատճառված վնասի հատուցման ինստիտուտի բնույթի և էության պարզաբանման համար կարևոր նշանակություն ունի Ապրանք, աշխատանք և ծառայություն հասկացությունների իրավական բնորոշման հարցի պարզաբանումը: Նախ և առաջ անդրադառնանք Ապրանք հասկացության բնորոշման խնդրին:

Ապրանք հասկացության բնորոշման խնդիրը բարդ է, և դրա բացակայությունը շատ հաճախ հանգեցնում է այս հասկացության սահմանափակ մեկնաբանմանը<sup>69</sup>: ԶՅ օրենսդրության վերլուծությունը վկայում է, որ Ապրանքների թերությունների հետևանքով պատճառված վնասի հատուցման ինստիտուտում առկա է Ապրանք հասկացության բնորոշումը նախատեսող իրավական

<sup>69</sup> Տե՛ս **Parent Jason**, "Every Dog can have its Day: Extending Liability beyond the Seller by Defining Pets as "Products" under Products Liability Theory", *Animal Law*, 2005, N 12, էջ 246:

ակտ:

Մինչդեռ, անհրաժեշտ է ինկատի ունենալ, որ ապրանք  հասկացողության բնորոշման կամ Ապրանքների թերուղթյուղների հետևանքով պատճառված վնասի հատուցման հարաբերությունների շրջանակում ապրանքին բնութագրական հիմնական հատկանիշների չբացահայտումը կարող է հանգեցնել իրավակիրառ պրակտիկայում տարբեր իրերի՝ «ապրանք  հասկացողության մեջ ընդգրկելու հարցի տարածական մեկնաբանման:

Այսպես, եվրասիական տնտեսական միությունում մաքսային օրենսգրքի մասին  պայմանագրի<sup>70</sup> հավելված 1-ի 2-րդ հոդվածի 1-ին մասի 45-րդ կետով ապրանք է դիտարկվում ցանկացած շարժական գույք, այդ թվում՝ անդամ պետությունների արժույթը, արժեթղթերը և (կամ) արժույթային արժեքները, ճանապարհային չեկերը, էլեկտրական էներգիան, ինչպես նաև անշարժ գույքին հավասարեցված այլ տեղափոխվող իրերը, սակայն պետք է նշել, որ այս բնորոշումը կիրառելի է մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների նկատմամբ, և կիրառելի չէ քաղաքացիաիրավական հարաբերությունների նկատմամբ:

Օրենքը ևս, կարգավորելով սպառողների իրավունքների պաշտպանության ոլորտի հիմնական հարաբերությունները, չի տալիս ապրանք  հասկացողության բնորոշումը: Ուշադրության է արժանի այն, որ Օրենքի 1-ին հոդվածը ապրանք  հասկացողությունը օգտագործում է ծառայություն  և աշխատանք  հասկացողությունների հետ համատեղ՝ որպես մեկ ամբողջություն, իսկ Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ

<sup>70</sup> Ընդունվել է 11.04.2017թ.: Ուժի մեջ է մտել 01.01.2018թ.: ՅՅՊՏ 2018.03.12/17(1375).1:

մասով ոչ սպառիչ թվարկվում են միայն այն Ապրանքները, որոնց համար արտադրողը պարտավոր է սահմանել պիտանիության ժամկետ՝ որպես այդպիսին առանձնացնելով սննդամթերքը, օժանելի քակոսմետիկական ապրանքները, դեղորայքը, դեղամիջոցները, դեղանյութերը, կենցաղային քիմիայի ապրանքները:

Յարկ է նշել, մեր կողմից ուղարկված հարցմանն ի պատասխան, թե Օրենքի իմաստով ինչն է համարվում ապրանք, և որ իրերը չեն դասվում ապրանքներին շարքին, ՀՀ Տնտեսական գարգացման և ներդրումների նախարարության 14.11.2016 թվականի 06/14.1/9497-16 պատասխանի համաձայն սպառողների իրավունքների պաշտպանության բնագավառում ապրանքը քաղաքացիական իրավունքի օբյեկտ է, այդ թվում՝ գույք, աշխատանք, ծառայություն (և երառյալ՝ ֆինանսական), որը նախատեսված է բացառապես անձնական, ընտանեկան, տնային կամ այլ օգտագործման համար<sup>71</sup>:

Մինչդեռ, անհրաժեշտ է ինկատի ունենալ, որ Ապրանքների թերությունների հետևանքով պատճառված վնասի դեպքում որոշակի հատկանիշների բացակայության դեպքում գույքի ոչ բոլոր տեսակները կարող են դիտարկվել որպես ապրանք:

Այսպես, Քաղաքացիական օրենսգրքի 132-րդ հոդվածում, ի թիվս քաղաքացիական իրավունքի այլ օբյեկտների, առանձնացվում է գույքը: Իր հերթին, Քաղաքացիական օրենսգրքի 355-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ պարտավորության կատարման վայրը որոշված չլինելու դեպքում այն պետք է կատարվի ապրանք կամ այլ գույք հանձնելու պարտավորությամբ: Նույն օրենսգրքի 471-րդ

<sup>71</sup> Տե՛ս ՀՀ Տնտեսական գարգացման և ներդրումների նախարարի տեղակալի 14.11.2016 թվականի 06/14.1/9497-16 գրությունը:

հոդվածով սահմանվում է, որ առուվաճառքի պայմանագրով ապրանք կարող է լինել օրենսգրքի 133-րդ հոդվածով նախատեսված կանոններին համապատասխանող ցանկացած գույք:

Վերը նշված հոդվածների համադրված վերլուծությամբ ընդհանուր առմամբ է, որ ապրանք հասկացությունը դասվում է գույք հասկացության շարքին, սակայն հարկ է նշել, որ ապրանք հասկացությունը գույք հասկացության համատեքստում առավել ներդրում է՝ հաշվի առնելով այն, որ գույք հասկացության մեջ ներառվում են նաև դրամական միջոցները, արժեթղթերը, գույքային իրավունքները, իսկ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և ՀՀ վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների համատեքստում անգամ պահանջի իրավունքն է ստանում «սեփականություն» որակում այն պահից, երբ անձն ունենում է «օրինական սպասելիք» իր իրավունքներն իրականացնելու համար<sup>72</sup>:

Կարծում ենք, որ արտապայմանագրային պատասխանատվության համատեքստում տարբեր իրերի՝ ապրանք հասկացության մեջ ընդգրկելու հարցի քննարկման և լուծման տեսանկյունից անհրաժեշտ է առանձնացնել ապրանքներին բնորոշ հիմնական հատկանիշները՝ անդրադառնալով նաև մասնագիտական գրականության մեջ առկա տեսակետների և միջազգային փորձի վերլուծությանը:

Այսպես, գրականության մեջ ապրանք հասկացության բնորոշման հարցի կապակցությամբ արտահայտվել են տարբեր տեսակետներ: Հռոմեական

<sup>72</sup> Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 13.02.2009թ. թիվ Գ 7/0171/02/08, 29.07.2011թ. թիվ Գ 7/0145/02/10, 19.10.2012թ. թիվ Ե Ծ 7/0177/02/11 քաղաքացիական գործերով արտահայտած դիրքորոշումը, **Pressos Compania Naviera S.A. and others v. Belgium** Գանգատ N 17849/91, 20 նոյեմբեր 1995 թվականի ՄԻԵԴ վճիռը:



իրավունքում ապրանք է դիտարկվել առուվաճառքի  
առարկա հանդիսացող գույքը՝ նյութական և ոչ  
նյութական: Պրոֆեսոր Ուդենկոյի կարծիքով ապրանք  
են միայն շարժական իրերը: Ն.Օ. Ներսեսյանը գտնում  
է, որ ապրանք է ցանկացած շարժական գույք, որը  
հանդես է գալիս որպես գործարքի առարկա: Դ.Կ.  
Լավրենտևի կարծիքով «ապրանք» տերմինը ունի  
երկակի նշանակություն՝ նեղ և լայն: Նեղ իմաստով  
ապրանք են նյութական աշխարհի այն օբյեկտները,  
որոնք հանդես են գալիս ապրանքաշրջանառության  
մեջ՝ չմշակված, մասնակի մշակված կամ մշակված  
տեսքով, լայն իմաստով՝ շարժական գույքի բոլոր  
տեսակները (նյութական և ոչ նյութական), որոնք  
կարող են հանդես գալ որպես առևտրային  
գործունեության առարկա «այդ թվում՝  
ծառայությունները, աշխատանքները, արժեթղթերը և  
այլն»: Ծերշենևիչի կարծիքով ևս «ապրանք»  
հասկացության մեջ մի կողմից ներառվում է այն  
ամենը, ինչը կարող է հանդիսանալ գործարքի  
առարկա «իրեր, դրամական միջոցներ և այլն», մյուս  
կողմից ապրանք են միայն գործարքի առարկա  
հանդիսացող նյութական օբյեկտները: Ա.Ի.  
Կամիսկան ապրանք է դիտարկում միայն շարժական  
գույքը<sup>73</sup>:

Ժամանակակից իրավաբանական գրականության  
մեջ ևս առկա չէ միատեսակ մոտեցում «ապրանք»  
հասկացության բնորոշման վերաբերյալ:  
Մասնավորապես՝ Ն.Ի. Կլեյնի կարծիքով ապրանք են  
բոլոր իրերը՝ այդ թվում անշարժ գույքը,  
արժեթղթերը, գույքային իրավունքները: Վ.Ա.  
Բելովի և Ի.Վ. Ելիսևի կարծիքով ապրանք է  
քաղաքացիական շրջանառությունից չհանված  
ցանկացած գույք, իսկ դրամական միջոցները չեն

<sup>73</sup> Տե՛ս նշված հեղինակների կարծիքը **Руденко А.В.**, "Юридическое содержание понятия "товар" ", Вестник ОГУ, Оренбург, 2005, N 4 (42), էջեր՝ 72-75:

կարող հանդես գալ որպես ապրանք<sup>74</sup>:

Ապրանքներին բնորոշ հիմնական հատկանիշներին բացահայտման համար անդրադառնանք նաև միջազգային փորձի ուսումնասիրությանը: Այսպես, եվրոպական երկրներում ապրանք հասկացություններն առկա են իրավական բնորոշման ուղենիշ է հանդիսանում ԵՄ 1985թվականի 85/374 Դիրեկտիվը: Մասնավորապես, Դիրեկտիվի նախաբանում նշվում է, որ այն կիրառվում է միայն արդյունաբերորեն արտադրված շարժական ապրանքներին նկատմամբ և կիրառելի չէ գյուղատնտեսական ապրանքներին և կենդանիների (որսի) նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք անցել են արդյունաբերական մշակման փուլը: Դիրեկտիվը տարածվում է նաև այն շարժական ապրանքներին նկատմամբ, որոնք օգտագործվում են ոչ շարժական ապրանքներին կառուցման համար կամ ներառվում են ոչ շարժական գույքի մեջ:

Վերը նշվածից կարող ենք եզրահանգել, որ եվրոպական երկրներում ապրանքներին բնորոշ են երկու կարևորագույն հատկանիշ՝

1. շարժունակությունը, անգամ այն դեպքում, երբ դրանք ներառված են անշարժ գույքի կազմում կամ օգտագործվում են դրա կառուցման համար.
2. արդյունաբերորեն արտադրված կամ արդյունաբերական մշակման փուլն անցած լինելը:

Ապրանք հասկացությունն հստակ բնորոշումը տրվում է Դիրեկտիվի 2-րդ հոդվածում, որը սահմանում է, որ այն ընդգրկում է շարժական բոլոր ապրանքները (նաև էլեկտրաէներգիան), բացառությամբ առաջնային գյուղատնտեսական

<sup>74</sup>Տե՛ս նույն տեղը, էջ 75:

ապրանքներին և կենդանիներին (որսի), նույնիսկ այն դեպքում, երբ դրանք ներառված են այլ շարժական կամ անշարժ ապրանքներին մեջ: Առաջնային գյուղատնտեսական ապրանքներին շարքին են դասվում հողագործության, ձկնաբուծության, կենդանաբուծության արդյունքում ստացված ապրանքները, բացառությամբ սկզբնական մշակման փուլն անցած ապրանքների:

Գրականության մեջ արտահայտված տեսակետի համաձայն համանման կարգավորումը պայմանավորված է բնական ծագում ունեցող իրերը ապրանքներին շարքից բացառելու անհրաժեշտությամբ՝ այսինքն այն ապրանքներին, որոնք ստացվել են հողից, կենդանիներից կամ որսորդության արդյունքում, և որոնք, առանց որևէ ձևափոխման, նախատեսված են սպառողական նպատակներով: Նման բացառության նախատեսումը արժանացել է քննադատության՝ հաշվի առնելով այն, որ այդ ապրանքները ևս կարող են վտանգավոր լինել մարդու առողջության համար և բնական վիճակում, որպես ավարտուն սպառողական ապրանքներ, վաճառվել շուկայում՝ առանց որևէ ձևափոխման<sup>75</sup>: Ուշադրության է արժանի նաև այն, որ 1976 թվականի Դիրեկտիվի սկզբնական նախագծում գյուղատնտեսական ապրանքները ներառված են եղել □ապրանք □հասկացության մեջ<sup>76</sup>:

Բացի այդ, Դիրեկտիվի 15-րդ հոդվածի 1-ին մասով պետություններն իրավասու են վերապահում կատարելու եղանակով իրենց ներպետական օրենսդրությամբ գյուղատնտեսական ապրանքները և կենդանիները ևս դասել ապրանքներին շարքը:

<sup>75</sup> Տե՛ս **Sanchez Antonio J. Vela**, "Products Liability in Spain", *Texas Tech Law Review*, 2000, N 32, էջ 1000:  
<sup>76</sup> Տե՛ս **Pasa Barbara, Gian Antonio Benacchio and Lesley Orme**, "The Harmonization of Civil and Commercial Law in Europe", Budapest, Central European University Press, 2005, էջ 113:

Ներկայումս այդ հրավական հնարավորությունը օրինակ հրացվում է Յունաստանի, Ֆիլիպինյանի, Ծվեդիայի, Լյուքսեմբուրգի կողմից<sup>77</sup>: Սա նշանակում է, որ վերը նշված երկրներում գյուղատնտեսական ապրանքները և կենդանիները ևս դասվում են ապրանքների շարքը:

Անդրադառնալով նաև առանձին երկրների օրենսդրություններին (Անգլիա, Իսպանիա, Կանադա, ՌԴ և այլն)՝ ապրանքահասկացություններն ունենում են:

Այսպես, Անգլիայի 1987 թվականի Սպառողների պաշտպանության մասին օրենքով ապրանք է դիտարկվում բնական կամ արհեստական նյութ պարունակող ցանկացած ապրանք<sup>78</sup>: Իսպանիայի 1994 թվականի հունիսի 6-ի Ապրանքների թերություններին համար քաղաքացիաիրավական պատասխանատվության մասին» օրենքի 2-րդ հոդվածով ապրանքների շարքին են դասվում շարժական գույքի բոլոր տեսակները (ավարտված ապրանքներ, ինտեգրված մասնիկներ, բաղադրիչներ կամ հումք): Ապրանքների շարքին չեն դասվում գյուղատնտեսական, ձկնաբուծական, կենդանաբուծական ապրանքները, կենդանիները: Էլեկտրատեխնիկական և գազը ևս դասվում են ապրանքների շարքը<sup>79</sup>:

Ինչպես տեսնում ենք և՛ Անգլիայում, և՛ Իսպանիայում որպես ապրանքների բնորոշ հատկանիշ առանձնացվում է դրանց շարժունակությունը: Վերը նշված երկրների

<sup>77</sup> Տե՛ս նույն տեղը:  
<sup>78</sup> Տե՛ս **Wilkinson D.**, "Mass Tort Treatment of Pharmaceutical Product Liability Cases in England", *Defense Counsel Journal*, 2006, N 73, էջ 265:  
<sup>79</sup> Տե՛ս **Sanchez Antonio J. Vela**, նշված աշխատ., էջեր՝ 982-984, 986-1001: Պետք է ի նկատի ունենալ, որ գիտություն և տեխնիկայի ներկայիս արագընթաց զարգացման շրջանում չի բացառվում նաև ոչ նյութական ապրանքների առկայությունը: Թերևս այս պատճառաբանությամբ է պայմանավորված եվրոպական երկրների օրենսդրություններին և գազի՝ որպես ապրանքների առանձին տեսակների առանձնացումը:

օրենսդրությունը ամբողջապես քննարկելու և փոփոխելու համար հատկապես հարկադրող և արտադրողներին հարկադրող օրենսդրության մեջ դրանք նախատեսվում են՝ Դիրեկտիվի ուժով արդեն իսկ այդ հատկապես արտադրողներին տեղադրվում է:

Կանադայի Սպառողական արտադրողների և վաճառականների մասին օրենքի 2-րդ հոդվածը սահմանում է, որ Սպառողական արտադրողների և վաճառականների մեջ են մտնում այն արտադրողները (այդ թվում՝ դրանց բաղադրամասերը, մասերը), որոնք ողջամտորեն են տեղադրվում՝ ձեռք բերվում անձի կողմից ոչ ձեռնարկատիրական գործունեության մեջ օգտագործման նպատակով՝ այդ թվում ընտանեկան, առողջարարական և սպորտային նպատակով<sup>80</sup>:

ՌԴ 1992 թվականի փետրվարի 7-ի Սպառողների իրավունքների պաշտպանության մասին օրենքում բացակայում է արտադրողների և վաճառականների քննարկումը: Վերը նշված օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ մասով որպես արտադրող անձին տեսակներ նշվում են միայն սննդամթերքը, օժանելի քանոսմետիկական արտադրողները, դեղերը, կենցաղային քիմիայի արտադրողները<sup>81</sup>: Չափի առնելով այս հանգամանքը, ՌԴ Գերագույն դատարանի պլենումի 2012 թվականի հունիսի 28-ի N 17 որոշման 3-րդ կետով սահմանվեց, որ Սպառողների իրավունքների պաշտպանության մասին օրենքի համատեքստում որպես արտադրող են դիտարկվել այն իրերը, որոնք որոշակիացվում են ընդհանուր (քանակ, քաշ, չափ) կամ անհատական հատկանիշներով, և

<sup>80</sup> Տե՛ս The Act of Canada on Consumer Product Safety, (2010), հասանելի է՝ <https://laws-lois.justice.gc.ca/eng/acts/C-1.68/FullText.html> հղումով՝ 23.03.2017 թվականի դրությամբ:

<sup>81</sup> Տե՛ս Закон РФ N 2300-1 "О защите прав потребителей", (07.02.1992), հասանելի է՝ [http://www.consultant.ru/document/cons\\_doc\\_LAW\\_305/](http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_305/) հղումով՝ 23.03.2017 թվականի դրությամբ:

որոնք նախատեսված են վաճառքի կամ քաղաքացիական շրջանառության նկատմամբ ներմուծման համար<sup>82</sup>:

Ամերիկայի Միացյալ Նահանգներում Սպառողական ապրանքների անվտանգության մասին օրենքի 3-րդ բաժնով սպառողական ապրանք է դիտարկվում ցանկացած ապրանք կամ դրա քաղադրամաս, որն արտադրվում կամ իրացվում է սպառողի օգտագործման նպատակով, իսկ օրենքի գործողությանը չի տարածվում թունաքիմիկատների, ինքնաթիռների, դրանց շարժիչների, դեղերի, օժանելի քակոսմետիկական և այլ ապրանքների վրա<sup>83</sup>: Միաժամանակ, Ամերիկյան Իրավունքի ինստիտուտի՝ Ապրանքների թերությունների հետևանքով պատճառված վնասի հատուցման իրավական հարցերի հատուկ 3-րդ ժողովածուում տրված բնորոշմամբ ապրանք է նյութական անձնական գույքը, որը բաշխվում է առևտրային նպատակով՝ նախատեսված լինելով օգտագործման և սպառման համար: Ապրանքների շարքին չեն դասվում մարդկային հյուսվածքները և արյունը՝ նույնիսկ այն դեպքում, երբ դրանք օգտագործվում են առևտրային նպատակներով<sup>84</sup>:

Ուշադրություն է արժանի նաև այն, որ Ամերիկայի Միացյալ Նահանգների տարբեր նահանգների ստատուտներով նախատեսված են ապրանք հասկացության տարբեր բնորոշումներ: Մասնավորապես՝ Արկանզաս և Թեննեսի նահանգներում որպես ապրանք են դիտարկվում նյութական առարկաները և արտադրված մթերքները,

<sup>82</sup> Տե՛ս Ստանովление Пленума Верховного Суда РФ от 28.06.2012 N 17 "О рассмотрении судами гражданских дел по спорам о защите прав потребителей", հասանելի է՝ [http://www.consultant.ru/document/cons\\_doc\\_LAW\\_131885/](http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_131885/) հղումով՝ 23.03.2017 թվականի դրությամբ:

<sup>83</sup> Տե՛ս The U.S. Act on Consumer Product Safety, (P.L.92-573;86, Stat. 1207, codified at 15 U.S.C. §§ 2051–2089), (27.10.1972), հասանելի է՝ <https://www.cpsc.gov/Regulations-Laws--Standards/Statutes/Summary-List/Consumer-Product-Safet-Act> հղումով՝ 23.03.2017 թվականի դրությամբ:

<sup>84</sup> Տե՛ս Restatement of the Law, Third: Torts: Products Liability, American Law Institute, 1998, հասանելի է՝ [https://ius.unibas.ch/fileadmin/user\\_upload/fe/file/Vorlesung\\_vom\\_13.1.\\_Restatement\\_of\\_the\\_law\\_thirds\\_tords\\_Product\\_Liability.pdf](https://ius.unibas.ch/fileadmin/user_upload/fe/file/Vorlesung_vom_13.1._Restatement_of_the_law_thirds_tords_Product_Liability.pdf) հղումով՝ 23.03.2017 թվականի դրությամբ:

Լ ու ի գ ի ա ն ա ն ա հ ա ն գ ու մ ՝ ն յ ու թ ա կ ա ն շ ա ր ժ ա կ ա ն ա պ ր ա ն ք ն ե ր ը : Գ ր ա կ ա ն ու թ յ ա ն մ ե ջ ա յ ս կ ա պ ա կ ց ու թ յ ա մ ք ն շ վ ու մ է , ո ր ա յ ն ն ա հ ա ն գ ն ե ր ը , ո ր ո ն ց օ ր ե ն ս դ ր ու թ յ ա մ ք տ ր վ ա ծ է □ ա պ ր ա ն ք □ հ ա ս կ ա ց ու թ յ ա ն ք ն ո ր ո շ ու մ ը ս ա կ ա վ ա թ ի վ է ն , և ա յ ս խ ն դ ի ր ը թ ո ղ ն վ ու մ է դ ա տ ա ր ա ն ն ե ր ի լ ու ծ մ ա ն ը <sup>85</sup> : Զ ա ճ ա խ □ ա պ ր ա ն ք □ հ ա ս կ ա ց ու թ յ ա ն ք ն ո ր ո շ մ ա ն հ ա մ ար վ ե ճ ի ա ռ ա ր կ ա է հ ա ն դ ի ս ա ն ու մ ա յ ն , թ ե ա ր դ յ ո ք կ ե ն դ ա ն ի ն ե ր ը պ ե տ ք է դ ի տ ա ր կ վ ե ն ո ր պ ե ս ա պ ր ա ն ք , թ ե ո չ :

Օ ր ի ն ա կ ՝ Ա մ ե ր ի կ ա յ ի Մ ի ա ց յ ա լ ն ա հ ա ն գ ն ե ր ի Ի լ ի ն ո յ ի ս , Կ ո լ ո ր ա դ ո , Մ ի ս ս ու ր ի , Օ հ ա յ ո , Զ ա ր ա վ ա յ ի ն Դ ա կ ո տ ա ն ա հ ա ն գ ն ե ր ու մ դ ա տ ա կ ա ն պ ր ա կ տ ի կ ա յ ի կ ո ղ մ ի ց ո ր դ ե գ ր վ ե լ է ա յ ն մ ո տ ե ց ու մ ը , ո ր կ ե ն դ ա ն ի ն ե ր ը ա պ ր ա ն ք չ է ն : Մ ա ս ն ա վ ո ր ա պ ե ս ՝ Ու ի թ մ ե ր ը ը ն դ դ ե մ Շ ն ե ք լ ի □ *Whitmer v. Schneble* □ գ ո ր ծ ո վ <sup>86</sup> Ի լ ի ն ո յ ի ս ի դ ա տ ա ր ա ն ը ե կ ե լ է ա յ ն ե գ ր ա հ ա ն գ մ ա ն , ո ր կ ե ն դ ա ն ի ն ե ր ի ն ա պ ր ա ն ք ն ե ր ի շ ա ր ք ը դ ա ս ե լ ու հ ա մ ար ա ն հ ր ա ժ ե շ տ է հ ա շ վ ի ա ռ ն ե լ ա յ ն , ո ր ա պ ր ա ն ք ի ք ն ու յ թ ը պ ե տ ք է լ ի ն ի կ ա յ ու ն , ե ր ք ա յ ն դ ու ր ս է գ ա լ ի ս ար տ ա դ ր ո ղ ի կ ա մ վ ա ճ ա ռ ո ղ ի հ ս կ ո ղ ու թ յ ու ն ի ց , և ա պ ր ա ն ք ը ս պ ա ռ ո ղ ի ն պ ե տ ք է հ ա ս ն ի ա ռ ա ն ց է ա կ ա ն փ ո փ ո խ ու թ յ ա ն : Ա պ ր ա ն ք ն ե ր ի թ ե ր ու թ յ ու ն ն ե ր ի հ ե տ ն ա ն ք ո վ պ ա տ ճ ա ռ վ ա ծ վ ն ա ս ի հ ա տ ու ց մ ա ն կ ա ն ո ն ն ե ր ը չ է ն կ ար ո ղ կ ի ր ա ռ վ ե լ ա յ ն դ ե պ ք ու մ , ե ր ք ա պ ր ա ն ք ի ք ն ու յ թ ը ա ռ ա վ ե լ ա պ ե ս կ ա ն խ ո ր ո շ վ ու մ է ո չ թ ե վ ա ճ ա ռ ո ղ ի , ա յ լ գ ն ո ր դ ի կ ո ղ մ ի ց : Զ ա շ վ ի ա ռ ն ե լ ո վ ա յ ն , ո ր շ ա ն ք ն ա վ ո ր ու թ յ ու ն ը ա ռ ա վ ե լ ա պ ե ս ձ ն ա վ ո ր վ ու մ է դ ր ա ս ե փ ա կ ա ն ա տ ի ր ո ջ կ ո ղ մ ի ց , դ ա տ ա ր ա ն ը հ ա ն գ ե լ է ա յ ն ե գ ր ա հ ա ն գ մ ա ն , ո ր ա յ ն

<sup>85</sup> Տ ե ՛ ս **Parent Jason**, "Every Dog can have its Day: Extending Liability beyond the Seller by Defining Pets as "Products" under Products Liability Theory", *Animal Law*, 2005, N 12, է ջ 249:

<sup>86</sup> Ա յ դ մ ա ս ի ն ա ռ ա վ ե լ մ ա ն ր ա մ ա ս ն տ ե ՛ ս **Whitmer v. Schneble**, 331 N.E.2d 115, 29 Ill. App. 3d 659, 26 հ ու ն ի ս 1975 թ վ ա կ ա ն ի Ի լ ի ն ո յ ի ս ի վ ե ր ա ք ն ն ի չ դ ա տ ա ր ա ն ի ո ր ո շ ու մ :

ապրանք չէ <sup>87</sup>: Ամերիկայի Միացյալ Նահանգներում ձևավորված դատական պրակտիկայի վերլուծությունից կարող ենք առանձնացնել ապրանքի այնպիսի հատկանիշ՝ ինչպիսին դրա բնույթի կայունությունն է՝ արտադրողի կամ վաճառողի հսկողությունից դուրս գալու պահից:

Այսպիսով, վերլուծելով նաև գրականության մեջ առկա տեսակետները և այլ երկրների փորձը, որպես ապրանքին բնութագրական հիմնական հատկանիշներ կարող ենք առանձնացնել ստորև թվարկվածները՝

1. ապրանքի՝ անձիկյանքին, առողջությանը կամ գույքին վնաս պատճառելու հատկությունը (կարողությունը).
2. ապրանքի՝ սպառողական նպատակով արտադրված կամ իրացված լինելը.
3. արտադրված, արդյունաբերական մշակման փուլն անցած լինելը կամ ընդհանուր առմամբ ապրանքի մշակված, վերամշակված լինելու հանգամանքը.
4. ապրանքի կայուն, չփոփոխվող բնույթը, երբ այն դուրս է գալիս վաճառողի կամ արտադրողի հսկողությունից.
5. շարժունակությունը.

Ընդ որում, գտնում ենք, որ ապրանքներին բնորոշ վերը թվարկված հատկանիշները կարելի է դասակարգել երկու հիմնական խմբի՝

1. պարտադիր հատկանիշներ.
2. լրացուցիչ կամ \$ակուլտատիվ (ոչ պարտադիր) հատկանիշներ:

Պարտադիր հատկանիշների շարքում առաջարկում ենք առանձնացնել այն հատկանիշները, որոնք պետք է բնութագրական լինեն բոլոր ապրանքներին՝ ապրանքի թերություն հետևանքով

<sup>87</sup> Տե՛ս **Parent Jason**, նշված աշխատ., էջեր՝ 250-251:



պատճառված վնասի հատուցման պահանջ ներկայացնելու դեպքում: Որպես այդպիսին անհրաժեշտ է առանձնացնել ապրանքի՝ սպառողական նպատակով արտադրված կամ իրացված լինելը, անձի կյանքին, առողջությանը կամ գույքին վնաս պատճառելու հատկությունը (կարողությունը):

Ապրանքի լրացուցիչ հատկանիշների շարքին կարող են դասվել ապրանքի՝ արտադրված, արդյունաբերական մշակման փուլն անցած լինելը կամ ընդհանուր առմամբ մշակված, վերամշակված լինելը, կայուն բնույթ ունենալը՝ վաճառողի կամ արտադրողի հսկողությունից դուրս գալուց հետո, շարժունակությունը:

Ինչ վերաբերում է սպառողական ապրանքների շարքից սովորաբար բացառվող ապրանքներին, ապա միջազգային փորձի ուսումնասիրությունից բխում է, որ որպես այդպիսին են հիմնականում դիտարկվում գյուղատնտեսական ապրանքները, կենդանիները՝ հաշվի առնելով դրանց բնական ծագում ունենալու հանգամանքը<sup>88</sup>:

Գտնում ենք, որ ՀՀ օրենսդրությամբ չի բացառվում գյուղատնտեսական ապրանքների՝ որպես սննդային արտադրանքի  սննդամթերքի ՝ ապրանքների շարքին դասումը: Վերը նշված եզրահանգումը բխում է  Սննդամթերքի անվտանգության մասին  ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի վերլուծությունից, որտեղ որպես սննդային արտադրանք է դիտարկվում կենդանական, բուսական, մանրէաբանական, հանքային, արհեստական կամ կենսատեխնոլոգիական ծագման մթերքը՝ բնական, մշակված կամ վերամշակված տեսքով՝ նախատեսված մարդու կողմից սննդի մեջ

<sup>88</sup> Եզրահանգումը վերաբերում է եվրոպական երկրներին, և բխում է Դիրեկտիվի 2-րդ հոդվածից:

օգտագործման համար, ինչպես նաև պարենային (սննդային) հոլմքը:

Ինչ վերաբերում է կենդանիների հետևանքով պատճառված վնասի հատուցումը Ապրանքների թերույունների հետևանքով պատճառված վնասի հատուցման կանոններով իրականացնելուն՝ ապագտնում ենք, որ այն չի կարող իրականացվել Քաղաքացիական օրենսգրքի 60-րդ գլխի 3-րդ պարագրաֆով նախատեսված դրույթներով, քանի որ Քաղաքացիական օրենսգրքի 1071<sup>2</sup> հոդվածով նախատեսված է առանձին իրավական կարգավորում՝ կենդանու պատճառած վնաս հատուցելու սեփականատիրոջ պարտականության վերաբերյալ:

Այսպիսով, մեր կարծիքով, օրենսդրության մեջ հնարավոր չէ տալ ապրանքների ցանկի սպառիչ դասակարգում՝ հաշվի առնելով գիտության և տեխնիկայի ներկայիս արագընթաց զարգացումը և ապրանքների շարունակական ընդլայնվող շրջանակը: Այնուամենայնիվ, Ապրանքների թերույունների հետևանքով պատճառված վնասի հատուցման հարաբերության ներքին շրջանակում մեր կողմից առանձնացված վերը նշված հատկանիշները կարող են որպես ուղենիշ ծառայել այս կամ այն իրի՝ □ապրանք□ հասկացության մեջ ներառելու հարցի քննարկման և վնասի հատուցման խնդրի լուծման համար:

Անդրադառնալով □սպառողական<sup>89</sup> ապրանք□ հասկացությանը՝ հարկ ենք համարում անդրադառնալ նաև իրավաբանական անձի կողմից Քաղաքացիական օրենսգրքի 1088-րդ հոդվածի 2-րդ մասի իրավակարգավորման լույսի ներքո Ապրանքներ

<sup>89</sup> □Սպառելի□ բառը բխում է լատիներեն "consumere" տերմինից, որը նշանակում է օգտագործել, ուտել, վատնել: Առավել մանրամասն տե՛ս **Schoenmakers W.**, The Notion "Consumer" in European Private Law. Diss. Master Thesis, Gent, 2014, էջ 3, հասանելի է՝ [http://lib.ugent.be/fulltxt/RUG01/002/163/256/RUG01-002163256\\_2014\\_0001\\_AC.pdf](http://lib.ugent.be/fulltxt/RUG01/002/163/256/RUG01-002163256_2014_0001_AC.pdf) հղումով՝ 22.07.2013 թվականի դրությամբ:

ձեռք բերելու և դրանց թերու թյան հետևանքով գույքին վնաս պատճառելու դեպքում վնասի հատուցումը ֆիզիկական անձի հետ<sup>90</sup> համահունչ նույն կանոններով պահանջելու իրավական հնարավորություն և ախատեսելու հիմնավորվածություն հարցին:

Այսպես, Քաղաքացիական օրենսգրքի 1088-րդ հոդվածի 1-ին մասով որպես հատուցման ենթակա վնաս է առանձնացվում Ապրանքների թերու թյունների հետևանքով իրավաբանական անձի գույքին պատճառված վնասը, իսկ նույն հոդվածի 2-րդ մասով սահմանվում է, որ վնասի հատուցման կանոնները կիրառվում են միայն սպառողական նպատակով ապրանքներ ձեռք բերելու (աշխատանքներ կատարելու, ծառայություններ մատուցելու) դեպքում<sup>91</sup>: Այսինքն՝ սպառողական նպատակով

<sup>90</sup> Հարկ է նշել, որ «Սպառողների իրավունքների պաշտպանություն մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածով սպառող է դիտարկվում ձեռնարկատիրական գործունեության հետ չկապված, ապրանքների պատվիրման կամ ձեռքբերման մտադրություն ունեցող քաղաքացին:

<sup>91</sup> Ուշադրություն է արժանի այն, որ որոշ դատական գործերի ուսումնասիրությունն ցույց է տալիս, որ իրավակիրառ պրակտիկայում սխալ է մեկնաբանվել և կիրառվել Քաղաքացիական օրենսգրքի 1088-րդ հոդվածի 2-րդ մասով ամրագրված դրույթը: Մասնավորապես, 28.09.2016թ. ՊԴ 4/0006/02/16 քաղաքացիական գործով դատարանը բավարարել է ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի պետական կառավարչական հիմնարկի՝ ՀՀ Իլաֆայլ ՍՊԸ-ի դեմ ներկայացված հայցը այն պատճառաբանությամբ, որ կողմերի միջև կնքված՝ ՀՀ Տավուշի մարզի կարիքների համար կապալային աշխատանքների կատարման գնման պայմանագրով և պետական գնման պայմանագրով պատասխանողը ամբողջությամբ չի կատարել շինարարական աշխատանքները: Դատարանը որպես կիրառելի իրավանորմ դիտարկել է Քաղաքացիական օրենսգրքի 1088-1089-րդ հոդվածները, մինչդեռ նույն գործով դրանք կիրառելի չէին, քանի որ գնման պայմանագրերը կնքվել են պետական կարիքների և ոչ թե սպառողական նպատակով օգտագործելու համար: Բացի այդ, Քաղաքացիական օրենսգրքի 1088-րդ հոդվածի իրավակարգավորման համատեքստում ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի պետական կառավարչական հիմնարկը չէր կարող դիտարկվել որպես տուժող: Մեկ այլ՝ թիվ ԱՐԱԴ/0430/02/13 քաղաքացիական գործով, ՀՀ քաղաքացիական վերաքննիչ դատարանը, քննելով ԱՐԱԴ/0430/02/13 գործով 02.02.2015թ. վճռի դեմ ներկայացված բողոքը, գտել է, որ Քաղաքացիական օրենսգրքի 1088-րդ հոդվածը կիրառելի չէ, քանի որ այդ կանոնը կիրառվում է միայն սպառողական նպատակով ապրանք ձեռք բերելու դեպքերում: Ընդ որում, գործի նախապատվությունից

Ապրանք ձեռք բերելու դեպքում իրավաբանական անձանց ֆիզիկական անձանց հետ համահունչ ևս ընձեռվում է Քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով գույքին պատճառված վնասի հատուցումը պահանջելու իրավական հնարավորությունը:

Այս համատեքստում պետք է քննարկել այն հարցը, թե արդյոք հիմնավոր է Ապրանքների թերույթյունների հետևանքով վնաս պատճառելու դեպքում իրավաբանական անձանց ֆիզիկական անձանց վերապահված իրավական պաշտպանության համարժեք միջոցներ ընձեռելը կամ այլ կերպասած նույն կանոններով վնասի հատուցումը պահանջելու հնարավորություն տալը: Այս հարցի պարզաբանումը կարևոր է այն տեսանկյունից, որ Քաղաքացիական օրենսգրքի 60-րդ գլխի 3-րդ պարագրաֆի իրավակարգավորման լույսի ներքո իրավաբանական անձի գույքին վնաս պատճառելու դեպքում վնաս պատճառած անձը կրում է առանց մեղքի պատասխանատվություն և, բացի այդ, պատճառված վնասը ենթակա է հատուցման անկախտուժողի և վնաս պատճառողի պայմանագրային հարաբերությունների մեջ գտնվելու հանգամանքից, ինչը հանդիսանում է լրացուցիչ երաշխիք վնասի ամբողջական ծավալով հատուցումն ապահովելու տեսանկյունից: Վերը նշված հարցի քննարկումը կարևոր է նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից Ապրանքների ձեռք բերելու պարագայում դրանց օգտագործման

---

բխում է, որ հայցվորների բնակելի տանը վնաս է պատճառվել շինարարական աշխատանքների կատարման արդյունքում: Այսինքն՝ տվյալ դեպքում այդ աշխատանքները կատարվել են սպառողական նպատակով, այլ հարց է, թե արդյոք անկատար էր վնասի հատուցման բոլոր պայմանները: Այս մասին առավել մանրամասն տե՛ս Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի ԳԴ4/0006/02/16 քաղաքացիական գործով 28.09.2016թ. վճիռը և ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի ԱՐԱԴ/0430/02/13 քաղաքացիական գործով 29.10.2015թ. որոշումը:

առանձնահատկություններին  
տեսանկյունից:

բացահայտման

Հարկ է նշել, որ բարձրացված հարցադրումը քննարկման առարկա է դարձել նաև մասնագիտական գրականության մեջ: Այս կապակցությամբ գրականության մեջ նշվում է, որ իրավաբանական անձանց չպետք է ընձեռվի ֆիզիկական անձանց համար նախատեսված նույն պաշտպանությունը, քանի դեռ իրավաբանական անձինք չեն ապացուցում, որ չունեն կամ չեն կարող ունենալ Ապրանքների ձեռքբերման կամ օգտագործման մասնագիտական հմտություններ<sup>92</sup>:

Ուշադրության է արժանի նաև այն, որ եվրոպական երկրների իրավական համակարգերում նշված հարցի կապակցությամբ առկա են տարբեր մոտեցումներ: Այսպես, Միություն 2011 թվականի հոկտեմբերի 25-ի Սպառողների իրավունքների մասին  2011/83 դիրեկտիվով, որպես ընդհանուր կանոնից<sup>93</sup> բացառություն, հնարավորություն է ընձեռում պետություններին ցանկության դեպքում ընդլայնել սպառողների շրջանակը՝ ներառելով վերջիններիս շարքում բացառապես փոքր և միջին ձեռնարկություններին և այն կազմակերպություններին, որոնցում պետությունը չունի մասնակցություն<sup>94</sup>: Մեր կարծիքով, նման իրավակարգավորման հիմքում ընկած է այն գաղափարը, որ, որպես ընդհանուր կանոնից բացառություն, միայն առանձին իրավաբանական անձանց է հիմնավոր ֆիզիկական անձանց ընձեռված պաշտպանության նույն

<sup>92</sup> Տե՛ս **Hondius Ewoud**, "The Notion of Consumer: European Union versus Member States", *Syd L Rev*, 2006, N 28, էջ 94:

<sup>93</sup> Սպառողների իրավունքների մասին  2011/83 դիրեկտիվի 2-րդ հոդվածով սպառող է դիտարկվում միայն ֆիզիկական անձը:

<sup>94</sup> Տե՛ս **Directive 2011/83/EU** of the European parliament and of the Council of 25 October 2011 on consumer rights, amending Council Directive 93/13/EEC and Directive 1999/44/EC of the European Parliament and of the Council and repealing Council Directive 85/577/EEC and Directive 97/7/EC of the European Parliament and of the Council", *Official Journal L 304*, 22/11/2011, P.64-88, նախաբանի 13-րդ կետ:

միջոցներ տրամադրելը՝ ապրանքային շուկայում մասնակցության փոքր ծավալի, վերջիններիս պաշտպանության առավել թույլ երաշխիքների պատճառով՝ հաշվի առնելով նաև այն, որ տվյալ ապրանքային շուկայում գործող այլ սուբյեկտները վերջիններիս համեմատ կարող են լինել առավել պաշտպանված:

Այնուամենայնիվ, պետք է արձանագրել, որ Ապրանքների թերույունների հետևանքով պատճառված վնասի հատուցման բնագավառում եվրոպական երկրների քաղաքականությամբ, որպես ընդհանուր կանոն, հակված է միայն ֆիզիկական անձանց պաշտպանության առավել լայն և արդյունավետ երաշխիքներով ընձեռելուն: Եվրոպական երկրների մեծ մասում իրավաբանական անձանց չի ընձեռվում ֆիզիկական անձանց վերապահված նույն պաշտպանությամբ անգամ այն պարագայում, երբ վերջիններս, իրականացնելով ոչ առևտրային բնույթի գործունեություն, սպառողական նպատակով ձեռք են բերում ապրանքներ: Սակավաթիվ երկրներում են նախատեսվում բացառություններ իրավաբանական անձանց համար, երբ վերջիններս ձեռք են բերում ապրանքներ կամ ծառայություններ մասնավոր օգտագործման նպատակով  Ավստրիա,  Զեխիա,  Յունաստան,  Իսպանիա <sup>95</sup>:

ԵՄ բազմաթիվ դիրեկտիվներով և սպառողներին տրվող պաշտպանությունը տարածվում է բացառապես այն ֆիզիկական անձանց վրա, որոնք գործում են ձեռնարկատիրական կամ իրենց կողմից իրականացվող մասնագիտական գործունեության շրջանակից դուրս, իսկ իրավաբանական անձինք՝

<sup>95</sup> Տե՛ս **Manko Rafal**, "The Notion of Consumer in EU Law", Library of the European Parliament Briefing 130477REV1, 2013, Էջեր՝ 1-2, հասանելի է՝ [http://www.europarl.europa.eu/RegData/bibliotheque/briefing/2013/130477/LDM\\_BRI\(2013\)130477\\_REV1\\_EN.pdf](http://www.europarl.europa.eu/RegData/bibliotheque/briefing/2013/130477/LDM_BRI(2013)130477_REV1_EN.pdf) հղումով՝ 22.03.2017 թվականի դրությամբ:

այդ թվում նաև առևտրային բնույթի, չեն օգտվում նման հնարավորությունից <sup>96</sup>:

Այս առումով ուշադրություն է արժանի նաև եվրոպական Միություն արդարադատության դատարանի մոտեցումը իրավաբանական անձանց ֆիզիկական անձանց հետ համահունչ պաշտպանություն նույն երաշխիքներ տրամադրելու նպատակահարմարություն հարցի վերաբերյալ: Մասնավորապես՝ *Cape Snc v Idealservice Srl* և *Idealservice MN RE Sas v OMAI Srl* գործով դատարանը, քննելով իրավաբանական անձանց սպառողների շրջանակի մեջ ներառելու հարցը, արտահայտել է դիրքորոշում այն մասին, որ 1993 թվականի ապրիլի 5-ի ԵՄ 93/13 դիրեկտիվը տարածվում է միայն ֆիզիկական անձանց նկատմամբ <sup>97</sup>: Գործի շրջանակում ներկայացված կարծիքի համաձայն դատարանավորված է դատարանի որդեգրած այն դիրքորոշմամբ ինչպիսին է օրինակ՝ *Océano Grupo Editorial and Salvat Editores* գործը <sup>98</sup>, որ սպառողի համար նախատեսված պաշտպանություն համակարգը հիմնված է այն գաղափարի վրա, որ վերջինս գտնվում է առավել խոցելի և ոչ կայուն վիճակում՝ գիտելիքի պակասի և շուկայում ունեցած դիրքի պատճառով: Իրավաբանական անձինք սովորաբար չեն գտնում նման վիճակում, և հետևաբար առկա է վերջիններիս նման պաշտպանություն տրամադրելու անհրաժեշտություն <sup>99</sup>:

<sup>96</sup> Տե՛ս **Jana Valant**, "Consumer protection in the EU Policy overview", European Parliamentary Research Service, PE565.904, 2015, էջ 4, հասանելի է՝

[http://www.europarl.europa.eu/RegData/etudes/IDAN/2015/565904/EPRS\\_IDA\(2015\)565904\\_EN.pdf](http://www.europarl.europa.eu/RegData/etudes/IDAN/2015/565904/EPRS_IDA(2015)565904_EN.pdf) հղումով՝ 22.03.2017 թվականի դրությամբ:

<sup>97</sup> Տե՛ս **Cape Snc v Idealservice Srl** և **Idealservice MN RE Sas v OMAI Srl**, գործեր C-541/99 և C-542/99 ECJ, 22 նոյեմբեր 2001 թվականի ԵՄ արդարադատության դատարանի վճիռ:

<sup>98</sup> Այդ գործի մասին առավել մանրամասն տե՛ս **Océano Grupo Editorial SA v Roció Murciano Quintero and Salvat Editores SA v José M. Sánchez Alcón Prades, José Luis Copano Badillo, Mohammed Berroane and Emilio Viñas Fellú**, գործեր C-240/98-C-244/98, 27 հունիս 2000 թվականի ԵՄ արդարադատության դատարանի վճիռ:

<sup>99</sup> Տե՛ս **Opinion** of Mr Advocate General Mischo delivered on 14 June 2001, *Cape Snc v Idealservice Srl* (C-541/99) and *Idealservice MN RE Sas v OMAI Srl* (C-542/99), European Court reports PI-09049, 2001, հասանելի է՝ <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/PDF/?uri=CELEX:61999CC0541&from=EN> հղումով՝ 22.03.2017 թվականի դրությամբ:

Մեր կարծիքով, իրավաբանական անձանց  
ֆիզիկական անձանց հետ համահունչ  
արտապայմանագրային պատասխանատվություն  
սահմանող նույն կանոններով վնասի հատուցում  
պահանջելու հնարավորություն ընձեռելու  
հիմնավորվածության հարցը անհրաժեշտ է  
դիտարկել նաև իրավաբանական անձին՝ որպես  
քաղաքացիական իրավունքի առանձին սուբյեկտին  
բնորոշ հատկանիշների համատեքստում:

Ինչպես նշում են Ա.Պ. Սերգեևան և Յու.Կ.  
Տոլստոյը իրավաբանական անձինք զարգացած  
տնտեսություն և իրավակարգ ունեցող երկրների  
գույքային շրջանառության ամենակատիվ և  
հիմնական մասնակիցներից են, որոնց կողմից  
իրականացվող գործառնությունների խմբում կարելի է  
առանձնացնել կոլեկտիվ շահերի և նպատակների  
ձևավորումը, հիմնադիրների (մասնակիցների)  
կապիտալի միավորումը, ձեռնարկատիրական ռիսկի  
սահմանափակումը, կապիտալի կառավարումը<sup>100</sup>:

Մասնագիտական գրականության մեջ որպես  
իրավաբանական անձին բնորոշ հատկանիշներ  
առանձնացվել են՝

1) տնտեսական հատկանիշը, որն արտահայտվում է  
ներանում, որ իրավաբանական անձն ունի իր  
գործունեության նյութական բազան ապահովող  
գույք, որն առանձնացված է նրա հիմնադրի  
(մասնակիցների) գույքից և տիրապետման,  
օգտագործման կամ տնօրինման իրավունքով  
պատկանում է տվյալ կազմակերպությանը:  
Իրավաբանական անձի կողմից որոշակի  
առանձնացված գույք ունենալը նպատակ է

---

<sup>100</sup> Տե՛ս այս հեղինակների կարծիքը **Ավետիսյան Վ.Դ.**,  
Կորպորատիվ իրավահարաբերությունների արդի  
հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում  
(տնտեսական ընկերությունների օրինակով), մենագրություն,  
Եր., ԵՊՀ հրատ., 2013, էջ 38:



հետապնդումը սահմանափակելու հիմնադիրների (մասնակիցների) պատասխանատվության ռիսկը, ապահովելու հնարավոր պարտատերերի նվազագույն պահանջները.

2) գործառնական հատկանիշը, որը դրսևորվում է իրավաբանական անձի կազմակերպական միասնության մեջ: Կազմակերպական միասնությունը ենթադրում է, որ տվյալ կազմակերպության անդամները ենթարկվում են միևնույն կազմակերպական կարգ ու կանոնին, ունեն միասնական նպատակներ և կազմակերպության որոշակի կառուցվածք.

3) նյութաիրավական հատկանիշը, որն արտահայտվում է նրանում, որ իրավաբանական անձը քաղաքացիական շրջանառությունում հանդես է գալիս իրանունից, իրանունից կարող է ձեռքբերել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, իր ունեցած գույքով կրել ինքնուրույն գույքային պատասխանատվություն.

4) դատավարական հատկանիշը, որն արտահայտվում է դատարանում որպես հայցվոր կամ պատասխանող ինքնուրույն հանդես գալու հնարավորությամբ<sup>101</sup>:

Չաշվի առնելով իրավաբանական անձին բնորոշ հատկանիշների ողջ համակցությունը, կարող ենք եզրահանգել, որ իրավաբանական անձը (\$իզիկական անձի համեմատ) ապրանքային շուկայում առավել պաշտպանված է և մասնագիտացված: Այսպիսով, համադրելով նաև միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքները, հաշվի առնելով եվրոպական Միության Արդարադատության դատարանի որդեգրած՝ շուկայում առավել թույլ դիրք ունեցող սուբյեկտին պաշտպանության առավել լայն երաշխիքները նձեռնելու մոտեցումը,

<sup>101</sup>Տե՛ս նույն տեղում, էջեր՝ 39-41:

կարծում ենք, որ Ապրանքների թերությունների հետևանքով իրավաբանական անձի գույքին վնաս պատճառելու դեպքում վերջինիս ֆիզիկական անձի հետ համահունչ նույն կանոններով վնասի հատուցում պահանջելու հնարավորություն վերապահելը հիմնավոր չէ: Ասվածը հատկապես վառ արտահայտվում առևտրային բնույթի գործունեություն իրականացնող իրավաբանական անձանց պարագայում, որոնք, որպես ինքնուրույն, իրենց ռիսկով գործունեություն իրականացնող սուբյեկտներ պետք է ապրանքաշրջանառության ոլորտում ևս պատշաճ գնահատեն բոլոր հնարավոր ռիսկերը:

Բացի այդ, իրավաբանական անձանց ֆիզիկական անձանց հետ համահունչ նույն պաշտպանության երաշխիքներ ընձեռելու նպատակահարմարության հարցը անհրաժեշտ է դիտարկել նաև Ապրանքների ձեռք բերելու դեպքում դրանց օգտագործման առանձնահատկությունների դրսևորման տեսանկյունից:

Այսպես, Եվրոպական Միության արդարադատության դատարանի որդեգրած մոտեցման համաձայն սպառողների պաշտպանությանն ուղղված կանոնների կիրառումը կանխելու համար բավարարել անգամ աննշան, փոքր կապը տվյալ սուբյեկտի մասնագիտական գործունեության հետ<sup>102</sup>: Այս կապակցությամբ պետք է նշել, որ իրավաբանական անձն անգամ ոչ ձեռնարկատիրական գործունեության մեջ օգտագործելու նպատակով ապրանք (աշխատանք, ծառայություն) ձեռք բերելիս, հնարավորություն է ստանում իր կատարած ծախսերի չափով նվազեցնել հարկվող շահույթը: Սա ևս մեկ անգամ հավաստում է, որ իրավաբանական անձի

<sup>102</sup> Տե՛ս Kingsepp Margus, and Age Varv., "The Notion of Consumer in EU Consumer Acquis and the Consumer Rights Directive-a Significant Change of Paradigm." *Juridica Int'l*, 2011, N 18, էջ 50:

կողմից նման Ապրանքների ձեռքբերումը այսպես է  
այնպես օգտագործվում է (ուղղակիորեն կամ  
անուղղակիորեն) ձեռնարկատիրական (կամ  
մասնագիտական) գործունեության իրականացման  
պրոցեսում: Այսպիսով, հաշվի առնելով շուկայում  
առավել թույլ դիրք ունեցող, ոչ արհեստավարժ և  
խոցելի սուբյեկտի նպաշտպանության առավել լայն  
երաշխիքներ ընձեռնելու գաղափարը, այն, որ  
Ապրանքների թերութունների հետևանքով  
իրավաբանական անձի գույքին վնաս պատճառելու  
դեպքում վերջինիս ֆիզիկական անձի հետ  
համահունչ նույն կանոններով վնասի հատուցում  
պահանջելու հնարավորություն<sup>103</sup> վերապահելը չի  
բխում նաև այս հարցի կապակցությամբ միջազգային  
իրավական զարգացման հիմնական միտումներից՝  
գտնում ենք, որ Քաղաքացիական օրենսգրքի 1088-րդ  
հոդվածի 1-ին մասով վնասի հատուցում պահանջելու  
իրավական հնարավորությունն պետք է ընձեռվի  
միայն ֆիզիկական անձանց, իսկ իրավաբանական  
անձի գույքին արտապայմանազրային  
հարաբերությունների շրջանակում վնաս  
պատճառելու դեպքում դրա հատուցումը անհրաժեշտ  
է իրականացնել արտապայմանազրային  
պատասխանատվության դեպքում վնասի հատուցման  
հարցերը կարգավորող ընդհանուր դրույթների  
հիման վրա: Ինչ վերաբերում է պայմանազրային  
հարաբերությունների շրջանակում վնաս  
պատճառելու դեպքերին, ապա կարծում ենք, որ այս  
պարագայում իրավաբանական անձանց

<sup>103</sup> Նման մոտեցումը չի բխում նաև միջազգայնորեն ճանաչված  
սպառողների ընձեռնող այնպիսի իրավունքների  
էությունից՝ ինչպիսիք են առողջության անվտանգության  
պահպանման իրավունքը, տնտեսական շահերի պաշտպանության,  
փոխհատուցման, տեղեկացված լինելու և լսվելու  
իրավունքները, քանի որ վերջիններս իրենց բնույթով և  
էությունով բնութագրական են ֆիզիկական անձանց: Սպառողների  
հիմնական իրավունքների մասով առավել մանրամասն տե՛ս  
**Schoenmakers W.**, նշված աշխատ., էջ 11:

իրավունքների պաշտպանության խնդրի առավել ընդունելի և հիմնավոր լուծումը իրենց իրավունքների պաշտպանությունն պայմանագրային հարաբերությունների շրջանակում ամբողջ ծավալով իրացնելն է (այդ թվում՝ պատճառված վնասի հատուցման մասով):

Այժմ անդրադառնանք  ծառայություն  և  աշխատանք  հասկացությունների բնորոշման խնդրին: Քաղաքացիական օրենսգրքի 132-րդ հոդվածում աշխատանքները և ծառայությունները դիտարկվում են որպես քաղաքացիական իրավունքի առանձին օբյեկտներ: Քաղաքացիական օրենսգրքի՝ ծառայությունների վճարովի մատուցման և աշխատանքներ կատարելու հարաբերությունների կարգավորմանն ուղղված դրույթների ընդհանուր վերլուծությունը վկայում է, որ օրենսդրությամբ  ծառայություն  կամ  աշխատանք  հասկացությունների առանձին իրավական բնորոշում նախատեսելու անհրաժեշտությունը բացակայում է՝ հաշվի առնելով, որ դրանց էությունը արդեն իսկ բացահայտված է Քաղաքացիական օրենսգրքով:

Մասնավորապես՝ Քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածը սահմանում է, որ պարտավորության ուժով մի անձը պարտավոր է մեկ այլ անձի օգտին կատարել որոշակի գործողություն՝ կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց: Այսինքն՝ վերը նշված հոդվածով աշխատանքի կատարումը և ծառայության մատուցումը դիտարկվում են որպես որոշակի գործողության կատարում: Նշված եզրահանգումը բխում է նաև Քաղաքացիական օրենսգրքի 777-րդ հոդվածի 1-ին մասի և 700-րդ հոդվածի վերլուծությունից, որտեղ ևս աշխատանքների

կատարումը և ծառայությունների մատուցումը դիտարկվում են որպես որոշակի գործողության կատարում:

Ծառայության մատուցումը կարող է դրսևորվել որոշակի գործողություն կատարելով (որոշակի գործունեություն իրականացնելով), իսկ աշխատանքների կատարումը այնպիսի գործողության կատարում է, որի արդյունքում ստեղծվում է որոշակի նյութական, առարկայացված արդյունք: ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից և սարձանագրվել է, որ աշխատանքների կատարումը և ծառայությունների մատուցումը որոշակի գործողությունների կատարում են <sup>104</sup>:

Հարկ է նշել, որ շատ հաճախ դժվարություն կարող է առաջացնել ծառայությունների մատուցման և աշխատանքների կատարման հստակ տարանջատումը <sup>105</sup>: Գրականության մեջ ևս հաճախ վեճերի առարկա է հանդիսացել քաղաքացիական իրավունքի այս երկու օբյեկտների հարաբերակցության և դրանց տարանջատման հարցը: Նշված հարցի կապակցությամբ արտահայտված տեսակետները կարելի է բաժանել երկու հիմնական խմբի: Առաջին խմբում են աշխատանքների և ծառայությունների կտրուկ տարանջատման դեմ արտահայտվողները, երկրորդ խմբում՝ դրանց տարանջատման կողմնակիցները:

<sup>104</sup> Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 17.07.2015թ. թիվ ԵԿԴ/1013/02/13 քաղաքացիական գործով արտահայտած դիրքորոշումը:

<sup>105</sup> Ծառայությունների մատուցման և աշխատանքների կատարման պայմանագրերը՝ որպես երկկողմանի, կոնսենսուալ և հատուցելի պայմանագրեր ունեն մի շարք ընդհանրություններ: Դրանց սերտ առնչության մասին է վկայում նաև այն, որ ծառայությունների մատուցման պայմանագրի նկատմամբ քաղաքացիական օրենսգրքի 781-րդ հոդվածի ուժով կիրառվում են կապալի մասին ընդհանուր և կենցաղային կապալի մասին դրույթները, թե դա չի հակասում ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրի առանձնահատկություններին:

Առաջին խմբի ներկայացուցիչ Բ.Ա. Բորիսովը աշխատանքը դիտարկում է որպես ծառայության նպիսի տեսակ, որի վերջնական արդյունքը նյութականորեն առարկայի կամ առարկայացված ալարդյունքի ստեղծումն է Օրինակ՝ կենցաղային ծառայություններ: Կալմիկովան ևս գտնում է, որ աշխատանքների կատարումը պետք է դիտարկվի որպես ծառայությունների մատուցման տեսակ: Կաբալկինի կարծիքով ևս նյութական ծառայությունները աշխատանքների կատարման արդյունք են: Յեղիևակների երկրորդ խմբի ներկայացուցիչ Օ.Ս. Իոֆեն գտնում է, որ ծառայությունների մատուցման արդյունքում չի ստացվում նյութականացված արդյունք: Նույն տեսակետն է արտահայտել նաև Եվստիֆևը<sup>106</sup>: Արևատովան նշում է, որ ծառայության մատուցումը այնպիսի գործողություն կամ գործունեություն հրականացնելն է, որը չունի նյութականացված արդյունք<sup>107</sup>: Պրոֆեսոր Տ.Կ. Բարսեղյանը աշխատանքը բնորոշում է որպես աշխատանքային գործունեության գործընթաց, որի արդյունքում ստեղծվում է որոշակի նյութական արժեք, մինչդեռ ծառայությունների մատուցման ջանքերը որևէ նոր առարկայում չեն նյութականանում<sup>108</sup>:

Իր հերթին, Ա.Պ. Սերգենը գտնում է, որ այն գործողությունները, որոնց արդյունքները գործունեությունից ինքնին անբաժանելի են և օգտագործվում են այդ գործունեության ընթացքում հանդիսանում են ծառայություններ<sup>109</sup>:

<sup>106</sup> Տե՛ս այս հեղինակների կարծիքը **Արաքյան Մ.Է.**, "Проблемы соотношения понятий "Работы" и "Услуги" ", Бизнес в законе, Экономико-юридический журнал, Москва, 2012, N 4, էջ 29-30:

<sup>107</sup> Տե՛ս **Արաքյան Ս.Ս.**, "Соотношение договоров подряда и возмездного оказания услуг в гражданском праве", Молодой ученый, Казань, 2012, N 8, էջ 200:

<sup>108</sup> Տե՛ս **Բարսեղյան Տ.Կ.**, Յայատանի Յանրապետության քաղաքացիական իրավունք, Առաջին մաս, Երրորդ հրատարակություն, Երևանի պետ.համալս. - Եր.: ԵՊՀ հրատ., 2006, էջ 199:

<sup>109</sup> Տե՛ս այս հեղինակի կարծիքը **Արաքյան Մ.Է.**, նշված աշխատ., էջ 30:

Այս ինքն՝ հեղինակի կողմից չի բացառվում ծառայությունների մատուցման դեպքում որոշակի նյութական արդյունքի ստեղծման հնարավորությունը, բայց դա ինքնին չի հանգեցնում՝ իրականացված գործողությունը որպես աշխատանքի կատարում դիտարկելուն:

Այս տեսանկյունից գրականության մեջ առաջարկվել է նաև ծառայությունների դասակարգել՝ 1) նյութական ծառայությունների, որոնք օբյեկտիվ արտահայտություն են գտնում պատրաստի առարկայի ձևով □ նորի բացառությամբ, փոփոխվում են դրանք, իրեր են տեղափոխվում □, կամ որոնք անմիջապես արտահայտվում են մարդու անձնավորության մեջ □ վարսավիրի, դիմահարդարի ծառայություններ □ և 2) ոչ նյութական ծառայություններ, որոնց դեպքում գործունեությունն առարկայական տեսք չի ստանում, ինչպես նաև ծառայություն մատուցողը չի երաշխավորում ենթադրվող դրական արդյունքին հասնելը □ հեռախոսային ծառայություններ □<sup>110</sup>:

Յետաքրքիր տարանջատում է դրվում աշխատանքների կատարման և ծառայությունների մատուցման միջև Օ.Պ. Կազաչենկոյի կողմից: Մենք համաձայն ենք հեղինակի այն տեսակետին, որ կապալի դեպքում ստացված արդյունքը պետք է ինքնին բաժանելի լինի աշխատանքներից, քանի որ այն պետք է հանձնվի կամ փոխանցվի պատվիրատուն: Այս իմաստով կապալի պայմանագիրը կնքվում է որոշակի կոնկրետ արդյունքի հասնելու համար և աշխատանքների կատարումը պայմանագրի ինքնուրույն առարկա չէ: Ծառայությունների

<sup>110</sup> Տե՛ս Յայաստանի Յանրապետության քաղաքացիական իրավունք, երկրորդ մաս, երկրորդ հրատարակություն, փոփոխություններով և լրացումներով, **Տ.Բարսեղյան, Ա.Յայկյանց, Գ.Ղարախանյան, Ս.Մեղրյան**, Երևանի պետ.համալս. - Եր.: ԵՊՀ հրատ., 2008, էջեր՝ 276-277:

մատուցումը ուղղված է այնպիսի աշխատանքների կատարմանը, որոնց արդյունքը գործողության կատարումից ինքնին անբաժանելի է: Իհարկե սաչինշանակում, որ ծառայությունների մատուցման դեպքում բացառվում է այնպիսի արդյունքի հասնելը, որը անբաժանելի լինի դրա մատուցման պրոցեսից, բայց այդ արդյունքը ունի այլ իրավական բնույթ □ օրինակ՝ բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների մատուցման դեպքում կարող է նախատեսվել լրացուցիչ փոխհատուցում պացիենտի բուժման պարագայում, բայց պայմանագրի առարկա է բժշկական ծառայությունների մատուցումը, իսկ նախատեսված արդյունքին չհասնելը չի կարող հանգեցնել պայմանագրով նախատեսված փոխհատուցման տրամադրման մերժմանը □<sup>111</sup>:

Մենք ևս հակված են այն տեսակետին, որ չնայած որոշակի նմանությունների առկայությանը՝ ծառայությունների մատուցումը և աշխատանքների կատարումը անհրաժեշտ է միմյանցից տարանջատել, քանի որ եթե ծառայությունների մատուցումը դրսևորվում է որոշակի գործողության իրականացմամբ, ապա աշխատանքների կատարումը՝ ոչ միայն որոշակի գործողությունների կատարմամբ, այլև այդ աշխատանքների արդյունքում որոշակի նյութականացված արդյունքի ստեղծմամբ:

Ըստ այդմ, կարծում ենք, որ այն դեպքում, երբ կողմերի կամահայտնությունն ուղղված է եղել բուն գործողության իրականացմանը, բայց, այնուամենայնիվ, դրա արդյունքում ստեղծվել է որոշակի նյութականացված արդյունք, ապա միևնույն է, այն պետք է դիտարկել որպես ծառայության մատուցում՝ հաշվի առնելով այն, որ

<sup>111</sup> Տե՛ս **Казаченок О.П.**, "Соотношение договора подряда и договора возмездного оказания услуг", Наука и современность, Новосибирск, 2014, N 29, էջեր՝ 293-296:



կողմերի կամահայտնությունն ուղղված է եղել բուն գործողության կատարմանը և ոչ թե որոշակի առարկայացված արդյունքի ստեղծմանը:

Հաշվի առնելով իրականացված վերլուծության արդյունքները՝ գտնում ենք, որ սպառողական ոլորտում որպես աշխատանքների կատարում անհրաժեշտ է դիտարկել այնպիսի գործողության կատարումը կամ այլ կերպասած իրականացումը, որի արդյունքում ստեղծվում է որոշակի նյութականացված արդյունք, և որը կարող է օգտագործվել ֆիզիկական անձանց կողմից մասնավոր պահանջների բավարարման նպատակով: Ինչ վերաբերում է ծառայությունների մատուցմանը՝ ապա այն պետք է դիտարկվի որպես այնպիսի գործողության իրականացում, որի արդյունքում, ընդհանուր կանոնի համաձայն, չի ստացվում առարկայացված արդյունք, և որն իրականացվում է ֆիզիկական անձանց մասնավոր պահանջների բավարարման նպատակով:

Միաժամանակ, անհրաժեշտ է նշել, որ իրավակիր առարկայի կայում վնաս պատճառողը չի կարող խուսափել պատասխանատվությունից այն պատճառաբանությամբ, որ իր դրսևորած գործողությունը որակվել է որպես աշխատանքների կատարում այն դեպքում, երբ վերջինս մատուցել է ծառայություն կամ ընդհակառակը՝ հաշվի առնելով այն, որ օրենսդրությամբ հատուցման ենթակա է դիտարկվում թե՛ աշխատանքների կատարման, թե՛ ծառայությունների մատուցման արդյունքում պատճառված վնասը:

**Գ Լ Ո Ւ Խ 2. Ա Պ Ր Ա Ն Ք Ն Ե Ր Ի, Ա Շ Խ Ա Տ Ա Ն Ք Ն Ե Ր Ի,  
Վ Ա Ռ Ա Յ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր Ի Թ Ե Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր Ի  
Յ Ե Տ Ե Վ Ա Ն Ք Ո Վ Պ Ա Տ Ճ Ա Ռ Վ Ա Վ Կ Ն Ա Ս Ի Յ Ա Մ Ա Ր  
Պ Ա Տ Ա Ս Խ Ա Ն Ա Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Կ Ր Ո Ղ Ա Ն Ձ Ի Ն Ք Ե Վ  
Պ Ա Տ Ա Ս Խ Ա Ն Ա Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ի Ց Ա Ձ Ա Տ Վ Ե Լ Ո Ւ Յ Ի Մ Ք Ե Ր Ը**

**§2.1. Ապրանք արտադրողը և վաճառողը՝ որպես  
ապրանքների թերու թյուլ ներքին հետևանքով  
պատճառված վնասի համար պատասխանատու  
սուբյեկտներ**

Ապրանքների թերու թյուլ ներքին հետևանքով պատճառված վնասի համար պատասխանատու թյուլ ներքին սուբյեկտների հստակ տարանջատման, վերջիններիս պատասխանատու թյուլան դրսևորման առանձնահատկությունների հարցը ունի կարևոր նշանակություն վնաս կրած անձի քաղաքացիական իրավունքների արդյունավետ պաշտպանության, վնաս պատճառած անձի նկատմամբ ներգործության և պատասխանատու թյուլան համարժեք միջոցներ կիրառելու, պատճառված վնասի ամբողջական հատուցումը ապահովող կառուցակարգերի արդյունավետությունը և երաշխավորելու տեսանկյունից:

Ինչպես գիտենք, ընդհանուր կանոնի համաձայն, վնասը հատուցելու պարտականությունը կրում է այն պատճառած անձը, ինչը բխում է քաղաքացիական օրենսգրքի 1058-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջից: Ըստ այդմ, Ապրանքների թերու թյուլ ներքին հետևանքով պատճառված վնասի համար պատասխանատու սուբյեկտների շրջանակը սահմանվում է քաղաքացիական օրենսգրքի 1089-րդ հոդվածով, որի համաձայն.

□1. Ապրանքի թերու թյուլ ներքին հետևանքով պատճառված վնասը տուժողի ընտրությամբ ենթակա է

հատուցման վաճառողի կամ ապրանք արտադրողի կողմից:

2. Աշխատանքների կամ ծառայությունների թերույունների հետևանքով պատճառված վնասը ենթակա է հատուցման աշխատանք կատարած կամ ծառայություն մատուցած անձի (կատարողի) կողմից:

3. Ապրանքի (աշխատանքի, ծառայության) մասին լիակատար կամ հավաստի տեղեկատվություն չտրամադրելու հետևանքով պատճառված վնասը ենթակա է հատուցման սույն հոդվածի 1-ին և 2-րդ կետերում նշված անձանց կողմից: □

Վերը նշված հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի համադրված վերլուծությունը ցույց է տալիս, որ աշխատանքների կամ ծառայությունների թերույունների հետևանքով պատճառված վնասի դեպքում օրենսդրորեն հստակ անձնացվում են վնասի հատուցման պատասխանատվություն կրող սուբյեկտները: Մասնավորապես, աշխատանքների թերույունների (այդ թվում՝ ոչ ամբողջական կամ ոչ հավաստի տեղեկություններ տրամադրելու) հետևանքով պատճառված վնասի համար պատասխանատու է աշխատանք կատարողը, ծառայությունների թերույունների (այդ թվում՝ ոչ ամբողջական կամ ոչ հավաստի տեղեկություններ տրամադրելու) հետևանքով պատճառված վնասի համար՝ ծառայություն մատուցողը:

Իր հերթին, Քաղաքացիական օրենսգրքի 1089-րդ հոդվածի 1-ին մասով որպես ապրանքների թերույունների հետևանքով պատճառված վնասի հատուցման սուբյեկտներ անձնացվում են ապրանք վաճառողը և արտադրողը, իսկ տուժողին ընձեռվում է ապրանք վաճառողի կամ արտադրողի միջև ընտրություն կատարելու հնարավորություն:

Օրենսդրական նման կարգավորման նախատեսումը նախև առաջ պահանջում է քննարկել

այն հարցը, թե ինչով է պայմանավորված օրենսդրիկոդմից տուժողին ապրանք վաճառողի կամ արտադրողի միջև ընտրություն կատարելու հնարավորությունը նձեռելը, ի՞նչ պայմաններ են անհրաժեշտ տվյալ սուբյեկտին որպես ապրանք արտադրող կամ վաճառող դիտարկելու համար, ի՞նչ առանձնահատկություն է բնորոշ վնաս պատճառած անձանց պատասխանատվության դրսևորմանը: Յարկ է նշել, որ վկայակոչված խնդիրները քննարկման առարկա են դարձել նաև մասնագիտական գրականության մեջ:

Մասնավորապես, տուժողին ապրանք վաճառողի կամ արտադրողի միջև ընտրություն կատարելու հնարավորությունը նձեռելը վնաս պատճառած անձանց պատասխանատվության դրսևորման տեսանկյունից գրականության մեջ մեկնաբանվել է տարբեր կերպ:

Օրինակ, Ռ.Վ. Խալիևը, անդրադառնալով ՌԴ քաղաքացիական օրենսգրքի համանման հոդվածին, գտնում է, որ ուսումնասիրվող իրավահարաբերությունում առկա է պարտապանիկոդմում անձանց բազմաթիվություն, և վերջիններս կրում են համապարտ պատասխանատվություն<sup>112</sup>: Վ.Գ. Կորենևան գտնում է, որ այս դեպքում սպառողին պատասխանատու անձանց միջև ընտրություն կատարելու հնարավորությունը նձեռելը վկայում է, որ պատասխանատվությունը բաժնային, համապարտ կամ լրացուցիչ չէ, այլ դրան բնորոշ է հատուկ իրավական բնույթը<sup>113</sup>: Ուշադրության է արժանի այն, որ հեղինակները, քննարկելով ապրանք վաճառողի և արտադրողի պատասխանատվության դրսևորման

<sup>112</sup> Տե՛ս **Халин Р.В.**, "Гражданско-правовая ответственность за вред, причиненный недостатками товаров, работ и услуг по праву России, Англии и США", автореф. дисс. к.ю.н., Курск, 2015, էջ 15:

<sup>113</sup> Տե՛ս **Коренева В.Г.**, "Ответственность за недостатки товаров, работ и услуг как особый вид деликтной ответственности в гражданском праве Российской Федерации", Бизнес в законе, Экономико-юридический журнал, Москва, 2011, №2, էջեր՝ 93-94:

առանձնահատկություններին հարցը, չեն պարզաբանում, թե ինչով է պայմանավորված վերջիններին պատասխանատվության համապարտությունը կամ ինչում է արտահայտվում պատասխանատվության հատուկ իրավական բնույթը:

Որոշ հեղինակներ առևտրի շղթայի բոլոր օղակներին վրա պատասխանատվություն տարածելը հիմնավորում են նրանով, որ արտադրողը տուժողի համար հաճախ հասանելի չէ, և սա իր հերթին խթան է հանդիսանում, որպեսզի վաճառողները արտադրողներին պահանջեն իրացման տեսանկյունից անվտանգ ապրանքներ<sup>114</sup>:

Մեր կարծիքով, Քաղաքացիական օրենսգրքի 1089-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավակարգավորումը չպետք է մեկնաբանվի որպես ապրանք վաճառողի և արտադրողի համապարտ կամ ինչպես նշվում է գրականության մեջ հատուկ իրավական բնույթ ունեցող պատասխանատվության նախատեսում, քան ի որ օրենսդիրը տուժողին միայն ընձեռում է ապրանք վաճառողի կամ արտադրողի միջև ընտրություն կատարելու հնարավորություն, իսկ համապարտություն նախատեսելու պարագայում օրենսդրորեն պետք է ուղղակիորեն նշվեր պատասխանատվության համապարտության վերաբերյալ: Վերը նշված նորմում վաճառողի և արտադրողի միջև ընտրություն կատարելու հնարավորությունը որպես համապարտություն նորակելը խնդրահարույց է նաև արտապայմանագրային պատասխանատվության պայմաններին տեսանկյունից, քան ի որ նման մեկնաբանման դեպքում պատասխանատվություն կարող է դրվել այն սուբյեկտի վրա, ով հակաիրավական վարքագիծ չի դրսևորել:

<sup>114</sup> Տե՛ս **Zekoll Joachim**, "Liability for Defective Products and Services", *The American Journal of Comparative Law*, 2002, N 50, էջ 126:

Անգամ, եթե ընդունենք, որ Քաղաքացիական օրենսգրքի 1058-րդ հոդվածի 1-ին մասը թույլատրում է օրենքով հատուկ նախատեսված դեպքերում վնասի հատուցման պարտականությունը վնաս չպատճառած անձի վրա դնելը, այլ է համանման դեպքերում օրենսդրի հետապնդած դրդապատճառը և ողջ իրավակարգավորման հիմքում դրված տրամաբանությունը (օրինակ՝ 14 տարեկան չդարձած անչափահասի պատճառած վնասի համար պատասխանատվություն են կրում նրա ծնողները, որ դեգրոդները կամ խնամակալը, քանի որ ունեն անչափահասի նկատմամբ հսկողություն իրականացնելու պարտականություն, նմանապես անգործունակ ճանաչված քաղաքացու պատճառած վնասը հատուցում է խնամակալը կամ այն կազմակերպությունը, որը պարտավոր էր հսկողություն իրականացնել նրան կատմամբ):

Նման եզրահանգումը խնդրահարույց է նաև պատճառահետևանքային կապի տեսանկյունից, քանի որ այս պարագայում որպես պատասխանատվություն կրող անձ կարող է դիտարկվել այն սուբյեկտը, ով հակաիրավական վարքագիծ չի դրսևորել, պատճառված վնասը ոչ իրավաչափ վարքագծի ուղղակի հետևանքը չի եղել՝ այսինքն բացակայել է ուղղակի պատճառահետևանքային կապը: Ասվածը իհարկե չի բացառում որոշակի իրավիճակներում ապրանք վաճառողի և արտադրողի (կամ արտադրողների) համապարտ պատասխանատվության հնարավորությունը, որին անդրադարձ կկատարենք առավել մանրամասն:

Մենք այն տեսակետին ենք, որ Քաղաքացիական օրենսգրքի 1089-րդ հոդվածի 1-ին մասով տուժողին ընտրություն կատարելու հնարավորությունը ընձեռելը պայմանավորված է նրանով, որ ապրանքաշրջանառության ներկայիս

պայ ման ն եր ու մ ապրանք ն եր ի մ ե ծ ա մ ա ս ն ու թ յ ու ն ը  
ս պ առ ո ղ ի ն հ ա ս ն ու մ է մ ի ջ ն ո Ր դ ա վ ո Ր վ ա ծ ձ և ո վ : Ս ա ի Ր  
հ եր թ ի ն պայ ման ա վ ո Ր վ ա ծ է  
ապրանք ա շ Ր ջ ա ն առ ու թ յ ա ն շ ղ թ ա յ ի ն բ ն ո Ր ո շ  
կ ա պ ու ղ ի ն եր ի բ ա զ մ ա զ ա ն ու թ յ ա մ բ , ապրանք ա յ ի ն  
շ ու կ ա յ ու մ ս պ առ ո ղ ի վ ա Ր ք ա գ ծ ի ո չ  
ար հ ե ս տ ա վ ա Ր ժ ու թ յ ա մ բ , ս պ առ ո ղ ա կ ա ն շ ու կ ա յ ու մ  
տ ի Ր ո ղ ի Ր ա վ ի ճ ա կ ի մ ա ս ի ն ա մ բ ո ղ ջ ա կ ա ն և հ ա մ ա լ ի Ր  
պ ա տ կ եր ա գ ու մ կ ա զ մ ե լ ու ա ն հ ն ար ի ն ու թ յ ա մ բ :  
Տ ու ժ ո ղ ի ն ի Ր ի ս կ ը ն տ Ր ու թ յ ա մ բ ար տ ա դ Ր ո ղ ի ն կ ա մ  
վ ա ճ առ ո ղ ի ն պ ա հ ա ն ջ ն եր կ ա յ ա գ ն ե լ ու  
հ ն ար ա վ ո Ր ու թ յ ու ն ը ն ձ ե ո ե լ ը ճ կ ու ն մ ո տ ե գ ու մ է  
ա յ ն տ ե ս ա ն կ յ ու ն ի ց , ո Ր ս պ առ ո ղ ը , ն ա խ ն ա կ ա ն  
գ ն ա հ ա տ ե լ ո վ ապրանք ի թ եր ու թ յ ա ն , ի Ր ե ն պ ա տ ճ առ վ ա ծ  
վ ն ա ս ի բ ն ու յ թ ը , ի ն չ ու ո չ ն ա ն ապրանք վ ա ճ առ ո ղ ի ,  
ի ս կ ար տ ա դ Ր ո ղ ի հ ե տ ա ն մ ի ջ ա կ ա ն ո Ր ե ն առ ն չ վ ե լ ու  
դ ե պ ք ու մ ն ա ն վ եր ջ ի ն ի ս վ ա Ր ք ա գ ի ծ ը , կ ա Ր ո ղ է  
ը ն տ Ր ու թ յ ու ն կ ա տ ա Ր ե լ , թ ե ու մ դ ե մ վ ն ա ս ի  
հ ա տ ու գ մ ա ն պ ա հ ա ն ջ ն եր կ ա յ ա գ ն ե լ ու պ ա Ր ա գ ա յ ու մ  
կ ա պ ա հ ո վ վ ի ի Ր պ ա հ ա ն ջ ն եր ի առ ա ջ ն ա հ եր թ և  
ա մ բ ո ղ ջ ա կ ա ն բ ա վ ա Ր ար ու մ ը :

Պ ա Ր գ ա բ ա ն ե լ ո վ տ ու ժ ո ղ ի ն ապրանք վ ա ճ առ ո ղ ի և  
ար տ ա դ Ր ո ղ ի մ ի ջ և ը ն տ Ր ու թ յ ու ն կ ա տ ա Ր ե լ ու  
հ ն ար ա վ ո Ր ու թ յ ու ն ը ն ձ ե ո ե լ ու օ Ր ե ն ս դ Ր ի  
դ Ր դ ա պ ա տ ճ առ ն եր ը ` ա ն հ Ր ա ժ ե շ տ ե ն ք հ ա մ ար ու մ ն ա ն  
ք ն ն ար կ ե լ ա յ ն հ ար ց ը , թ ե ի ն չ գ ո Ր ծ ու ն ե ու թ յ ու ն  
ծ ա վ ա լ ե լ ու պ ա Ր ա գ ա յ ու մ տ վ յ ա լ ս ու բ յ ե կ տ ը կ ա Ր ո ղ է  
դ ի տ ա Ր կ վ ե լ ո Ր պ ե ս ապրանք վ ա ճ առ ո ղ կ ա մ ար տ ա դ Ր ո ղ :  
Ա յ ս հ ար ց ի ք ն ն ար կ ու մ ը կ ա Ր և ո Ր է ն ա խ և առ ա ջ  
տ ու ժ ո ղ ի հ ա մ ար ի Ր կ Ր ա ծ վ ն ա ս ն եր ի հ ա տ ու գ մ ա ն  
կ ա ն խ ա տ ե ս ե լ ի ու թ յ ու ն ը ապա հ ո վ ե լ ու  
տ ե ս ա ն կ յ ու ն ի ց ` հ ա շ վ ի առ ն ե լ ո վ ն ա ն ա յ ն , ո Ր և `  
օ Ր ե ն ս դ Ր ու թ յ ա ն և ` ի Ր ա վ ա կ ի Ր առ պ Ր ա կ տ ի կ ա յ ի  
կ ո ղ մ ի ց ա յ ս հ ար ց ը դ ե ու ս հ ս տ ա կ լ ու ծ ու մ չ ի  
ս տ ա գ ե լ :

Հարկ է նշել, որ Օրենքի 1-ին հոդվածով արտադրող է դիտարկվում իրացման համար ապրանք արտադրող իրավաբանական անձը կամ անհատ ձեռնարկատերը, իսկ վաճառող՝ առևՎաճառքի պայմանագրով սպառողներին ապրանք իրացնող իրավաբանական անձը կամ անհատ ձեռնարկատերը: Իր հերթին, Քաղաքացիական օրենսգրքի 60-րդ գլխի 3-րդ պարագրաֆը, որպես պատճառված վնասի համար պատասխանատու սուբյեկտ դիտարկելով վաճառողին և արտադրողին, չի բացահայտում այս եզրույթներին բովանդակությունը: Այս առումով հարց է առաջանում, թե արդյոք ապրանքի վաճառքով կամ արտադրությամբ զբաղվող ցանկացած սուբյեկտ կարող է դիտարկվել որպես վնաս պատճառած անձ:

Մեր կարծիքով, Քաղաքացիական օրենսգրքի 1089-րդ հոդվածի 1-ին մասի «վաճառող» և «արտադրող» եզրույթները պետք է ընդգրկեն միայն ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող սուբյեկտներին՝ այլ կերպասած այն սուբյեկտներին, որոնց գործունեությանը բնորոշ է տնտեսական բնույթը: Մեր կողմից առաջ քաշված այս եզրահանգումը պայմանավորված է հետևյալով՝

1. անձնական, ընտանեկան, տնային կամ այլ օգտագործման համար նախատեսված ապրանքները սովորաբար արտադրվում կամ վաճառվում են ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող<sup>115</sup> սուբյեկտների կողմից (օրինակ՝ մանրածախ առևտուր):

<sup>115</sup> «Ձեռնարկատիրական գործունեություն» հասկացության հատկանիշներին անդրադարձել է ինչպես ՀՀ սահմանադրական դատարանը, այնպես էլ ՀՀ վճռաբեկ դատարանը: Այդ մասին առավել մանրամասն տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 05.04.2013թ. ԵԿԴ/2221/02/10, 01.08.2007թ. 3-1161 (ՏԴ) քաղաքացիական գործերով, 22.07.2016թ. ՎԴ/5367/05/13 վարչական գործով արտահայտած դիրքորոշումը, ՀՀ սահմանադրական դատարանի 25.11.2008թ. ՍԴՈ-780 գործով արտահայտած դիրքորոշումը:



2. Ուր առաջինը ընդհանուր օգտագործումը արդեն իսկ վկայում է, որ իրականացվող գործունեությանը բնորոշ է պարբերական բնույթը.

3. օրենսդրի կողմից ապրանք վաճառողի և արտադրողի՝ առավել խստացված (առանց մեղքի) պատասխանատվության նախատեսումը ևս հուշում է, որ նման պատասխանատվությունը առավել պես բնորոշ է ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող սուբյեկտին.

4. այն պարագայում, երբ վնասը պատճառվի ձեռնարկատիրական գործունեություն չիրականացնող սուբյեկտի վաճառած (արտադրած) ապրանքի հետևանքով, դրա հատուցումը կիրականացվի քաղաքացիական օրենսգրքի 1058-րդ հոդվածի հիման վրա (ըստ մեղքի պատասխանատվություն):

Ընդ որում, նշված հարցի կապակցությամբ միջազգային փորձի ուսումնասիրությունը ևս հանգում է նրան, որ ապրանք արտադրող կամ վաճառող են դիտարկվում այն սուբյեկտները, որոնց գործունեությունը հետապնդում է շահույթ ստանալու նպատակ<sup>116</sup>: Բացի այդ, եվրոպական երկրներին իրավական համակարգերին բնութագրական է Պապրանք արտադրող և Պապրանք վաճառող Եզրույթների բնորոշման նախատեսումը, որի համաձայն արտադրող է պատրաստի ապրանքը, դրա քաղկացուցիչ մասերը կամ հումքը արտադրողը, ինչպես նաև այն սուբյեկտը, ով ներկայանում է որպես արտադրող՝ ապրանքի վրա իր անունը, ապրանքային նշանը կամ անհատականացման այլ միջոցը տեղադրելով: Միության տարածք իրացման համար ապրանք ներմուծող սուբյեկտը ևս

<sup>116</sup> Տե՛ս **Council Directive** 85/374/EEC of 25 July 1985 on the approximation of the laws, regulations and administrative provisions of the Member States concerning liability for defective products, Official Journal L 210, 07/08/1985, P.0029-0033, հոդված 3, հոդված 7:

դիտարկվում է արտադրող: Եթե Միության տարածք ներմուծվում է անանուն ապրանք, ապա արտադրող է դիտարկվում մատակարարը, բայց վերջինս պատասխանատվություն չի կրում, եթե տուժողին ողջամիտ ժամկետում տրամադրում է ապրանք մատակարարած սուբյեկտի կամ փաստացի արտադրողի վերաբերյալ տեղեկատվություն<sup>117</sup>:

Ամերիկյան իրավական համակարգում ապրանքների թերությունների համար պատասխանատու է այն սուբյեկտը, ով ներգրավված է ապրանքի վաճառքի կամ այլ եղանակով դրա բաշխման գործընթացի մեջ: Ընդ որում, այդ շրջանակը բավական ընդգրկուն է, և ներառում է այն բոլոր սուբյեկտներին (այդ թվում՝ արտադրողին, մեծածախ և մանրածախ առևտրի դիլերին, դիստրիբյուտորին և այլ սուբյեկտներին), ովքեր իրականացնում են այնպիսի գործունեություն, որն հանգեցնում է ապրանքների վերջնական օգտագործմանը կամ սպառմանը<sup>118</sup>:

Չաշվի առնելով նաև այլ երկրների մոտեցումները՝ կարող ենք եզրահանգել, որ ապրանք վաճառող պետք է դիտարկել դրա իրացմամբ զբաղվող սուբյեկտին, իսկ արտադրող՝ ինչպես պատրաստի ապրանքը, դրա բաղկացուցիչ մասերը կամ հումքը արտադրողին, այնպես էլ այն սուբյեկտին, ով ապրանքի վրա իրականում, ապրանքային նշանը կամ անհատականացման այլ միջոցը տեղադրելով, ներկայանում է որպես արտադրող: Այս տարանջատումը կարևոր նշանակություն ունի տուժողի կողմից վնասի հատուցման պատասխանատու սուբյեկտի ճիշտընտրության տեսանկյունից, քանի

<sup>117</sup> Տե՛ս **Taschner H.C.**, "Harmonization of Products Liability Law in the European Community." *Tex. Int'l LJ*, 1999, N 34, Էջեր՝ 29-30:

<sup>118</sup> Տե՛ս *Restatement of the Law, Third: Torts: Products Liability*, American Law Institute, 1998, հասանելի է՝ [https://ius.unibas.ch/fileadmin/user\\_upload/fe/file/Vorlesung\\_vom\\_13.1.\\_Restatement\\_of\\_the\\_law\\_thirds\\_tords\\_Product\\_Liability.pdf](https://ius.unibas.ch/fileadmin/user_upload/fe/file/Vorlesung_vom_13.1._Restatement_of_the_law_thirds_tords_Product_Liability.pdf) հղումով՝ 20.05.2017 թվականի դրությամբ:

որ, օրինակ, տուժողը կարող է վնասի հատուցման պահանջ ներկայացնել և՛ պատրաստի ապրանքը, և՛ դրա բաղկացուցիչ մասը արտադրողի դեմ, եթե գտնում է, որ թերություն է ունեցել ինչպես ամբողջ ապրանքը, այնպես էլ դրա բաղկացուցիչ մասը<sup>119</sup>: Ուշադրության է արժանի նաև այն, որ եվրոպական երկրներում պատասխանատու սուբյեկտների համար սահմանվում է վնասի հատուցման պարտականության առաջնահերթություն՝ առաջին հերթին պատասխանատու դիտարկելով արտադրողին, իսկ վերջինիս պարզելու անհնարինության դեպքում՝ վաճառողին, եթե վաճառողը սպառողին չի հայտնում արտադրողի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվություն: Այս հարցի կապակցությամբ առանձին երկրների օրենսդրության ուսումնասիրությունը ևս վկայում է, որ օրինակ՝ Իտալիայում վնասի հատուցման պարտականություն է կրում արտադրողը, իսկ արտադրողի անձը անհայտ լինելու դեպքում՝ վաճառողը, եթե տուժողի պահանջը ստանալուց հետո եռամսյա ժամկետում չի ներկայացնում արտադրողի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվություն (նշելով վերջինիս անունը, բնականության կամ գործունեության իրականացման վայրը)<sup>120</sup>: Գերմանիայում ևս վնասի հատուցման պարտականությունը կրում է արտադրողը, իսկ վերջինիս անձը անհայտ լինելու դեպքում՝ ներմուծողը, եթե տուժողի պահանջը

<sup>119</sup> Օրինակ՝ անձը ձեռք է բերում միկրոալիքային վառարան, որն արտադրական թերության հետևանքով վնաս է պատճառում անձի առողջությանը, և մի ժամանակ պարզվում է, որ թերություն է ունեցել նաև այլ արտադրողի կողմից արտադրված և տվյալ միկրոալիքային վառարանի մեջ ներմուծված դրա առանձին մասը:

<sup>120</sup> Տե՛ս **Dreyfuss Richard H.**, նշված աշխատ., էջեր՝ 46-47:

ստանալուց հետո մեկամսյա ժամկետում չի բացահայտում արտադրողի ինքնուրույնը<sup>121</sup>:

Եվրոպական երկրների այս մոտեցումը թերևս կարելի է բացատրել նրանով, որ ապրանքների թերուրույնները մեծամասամբ առաջանում են դրանց արտադրության, նախագծման և պատրաստման պրոցեսում, և, ըստ այդմ, պատասխանատու սուբյեկտ են դիտարկվում այդ գործընթացում ներգրավված անձինք, իսկ արտադրողի անձը անհայտ լինելու դեպքում վաճառողի դեմ պահանջ ներկայացնելու հնարավորությունն ընձեռելը մեր կարծիքով պայմանավորված է նաև նրանով, որ վաճառողը, իր գործունեության բնույթից ելնելով, ունի արտադրողին անհատականացնելու առավել արդյունավետ հնարավորություն:

Եվրոպական երկրների մոտեցումը էականորեն տարբերվում է ամերիկյան մոտեցումից, որտեղ պատասխանատու սուբյեկտ է դիտարկվում վաճառողը<sup>122</sup>, ով ներգրավված է ապրանքի վաճառքի կամ այլ եղանակով դրա բաշխման գործընթացի մեջ<sup>123</sup>: Այսինքն՝ ամերիկյան իրավական համակարգում չի առաջադրվում արտադրողին վնասի հատուցման պահանջը առաջնահերթորեն ներկայացնելու որևէ պահանջ: Պատճառած վնասի համար պատասխանատվություն են կրում առևտրի շղթայի այն բոլոր սուբյեկտները, որոնց գործունեությունը հանգեցրել է ապրանքի վերջնական սպառմանը կամ իրացմանը:

Դիտարկելով եվրոպական և ամերիկյան մոտեցումները՝ մենք կարծում ենք, որ իսկզբանե

<sup>121</sup> Տե՛ս The Act of Germany on Product Liability, (Federal Law Gazette I, p. 2198), (15.12.1989), հոդված 4, հասանելի է՝ [https://www.gesetze-im-internet.de/englisch\\_prodhaftg/englisch\\_prodhaftg.html](https://www.gesetze-im-internet.de/englisch_prodhaftg/englisch_prodhaftg.html) հղումով՝ 08.06.2017թվականի դրությամբ:

<sup>122</sup> Տե՛ս Dreyfuss Richard H., նշված աշխատ., էջ 45:

<sup>123</sup> Տե՛ս Restatement of the Law, Third: Torts: Products Liability, American Law Institute, 1998, հասանելի է՝ [https://ius.unibas.ch/fileadmin/user\\_upload/fe/file/Vorlesung\\_vom\\_13.1.\\_Restatement\\_of\\_the\\_law\\_thirds\\_tords\\_Product\\_Liability.pdf](https://ius.unibas.ch/fileadmin/user_upload/fe/file/Vorlesung_vom_13.1._Restatement_of_the_law_thirds_tords_Product_Liability.pdf) հղումով՝ 20.05.2017թվականի դրությամբ:

արտադրողին և միայն վերջինիս անձը անհայտ  
լինելու դեպքում վաճառողին պահանջ  
ներկայացնելու մոտեցման  
հիմնավորվածությունը պետք է դիտարկել ոչ միայն  
իրավական, այլև տնտեսական հարթությունում՝  
հաշվի առնելով տվյալ երկրի ներքին և արտաքին  
շուկայի առանձնահատկությունները, ներմուծման  
և արտահանման ընդհանուր ծավալը: Այս  
հանգամանքի հաշվառմամբ մեր կողմից պետական  
իրավասու մարմիններ ներկայացված հարցումների  
արդյունքում ստացված տեղեկատվությունից պարզ  
է դառնում, որ ՀՀ-ում ներքին արտադրողներին և ՀՀ  
տարածք ապրանք ներմուծող օտարերկրյա  
արտադրողներին վերաբերյալ առանձնացված  
հաշվառում չի իրականացվում<sup>124</sup>, որոշ մարմիններ  
չեն տիրապետում սպառողական նպատակով  
ներմուծված ապրանքների վերաբերյալ  
տեղեկատվության<sup>125</sup> կամ հարցված  
տեղեկատվությունը վերջիններիս  
տիրապետության տակառկա է<sup>126</sup>:

Միաժամանակ, ՀՀ Ազգային վիճակագրական  
պետական խորհրդի տրամադրած տվյալների  
համաձայն ՀՀ-ում արդյունաբերությունը զբաղվող  
տնտեսվարող սուբյեկտների ընդհանուր քանակը  
կազմում է՝ 1) 2014 թվական -2741, 2) 2015 թվական -2802, 3) 2016  
թվական -2907, 4) 2017 թվական - 2866<sup>127</sup>: Մեր կողմից ստացվել է  
նաև տեղեկատվություն 2014-2017 թվականների ՀՀ  
ներմուծման և արտահանման ցուցանիշների

<sup>124</sup> Տե՛ս ՀՀ Կառավարությանն առընթեր պետական եկամուտների  
կոմիտեի 19.04.2017 թվականի թիվ 11-1/13375-17 գրությունը:

<sup>125</sup> Տե՛ս ՀՀ Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի  
տեղակալի 15.05.2017 թվականի 05/16.4/4620-17 գրությունը:

<sup>126</sup> Տե՛ս ՀՀ Տնտեսական մրցակցության պաշտպանության  
պետական հանձնաժողովի նախագահի 20.04.2017 թվականի ԱՇ-613  
գրությունը:

<sup>127</sup> Տե՛ս ՀՀ Ազգային վիճակագրության պետական խորհրդի  
(ներկայիս Վիճակագրական կոմիտե) 18.05.2017 թվականի 15-4/16-811  
գրությունը և «Հայաստանի վիճակագրական տարեգիրք», Երևան,  
2018, էջ 273:

վերաբերյալ : Մասնավորապես, այն կազմել է՝ 2014 թվական (ներմուծում՝ 3 915 949.3, արտահանում՝ 631 389.7), 2015 թվական (ներմուծում՝ 3 700 881.8, արտահանում՝ 791 923.0), 2016 թվական (ներմուծում՝ 3 786 745.2, արտահանում՝ 899 523.3)<sup>128</sup>, 2017 թվական (ներմուծում՝ 4 593 539.7, արտահանում՝ 1 073 459.5)<sup>129</sup>:

Ներկայացված տվյալներին կարող ենք եզրահանգել, որ ՀՀ-ում ապրանքների ներմուծման ծավալը գերազանցում է արտահանման ընդհանուր ծավալը, ինչը նշանակում է, որ ՀՀ ներքին շուկա ապրանքները մեծամասամբ ներմուծվում են այլ երկրներից: ՀՀ ապրանքների ներմուծման ծավալների աճը ենթադրում է, որ ապրանքների արտադրության ամբողջական զբաղվում են օտարերկրյա սուբյեկտները, հետևաբար ՀՀ օրենսդրության արտադրողին պահանջներ կայացնելու առաջնահերթության պահանջամրագրելը մեր կարծիքով հիմնավոր չէ՝ հաշվի առնելով օտարերկրյա արտադրողների զգալի քանակի պատճառով վերջիններիս անհատականացնելու, դատական գործընթաց սկսելու և վնասի հատուցում պահանջելու դժվարությունները: Այսինքն՝ տուժողին իր իսկ ընտրությամբ արտադրողին կամ վաճառողին պահանջներ կայացնելու հնարավորությունն ընձեռնելու ներկայիս մոտեցումը առավել արդարացի է և հիմնավոր:

<sup>128</sup> Տե՛ս ՀՀ Ազգային վիճակագրության պետական խորհրդի 18.05.2017 թվականի 15-4/16-811 գրությունը:

<sup>129</sup> Տե՛ս «Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուրը 2017 թվականին» (ըստ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի 4-նիշ դասակարգման), Վիճակագրական ժողովածու, Երևան, 2018, էջ 7: Տվյալները վերաբերելի են ներմուծված և արտահանված ապրանքների քաշին ու տոննային, և 24.01.2019 թվականի դրությամբ ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից հրապարակված են ներառյալ 2017 թվականին վերաբերելի ներմուծման և արտահանման ցուցանիշները:

Այս պիսոզ, քննարկելով պատճառված վնասի համար պատասխանատու սուբյեկտների միջև ընտրություն կատարելու և վերջիններիս տարանջատելու հարցը, անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ նաև վերջիններիս պատասխանատվության դրսևորման առանձնահատկություններին՝ հաշվի առնելով այս հարցի շուրջ մասնագիտական գրականության մեջ ձևավորված ոչ միատեսակ մոտեցումները: Մասնավորապես, անհրաժեշտ է քննարկել այն հարցը, թե Ապրանքների թերությունների հետևանքով վնաս պատճառելու դեպքում ե՞րբ կարող է ծագել անձանց բազմաթիվությունամբ պարտավորություն, և ըստ այդմ ի՞նչ առանձնահատկություններն են բնորոշ կլինի վնաս պատճառած անձանց պատասխանատվության դրսևորմանը:

Չարկելնշել, որ ըստ իրավախախտում թույլ տված պարտապանների միջև պատասխանատվությունը բաշխելու եղանակի առանձնացվող՝ բաժնային, համապարտ և լրացուցիչ պատասխանատվության առանձնահատկությունները բազմիցս քննարկման առարկա են դարձել նաև մասնագիտական գրականության մեջ:

Ինչպես նշվում է մասնագիտական գրականության մեջ բաժնային պատասխանատվությունն անձանց բազմաթիվությունամբ պարտավորությունները խախտելու դեպքում կիրառվող պատասխանատվության հիմնական տեսակն է, որը չի կիրառվում միայն այն դեպքում, երբ օրենքով, այլ իրավական ակտերով կամ պայմանագրով նախատեսված է համապարտ կամ լրացուցիչ պատասխանատվություն: Չամապարտ պատասխանատվությունը ծագում է երկու դեպքում՝ առաջին, համատեղ վնաս պատճառելու դեպքում, երկրորդ, եթե պարտավորության

համապարտությունը կամ պահանջի համիրավունքությունը նախատեսված է պայմանագրով կամ սահմանված է օրենքով, մասնավորապես, երբ անբաժանելի է պարտավորությունն առարկան <sup>130</sup>:

Սուբսիդիար (լրացուցիչ) պարտավորությունը ծագում է այն դեպքում, երբ հիմնական պարտապանի հետ միասին, օրենքով կամ պայմանագրով նախատեսված դեպքերում, կատարման պարտականություն է կրում լրացուցիչ պարտապանը, այն չափով, որ չափով պարտավորությունը չի կատարվել հիմնական պարտապանի կողմից <sup>131</sup>, և դրա առանձնահատկությունը պարտատիրոջ կողմից անմիջապես, հիմնական պարտապանին շրջանցելով, լրացուցիչ պարտապանին պահանջ ներկայացնելու անհնարինությունն է <sup>132</sup>:

Արտապայմանագրային պատասխանատվության դեպքում լրացուցիչ պատասխանատվությունը կիրառվում է միայն այն դեպքում, երբ պատասխանողը չունի համապատասխան միջոցներ կամ դրանք անբավարար են պարտատիրոջ պահանջները բավարարելու համար <sup>133</sup>:

Տեսություն մեջ ձևավորված տեսակետներին և քաղաքացիական օրենսդրության վերլուծությունը վկայում է, որ քաղաքացիաիրավական հարաբերություններում անձանց բազմաթիվությունը դեպքում գործում է բաժնային պատասխանատվության կանխավարկածը:

<sup>130</sup> Տե՛ս **Բարսեղյան Տ.Կ.**, Գույքային պատասխանատվության ինստիտուտի էվոլյուցիան և արդիական հիմնահարցերը, Երևան, Երևանի համալս.հրատ., 2006, էջեր՝ 85-86:

<sup>131</sup> Տե՛ս **Բարսեղյան Տ.Կ.**, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք: Առաջին մաս. Երրորդ հրատարակությունը - Երևանի պետ.համալս. - Եր.: Երևանի համալս.հրատ., 2006, էջ 421:

<sup>132</sup> Տե՛ս **Ананьева К.Я.**, "Исполнение обязательств с множественностью субъектов в них", Юридическая наука, Москва, 2012, N2, էջ 51:

<sup>133</sup> Տե՛ս **Բարսեղյան Տ.Կ.**, Գույքային պատասխանատվության ինստիտուտի էվոլյուցիան և արդիական հիմնահարցերը, Երևան, Երևանի համալս.հրատ., 2006, էջ 89:



Այլ կերպասած՝ պատասխանատվությունը բաժնային է, եթե օրենքով, այլ իրավական ակտերով կամ պայմանագրով ուղղակիորեն նախատեսված չէ համապարտկամ սուբսիդիար պատասխանատվություն:

Ինչպես արդեն իսկ նշել ենք, գրականության մեջ ապրանք վաճառողի կամ արտադրողի միջև ընտրություն կատարելու հնարավորությունը նձեռելը որակվել է որպես վերջիններիս համապարտ պատասխանատվության նախատեսում, մինչդեռ, մեր կարծիքով, ապրանք վաճառողը և արտադրողը, ինչպես նաև ապրանք արտադրողները կարող են կրել համապարտ պատասխանատվություն այն դեպքում, եթե տուժողին վնասը պատճառվի ապրանք վաճառողի և արտադրողի, կամ ապրանք արտադրողների կողմից համատեղ:

Այլ կերպասած՝ վնասի պատճառմանը և՛ ապրանք վաճառողի և՛ արտադրողի, կամ ապրանք արտադրողների մասնակցություն ունենալու դեպքում ծագում է անձանց բազմաթիվությունամբ պարտավորություն, և վերջիններս հանդես են գալիս որպես համապարտ պատասխանատվություն կրող սուբյեկտներ<sup>134</sup>: Ուշադրություն է արժանի այն, որ վնասը համատեղ պատճառելու դեպքում համապարտ պատասխանատվություն է նախատեսվում նաև այլ երկրների օրենսդրությամբ՝ օրինակ Գերմանիայի<sup>135</sup>, Ավստրիայի<sup>136</sup>, Շվեյցարիայի<sup>137</sup> և այլն:

<sup>134</sup> Ընդ որում, համապարտ պատասխանատվություն կրող սուբյեկտներ կարող են հանդիսանալ ոչ միայն ապրանք վաճառողը և արտադրողը, այլ նաև ապրանքը և դրա բաղկացուցիչ մասերը արտադրողները՝ հաշվի առնելով այն, որ ապրանք արտադրող է հանդիսանում ինչպես պատրաստի ապրանքը, այնպես էլ դրա բաղկացուցիչ մասը արտադրողը (օրինակ՝ փոշեկուլի արտադրական թերթության պատճառով անձին պատճառված վնասը պայմանավորված է լինում նաև դրա բաղկացուցիչ մաս հանդիսացող շարժիչ թերթության հետ, որը արտադրվել է այլ սուբյեկտի կողմից):

<sup>135</sup> Օրինակ՝ Գերմանիայի  Ապրանքների թերթությունների համար պատասխանատվության մասին  ակտի 5-րդ հոդվածով նախատեսվում է համապարտ պատասխանատվություն երկու և ավել ապրանք արտադրողների կողմից համատեղ վնաս

Մի ության 85/374/ Դիրեկտիվով և սահմանվում է, որ եթե երկու և ավելի սուբյեկտներ պատասխանատվություն են կրում նույն վնասի համար, նրանք հանդես են գալիս որպես համապարտ պարտապաններ<sup>138</sup>: Եվրոպական դեկլատային իրավունքի սկզբունքների 9:101 հոդվածի համաձայն և սպատասխանատվությունը համապարտ է, եթե վնասը ամբողջովին կամ դրամի մասը պատճառվել է երկու կամ ավել անձանց գործողությունների հետևանքով՝ մասնավորապես, եթե անձը գիտակցաբար մասնակցել է վնասի պատճառմանը, հրահրել կամ խրախուսել է այլ անձանց հակաօրինական գործողությունները կամ իր ինքնուրույն վարքագծով (կամ գործունեությամբ) տուժողին պատճառել է վնաս, որի պատճառմանը միաժամանակ մասնակցել է նաև մեկ այլ անձ<sup>139</sup>:

Ընդ որում, վնասը համատեղ պատճառելու դեպքում դրսևորվում է պասիվ համապարտություն՝ մի կողմում ի դեմս տուժողի, մյուս կողմում՝ ի դեմս ապրանք վաճառողի և արտադրողի (կամ արտադրողների), իսկ վերջիններիս համապարտ պատասխանատվության ենթարկելու իրավական հիմք է հանդիսանում Քաղաքացիական օրենսգրքի 1073-րդ հոդվածի 1-ին մասը, որը սահմանում է, որ վնասը

---

պատճառելու դեպքում: Այդ մասին առավել մանրամասն տե՛ս The Act of Germany on Product Liability, (Federal Law Gazette I, p. 2198), (15.12.1989), հասանելի է՝ [https://www.gesetze-im-internet.de/englisch\\_prodhafg/englisch\\_prodhafg.html](https://www.gesetze-im-internet.de/englisch_prodhafg/englisch_prodhafg.html) հղումով՝ 08.06.2017 թվականի դրությամբ:

<sup>136</sup> Այդ մասին առավել մանրամասն տե՛ս The Federal Act of Austria Governing the Liability for a Defective Product (Product Liability Act), (Federal Law Gazette No.99/1988), (21.01.1988), հոդված 10, հոդված 12, հասանելի է՝ [https://www.ris.bka.gv.at/Dokument.wxe?Abfrage=Erv&Dokumentnummer=ERV\\_1988\\_99](https://www.ris.bka.gv.at/Dokument.wxe?Abfrage=Erv&Dokumentnummer=ERV_1988_99) հղումով՝ 08.06.2018 թվականի դրությամբ:

<sup>137</sup> Այդ մասին առավել մանրամասն տե՛ս **Богданов Д.Е.**, "Солидарная деликтная ответственность с позиций справедливости", Цивилист, Москва, 2013, N 3, էջ 50:

<sup>138</sup> Տե՛ս **Council Directive 85/374/EEC** of 25 July 1985 on the approximation of the laws, regulations and administrative provisions of the Member States concerning liability for defective products, Official Journal L 210, 07/08/1985, P.0029-0033, հոդված 5:

<sup>139</sup> Տե՛ս Principles of European Tort Law, European Group on Tort Law, 2005, էջեր՝ 9-10, հասանելի է՝ <http://civil.udg.edu/php/biblioteca/items/283/PETL.pdf> հղումով՝ 09.06.2017 թվականի դրությամբ:

համատեղ պատճառած անձինք տուժողի առջև կրում են համապարտ պատասխանատվություն:

Հարկ է նշել, որ Քաղաքացիական օրենսգիրքը, նախատեսելով վնասը համատեղ պատճառելու համար համապարտ պատասխանատվություն, չի առանձնացնում այն հիմնական չափանիշները, որոնք կարող են հիմք ծառայել վնասը որպես համատեղ պատճառած որակելու և, ըստ այդմ, վնաս պատճառած սուբյեկտներին համապարտ պատասխանատվության ենթարկելու համար: Այս խնդիրը իր լուծումը չի ստացել նաև իրավակիրառ պրակտիկայում, այն պարագայում, երբ Ապրանքների թերությունների հետևանքով պատճառված վնասի համար համապարտ պատասխանատվության կիրառման տեսանկյունից այն ունի կարևոր նշանակություն:

Գրականության մեջ օրինակ նշվում է, որ վնասը համարվում է համատեղ պատճառված, եթե այն երկու կամ ավել անձանց հակաօրինական գործողությունների անբաժանելի հետևանք է: Ընդ որում, վնասը այս դեպքում անբաժանելի է, քանի որ անհնար է որոշել, թե որ գործողությունը, ինչ չափով է հանդիսացել առկա արդյունքի պատճառը<sup>140</sup>: Վնասը համատեղ պատճառված դիտարկելու համար պարտադիր չէ, որ վնաս պատճառողների գործողությունները հետապնդեն նույնանման նպատակ<sup>141</sup>: Մեր կարծիքով, համատեղ վնաս պատճառելու դեպքում ապրանք վաճառողին և արտադրողին (կամ ապրանք արտադրողներին) համապարտ պատասխանատվության ենթարկելու համար անհրաժեշտ են հետևյալ պայմանների միաժամանակյա առկայությունը՝

<sup>140</sup> Տե՛ս **Останина Е.А.**, "Некоторые аспекты возложения ответственности за совместно причиненный вред", сборник статей сер. "Анализ современного права" Исследовательский центр частного права, Статут, Москва, 2010, էջ 380:

<sup>141</sup> Տե՛ս **Богданов Д.Е.**, "Солидарная деликтная ответственность с позиций справедливости", Цивилист, Москва, 2013, N 3, էջ 49:

1. վնասի պատճառմանը հանգեցնող հակաիրավական գործողության անմիջական կատարումը և՛ ապրանք վաճառողի և՛ արտադրողի կամ ապրանք արտադրողների կողմից՝ անկախ այդ գործողությունների համաձայնեցված, նույնաբնույթ լինելու կամ միաժամանակյա ձեռնարկման հանգամանքից .

2. ապրանք վաճառողի և արտադրողի կամ ապրանք արտադրողների համատեղ մասնակցությունը նույն վնասի պատճառմանը՝ անկախ յուրաքանչյուրի մասնակցության աստիճանից :

Այլ կերպ ասած՝ իրավական նշանակություն չպետք է տրվի այն հանգամանքին, թե արդյոք ապրանք վաճառողը և արտադրողը (կամ արտադրողները) վնասի պատճառմանը հանգեցնող գործողությունները ձեռնարկել են միմյանց հետ համաձայնեցված կամ նախօրոք իմացել են մյուս սուբյեկտի կողմից վնասի պատճառմանը հանգեցնող վարքագիծ դրսևորելու մասին, իսկ ապրանք վաճառողին և արտադրողին (կամ ապրանք արտադրողներին) համապարտ պատասխանատվության ենթարկելու համար պարտադիր չէ, որ նրանց՝ համատեղ վնաս պատճառելուն ուղղված գործողությունները լինեն նույնաբնույթ: Այսպիսով, կարող ենք եզրահանգել, որ ապրանք վաճառողի և արտադրողի (կամ արտադրողների) կողմից վնասի պատճառմանը հանգեցնող հակաիրավական գործողության անմիջական կատարման և նույն վնասի պատճառմանը համատեղ մասնակցության դեպքում վերջիններս կրում են համապարտ պատասխանատվություն:

Ինչ վերաբերում է այն դեպքերին, երբ ապրանք վաճառողը և արտադրողը հանդես չեն գալիս որպես համապարտ պատասխանատվություն կրող սուբյեկտներ, և տուժողը իրացնում է վերջիններիս միջև ընտրություն կատարելու իր

իրավունքը, հարկ է նշել, որ անգամ ընտրություն արդյունքում ապրանք վաճառողի (կամ արտադրողի) դեմ վնասի հատուցման պահանջ ներկայացնելու դեպքում դատարանի՝ ներկայացված հայցը մերժելու մասին վճռի կայացումը տուժողին չի զրկում արտադրողի դեմ վնասի հատուցման պահանջ ներկայացնելու հնարավորությունից, քանի որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի<sup>142</sup> 126-րդ հոդվածի 1-ին մասի իրավակարգավորման լույսի ներքո միայն նույն անձանց միջև, նույն առարկայի մասին և միևնույն փաստական հիմքերով գործի վերաբերյալ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած եզրափակիչ դատական ակտի առկայությունն է հանգեցնում հայցադիմումի ընդունման մերժմանը:

Քննարկելով ապրանք վաճառողի և արտադրողի (արտադրողների) համապարտ պատասխանատվության հարցը, անհրաժեշտ ենք համարում նաև նշել, որ քաղաքացիական օրենսգրքի 1073-րդ հոդվածի 2-րդ մասով հնարավոր է համարվում տուժողի դիմումի հիման վրա և հօգուտ նրա համատեղ վնաս պատճառած անձանց վրա պատասխանատվությունը մասերով դնելը՝ դրանք որոշելով նույն օրենսգրքի 1074-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված կանոններին համապատասխան: Իր հերթին, քաղաքացիական օրենսգրքի 1074-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանվում է, որ համատեղ պատճառած վնասը հատուցած վնաս պատճառողն իրավունք ունի մյուս վնաս պատճառողներին պահանջել տուժողին վճարված հատուցման բաժինը՝ այդ վնասը պատճառողներին մեղքի աստիճանին համապատասխանող չափով: Մեղքի աստիճանը որոշելու անհնարիսության դեպքում բաժինները ճանաչվում են հավասար:

<sup>142</sup> Ընդունվել է 09.02.2018թ.: Ուժի մեջ է մտել 09.04.2018թ.: ՀՀ ՊՏ 2018.03.05/16(1374) Հոդ.208:

Այլ կերպ ասած՝ քաղաքացիական օրենսդրությունամբ նախատեսվում է համապարտ պատասխանատվությունը բաժնային ու վոխարինելու հնարավորություն, իսկ Քաղաքացիական օրենսգրքի 1073-րդ և 1074-րդ հոդվածների 2-րդ մասերի համադրված վերլուծությունը ցույց է տալիս, որ վնասը համատեղ պատճառած անձանց վրա պատասխանատվությունը մասերով դնելը կարող է համարվել իրավաչափաց առաջատու և ժողովրդի հիման վրա, այլ ոչ թե դատարանի սեփական նախաձեռնությունամբ, և միայն հօգուտ տուժողի՝ այսինքն վերջինիս շահերի հաշվառմամբ: Համապարտ պատասխանատվությունը բաժնային ու վոխարինելու դեպքում վնասը համատեղ պատճառած անձանց բաժինները որոշվում են վերջիններիս մեղքի աստիճանին համապատասխանող չափով, իսկ այն որոշելու անհնարինություն դեպքում՝ ճանաչվում հավասար: Մենք այն տեսակետին ենք, որ այն դեպքերում, երբ արտապայմանագրային պատասխանատվությունը վրա է հասնում առանց մեղքի՝ այդ թվում Ապրանքների թերությունների հետևանքով համատեղ վնաս պատճառելու դեպքում, համապարտ պատասխանատվությունը չի կարող վոխարինվել բաժնային պատասխանատվությամբ, ինչը բացատրվում է նրանով, որ բաժնային պատասխանատվության դեպքում առաջադրվում է վնաս պատճառողների մեղքի աստիճանը որոշելու պահանջ (մեղքի աստիճանը որոշելու անհնարինություն դեպքում՝ բաժինների հավասարության ճանաչման պահանջ): Ընդ որում, Քաղաքացիական օրենսգրքի 1074-րդ հոդվածի 2-րդ մասում հստակ նշվում է մեղքի աստիճանը որոշելու մասին:

Բացի այդ, քաղաքացիական օրենսդրության ընդհանուր տրամաբանությունը հոլշում է, որ առանց մեղքի պատասխանատվության նախատեսումը պայմանավորված է տուժողի շահերի համապարփակ պաշտպանությունն ապահովելու անհրաժեշտությամբ, ինչից տրամաբանորեն բխում է, որ վնասը համատեղ պատճառելու դեպքում ևս օրենսդրական կարգավորումները պետք է ուղղված լինեն այդ նպատակի իրացմանը, ինչը կարող է ապահովվել համապարտ, այլ ոչ թե բաժնային պատասխանատվության նախատեսման միջոցով: Վնասը համատեղ պատճառելու դեպքում համապարտ պատասխանատվության նախատեսումը ապահովվում է պատճառված վնասը ամբողջական ծավալով հատուցելու հնարավորությունը ոչ միայն այն պատճառով, որ և՛ ապրանք վաճառողը և՛ արտադրողը (կամ արտադրողները) հանդես են գալիս որպես համապարտ պարտականություն կրող սուբյեկտներ, այլև այն պատճառով, որ ամբողջական ծավալով վնասի հատուցում չստանալու պարագայում տուժողը կարող է վնասի չհատուցված մասը պահանջել վնասի հատուցման պարտականություն կրող մյուս սուբյեկտից, իսկ վնասի հատուցման պարտականությունը կարող է դադարել բացառապես հատուցման պարտականության լրիվ կատարման դեպքում:

Վնասը համատեղ պատճառելու դեպքում համապարտ պատասխանատվությունը բաժնայինով փոխարինելու օրենսդրական կարգավորումը արդարացիորեն քննադատության է արժանացել նաև մասնագիտական գրականության մեջ այն պատճառաբանությամբ, որ այն չի բխում տուժողի շահերից, իրականացվում է ի օգուտ վնաս պատճառողների, իսկ տուժողի կողմից բաժնային պատասխանատվության կիրառմանը

համաձայնությունն տալը հանդիսանում է օրենսդրությանմբ տուժողին տրված երաշխիքների միզգալիմասից հրաժարում<sup>143</sup>:

Ուշադրության է արժանի նաև այն, որ Եվրոպական դեկլիտային իրավունքի սկզբունքների 9:101-րդ հոդվածով ևս վնասի հատուցման հարաբերություններում բաժնային պատասխանատվության կիրառումը սահմանվում է որպես ընդհանուր կանոնից բացառություն: Մասնավորապես, նշված հոդվածի համաձայն վնասը դիտարկվում է որպես համատեղ պատճառված, եթե բացակայում է մի քանի անձանց պատասխանատվության բաժինը որոշելու հնարավորությունը նձեռող որևէ ողջամիտ հիմք: Բաժնային պատասխանատվությունը կիրառվում է բացառապես այն դեպքում, երբ վնաս պատճառողը ապացուցում է, որ իր կողմից պատճառված վնասը չի հանդիսանում համատեղ պատճառված, իսկ բաժնային պատասխանատվության դեպքում յուրաքանչյուր սուբյեկտ հատուցում է տուժողին պատճառված վնասը իր բաժնի համար որոշված չափով<sup>144</sup>: Մենք կարծում ենք, որ ապրանք վաճառողի և արտադրողի (կամ արտադրողների) համատեղ վնաս պատճառելու դեպքում վերջիններիս համապարտ պատասխանատվության ենթարկելու և այն բաժնայինով փոխարինելու հնարավորության հարցերի վերաբերյալ իրականացված վերլուծության արդյունքում առաջ քաշված վերը նշված եզրահանգումները կարևոր նշանակություն ունեն նաև իրավակիրառ ճիշտ պրակտիկա ձևավորելու համար՝ հաշվի առնելով այն, որ

<sup>143</sup> Այդ մասին առավել մանրամասն տե՛ս **Останина Е.А.**, "Некоторые аспекты возложения ответственности за совместно причиненный вред", сборник статей сер. "Анализ современного права" Исследовательский центр частного права, Статут, Москва, 2010, էջեր՝ 376-377:

<sup>144</sup> Տե՛ս Principles of European Tort Law, European Group on Tort Law, 2005, էջեր՝ 9-10, հասանելի է՝ <http://civil.udg.edu/php/biblioteca/items/283/PETL.pdf> հղումով՝ 09.06.2017 թվականի դրությամբ:



դատական պրակտիկայում ևս վնասը համատեղ պատճառելու դեպքում համապարտ պատասխանատվության և այն բաժնայինով փոխարինելու դրույթները ունեցել են սխալ կիրառում և մեկնաբանություն:

Մասնավորապես, ԵԿԴ/2860/02/08 քաղաքացիական գործով հայցվորը վնասի հատուցման պահանջ է ներկայացրել դատարան՝ ընդդեմ Սամսունգ \$իրմային խանութի և Յայաստանի էլեկտրական ցանցեր ՓԲԸ-ի: Գործի փաստական հանգամանքները հանգում են նրան, որ հայցվորը Սամսունգ \$իրմային խանութից ձեռք է բերել օդորակիչ, որը դադարել է աշխատել հոսանքի տատանման հետևանքով: Դատարանը հաստատված է համարել այն, որ մալուխի խզման պատճառով տեղի է ունեցել վթար, որի պատճառով օդորակիչը դադարել է աշխատել, քանի որ վնասվել են օդորակիչի կոմպրեսորը, կառավարման հանգույցը: Յաշվի առնելով նշվածը, Յայցվորի և Յայաստանի էլեկտրական ցանցեր ՓԲԸ-ի միջև կնքված էլեկտրաէներգիայի առքուվաճառքի պայմանագիրը<sup>145</sup>, դատարանը գտել է, որ գործով պատասխանողները քաղաքացիական օրենսգրքի 1073-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն որպես վնասը համատեղ պատճառած անձինք կրում են համապարտ պատասխանատվություն: Բացի այդ, ղեկավարվելով քաղաքացիական օրենսգրքի 1074-րդ հոդվածի 2-րդ մասով, դատարանը հաստատված է համարել այն, պատասխանողները չեն ապացուցել, որ օդորակիչի խափանումը իրենց մեղքով չի եղել և գտել է, որ պատասխանողները կրում են համապարտ պատասխանատվություն: Դատարանը նաև գտել է, որ

<sup>145</sup> Պայմանագրով վաճառողը պարտավորվել է մատակարարել անընդհատ և տեխնիկական նորմերին համապատասխան որակի և անհրաժեշտ քանակի էլեկտրաէներգիա: Այդ մասին առավել մանրամասն տե՛ս Երևան քաղաքի կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԵԿԴ/2860/02/08 քաղաքացիական գործով 24.11.2008 թվականի վճիռը:

հատուցման բաժինները պետք է ճանաչվեն հավասար, քանի որ հնարավոր չէ որոշել պատասխանողների մեղքի աստիճանը<sup>146</sup>: Նշված գործի ուսումնասիրությունը վկայում է, որ դատարանի կողմից հստակ չի պատճառաբանվել, թե ինչով է պայմանավորված հայցվորին պատճառված վնասի՝ որպես համատեղ պատճառված վնաս դիտարկելը, քննարկման առարկա չի դարձվել նաև վնաս պատճառած անձանց մասնակցության խնդիրը: Մասնավորապես, □Սամսոնգ □ \$իրմային խանութին որպես համապարտ պատասխանատվություն կրող սուբյեկտ դիտարկելով, դատարանը ընդհանրապես չի մատնանշել, թե վնաս պատճառելու հանգեցնող ինչ հակաիրավական վարքագիծ է վերջինս դրսևորել: Բացի այդ, դատարանը Քաղաքացիական օրենսգրքի 1074-րդ հոդվածի 2-րդ մասի կիրառումը պայմանավորել է պատասխանողների մեղքի աստիճանը որոշելու անհնարինությունը, և դա այն պարագայում, երբ ի սկզբանե մեղավորության հարցը չպետք է հանդիսանար ապացուցման առարկա, և, ըստ այդմ, պետք է բացառվեր համապարտ պատասխանատվությունը բաժնային ովֆոխարինելու հնարավորությունը:

Այս տեսանկյունից ուշադրության է արժանի նաև ամերիկյան դատական պրակտիկան, որտեղ Ապրանքների թերությունների հետևանքով պատճառված վնասի դեպքում պատասխանատու սուբյեկտների պատասխանատվության չափը որոշվում է տոկոսային հարաբերության մեջ: Օրինակ՝ *Sindell v Albott Laboratiroes* (1980) գործով տուժողի առողջությանը վնաս է պատճառվել հղիության ընթացքում սաղմի համար վտանգ ներկայացնող դեղամիջոց օգտագործելու պատճառով: Հայցը ներկայացվել է

<sup>146</sup> Տե՛ս Երևան քաղաքի կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԵԿԴ/2860/02/08 քաղաքացիական գործով 24.11.2008 թվականի վճիռը:

ընկերություններին մի քանիսի դեմ: Գործի քննությունը նախատեսվում է Կալիֆոռնիայի գերագույն դատարանը ղեկավարվել է այն կանխավարկածով, որ վտանգավոր դեղամիջոցը կարող էր արտադրված լինել գործով պատասխանողների կողմից, ովքեր միասին գրավել են շուկայի մեծ մասը, և եթե պատասխանողները չկարողանան ապացուցել հակառակը, ապա նրանցից յուրաքանչյուրը կարող է պատասխանատվություն ենթարկվել տոկոսային հարաբերակցությամբ՝ հաշվի առնելով շուկայում (տվյալ դեղամիջոցի հետ կապված) վերջիններիս պատկանող մասնաբաժինը<sup>147</sup>:

Վերլուծելով ապրանք վաճառողի և արտադրողի (արտադրողների) համապարտ պատասխանատվության հարցը, անդրադառնանք նաև ռեգրեսսի (հետադարձ պահանջի) իրավունքի խնդրին: Ռեգրեսսային պարտավորությունների խնդիրը բազմիցս քննարկման առարկա է դարձել նաև գրականության մեջ: Գրականության մեջ նշվում է, որ քաղաքացիական օրենսդրությամբ նախատեսված չէ Ռեգրեսսային պարտավորությունների կամ Ռեգրեսսի իրավական բնորոշումը, բացահայտված չէ դրա իրավական բնույթը, համակարգված չեն ռեգրեսսային պարտավորությունները, այլ առանձին դեպքերում նշվում է միայն այս կամ այն քաղաքացիական հարաբերության՝ ռեգրեսսի արդյունքում առաջանալը<sup>148</sup>:

Ա.Վ. Սախարովը նշում է, որ ռեգրեսսային պարտավորությունը ինքնուրույն բնույթի քաղաքացիաիրավական պարտավորություն է, որի ուժով ռեգրեսսի են տրվում պարտատիրոջ օգտին կատարում

<sup>147</sup> Այս գործի մասին առավել մանրամասն տե՛ս **Богданов Д.Е.**, "Солидарная деликтная ответственность с позиций справедливости", Цивилист, Москва, 2013, N 3, էջ 54:  
<sup>148</sup> Տե՛ս **Сахаров А.В.**, "Классификация регрессных обязательств в российском гражданском праве", Пробелы в российском законодательстве, Издательский дом "Юр-ВАК", Москва, 2010, N 2, էջ 134:

Ե ռ Ե գ ր Ե ս ա տ ի պ ար տ ա վ ո ր ո ւ թ յ ո ւ ն ը և ձ Ե ռ ք Ե ք Ե ր ո ւ մ ռ Ե գ ր Ե ս ա տ ի դ Ե մ հ Ե տ ա դ ար ձ պ ա հ ա ն ջ ն Ե ր կ ա յ ա գ ն Ե Լ ո ւ ի ր ա վ ո ւ ն ք <sup>149</sup>: Յ ո ւ .Վ . Ժ ո ւ ր ա վ Լ և ա ն ն շ ո ւ մ Ե , ո ր ռ Ե գ ր Ե ս ա յ ի ն պ ար տ ա վ ո ր ո ւ թ յ ո ւ ն ն Ե ր ը ա ռ ա ջ ա ն ո ւ մ Ե ն ո չ մ ի ա յ ն ա յ ն դ Ե պ ք ո ւ մ , Ե ր ք պ ար տ ա վ ո ր ո ւ թ յ ա ն կ ա տ ար մ ա ն պ ար տ ա կ ա ն ո ւ թ յ ո ւ ն ը դ ր վ ա ծ Ե մ Ե կ ա ն ձ ի վ ր ա , ք ա յ ց ի ր ա կ ա ն ա գ վ ո ւ մ Ե ա յ Լ ս ո ւ ք յ Ե կ տ ի կ ո ղ մ ի ց , ա յ Լ և ա յ ն դ Ե պ ք ո ւ մ , Ե ր ք պ ար տ ա վ ո ր ո ւ թ յ ո ւ ն ը մ Ե կ ս ո ւ ք յ Ե կ տ ը կ ա տ ար ո ւ մ Ե մ Ե կ ա յ Լ ա ն ձ ի մ Ե ղ ք ո վ <sup>150</sup>:

Ա ն դ ր ա դ ա ռ ն ա Լ ո վ ո ւ Ե ռ Ե գ ր Ե ս ա յ ի ն պ ար տ ա վ ո ր ո ւ թ յ ո ւ ն ն Ե ր ի դ աս ա կ ար գ մ ա ն ը ` հ Ե ղ ի ն ա կ ն Ե ր ը ը ս տ ա ռ ա ջ ա գ մ ա ն հ ի մ ք ի ա ռ ա ն ձ ն ա գ ն ո ւ մ Ե ն ռ Ե գ ր Ե ս ա յ ի ն պ ար տ ա վ ո ր ո ւ թ յ ո ւ ն ն Ե ր , ո ր ո ն ք ա ռ ա ջ ա ն ո ւ մ Ե ն պ ա յ մ ա ն ա գ ր ա յ ի ն , ար տ ա պ ա յ մ ա ն ա գ ր ա յ ի ն կ ա մ և ` պ ա յ մ ա ն ա գ ր ա յ ի ն և ` ար տ ա պ ա յ մ ա ն ա գ ր ա յ ի ն հ ար ա ք Ե ր ո ւ թ յ ո ւ ն ն Ե ր ի հ ա մ ա տ Ե ք ս տ ո ւ մ (օ ր ի ն ա կ ` հ ա մ ա պ ար տ պ ար տ ա կ ա ն ո ւ թ յ ա ն դ Ե պ ք ո ւ մ) <sup>151</sup>: Գ ր ա կ ա ն ո ւ թ յ ա ն մ Ե ջ ո ր պ Ե ս ար տ ա պ ա յ մ ա ն ա գ ր ա յ ի ն պ ա տ ա ս խ ա ն ա տ վ ո ւ թ յ ա ն ք ն ո ր ո շ ա ռ ա ն ձ ն ա հ ա տ կ ո ւ թ յ ո ւ ն ա ռ ա ն ձ ն ա գ վ ո ւ մ Ե ռ Ե գ ր Ե ս ա յ ի ն պ ար տ ա վ ո ր ո ւ թ յ ո ւ ն ն Ե ր ի ա ռ ա ջ ա գ մ ա ն հ ն ար ա վ ո ր ո ւ թ յ ո ւ ն ը վ ն ս ի հ ա տ ո ւ ց մ ա ն պ ար տ ա կ ա ն ո ւ թ յ ո ւ ն կ ր ո ղ ս ո ւ ք յ Ե կ տ ի կ ո ղ մ ի ց ա յ Լ ա ն ձ ի կ ո ղ մ ի ց պ ա տ ճ ա ռ ա ծ վ ն ս ը հ ա տ ո ւ ց Ե Լ ո ւ դ Ե պ ք ո ւ մ <sup>152</sup>:

Պ Ե տ ք Ե ն շ Ե Լ , ո ր ք ա ղ ա ք ա ց ի ա կ ա ն օ ր Ե ն ս գ ր ք ո ւ մ ռ Ե գ ր Ե ս ի (հ Ե տ ա դ ար ձ պ ա հ ա ն ջ ի ) ի ր ա վ ո ւ ն ք ի կ ար գ ա վ ո ր մ ա ն ը ն վ ի ր վ ա ծ Ե ա ռ ա ն ձ ի ն հ ո դ վ ա ծ : Մ ս ս ն ա վ ո ր ա պ Ե ս , ք ա ղ ա ք ա ց ի ա կ ա ն օ ր Ե ն ս գ ր ք ի 1074-ր դ

<sup>149</sup> Տ Ե ` ս Ս ա հ ա ր ո Վ .Յ ., "Правовое регулирование регрессных обязательств, возникающих в сфере предпринимательской деятельности": автореф. дисс. к.ю.н: Москва, 2010, Է ջ 8-10:

<sup>150</sup> Տ Ե ` ս Ջ ա ր ա Վ և ա Յ յ .Յ ., "Регресс в гражданском праве России": автореф. дисс. к.ю.н.: Москва, 2009, Է ջ 8:

<sup>151</sup> Տ Ե ` ս Ս ա հ ա ր ո Վ .Յ ., "Классификация регрессных обязательств в российском гражданском праве." Пробелы в российском законодательстве, Издательский дом "Юр-ВАК", Москва, 2010, N 2, Է ջ 136:

<sup>152</sup> Տ Ե ` ս Ն Ե Վ ջ ո ճ ի ն Ե .Լ ., "Понятие, специфические особенности и система внедоговорных обязательств из причинения вреда по законодательству Российской Федерации", Вестник Омского университета, Серия "Право", Омск, 2010, N 2 (23), Է ջ 63:

հոդվածից բխում է, որ ռեգրեսի իրավունք է ընձեռվում՝

1. այլ անձի պատճառած վնասը հատուցած անձին .

2. համատեղ պատճառած վնասը հատուցած վնաս պատճառողին .

3. Հայաստանի Հանրապետությանը՝ հետաքննության, նախաքննության, դատախազության մարմինների կամ դատարանի պաշտոնատար անձի պատճառած վնասը հատուցելու դեպքում .

Նույն հոդվածի 4-րդ մասում հստակ առանձնացվում են ռեգրեսի իրավունք չունեցող սուբյեկտների շրջանակը՝ տասնչորս տարեկան չդարձած, տասնչորսից մինչև տասնութ տարեկան անչափահասների և անգործունակ ճանաչված քաղաքացու պատճառած վնասի հատուցման պարտականություն կրող սուբյեկտները :

Ուշադրություն է արժանի, որ քաղաքացիական օրենսգրքի՝ Ապրանքների թերությունների հետևանքով պատճառված վնասի հատուցման կարգավորմանն ուղղված դրույթներում բացակայում է որևէ կարգավորում վնասը հատուցած անձի հետադարձ պահանջի իրավունքի վերաբերյալ : Վերը նշվածի հետ կապված, Վ.Գ. Կորենևան, խոսելով ՌԴ քաղաքացիական օրենսգրքի նույնաբնույթ իրավակարգավորման վերաբերյալ, նշում է, որ օրենսդիրը որևէ նորմ չի նախատեսել ապրանք վաճառողի կամ արտադրողի հետադարձ պահանջների վերաբերյալ, և, ըստ այդմ, եզրահանգում, որ քաղաքացիական օրենսդրությամբ այդ հարցի կարգավորմանն ուղղված դրույթին լայն մեկնաբանություն տալը և ռեգրեսի իրավունք ճանաչելը անհիմն է<sup>153</sup>:

<sup>153</sup> Տե՛ս **Коренева В.Г.**, "Ответственность за недостатки товаров, работ и услуг как особый вид деликтной ответственности в гражданском праве Российской Федерации", Бизнес в законе, Экономико-юридический журнал, Москва, 2011, №2, էջ 94:

Մենք համաձայն չենք հեղինակի այս տեսակետին հետևյալ պատճառաբանությամբ՝

1. Արտապայմանագրային հարաբերություններին շրջանակում ռեգրեսի իրավունք չունեցող սուբյեկտների սպառիչ ցանկը նախատեսված է Քաղաքացիական օրենսգրքի 1074-րդ հոդվածի 4-րդ մասով, իսկ Ապրանքների թերություններին հետևանքով պատճառած վնասը հատուցած սուբյեկտները այդ հոդվածում չեն առանձնացվում որպես ռեգրեսի իրավունք չունեցող սուբյեկտներ.

2. Բացահայտելով, որ ապրանք վաճառողը և արտադրողը (կամ արտադրողները) կարող են կրել համապարտ պատասխանատվություն, պետք է նկատի ունենալ, որ Քաղաքացիական օրենսգրքի 1074-րդ հոդվածի ուժով համատեղ պատճառած վնասը հատուցած անձը ունի հետադարձ պահանջի իրավունք, ինչը համահունչ է նաև Քաղաքացիական օրենսգրքի 364-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ համապարտ պատասխանատվության դեպքում պարտականությունը կատարած անձի հետադարձ պահանջի իրավունքի առկայության կանխավարկածին (բացառությամբ այն դեպքի, երբ համապարտ պարտականների հարաբերություններին էությունը հիմնված չէ ընդհանուր դրույթով):

Այսպիսով, կարող ենք եզրահանգել, որ Ապրանքների թերություններին հետևանքով վնասը համատեղ պատճառելու դեպքում վնասը հատուցած սուբյեկտը օժտված է հետադարձ պահանջի իրավունքով, իսկ վնասը հատուցած անձի ռեգրեսի իրավունքը պետք է ծագած համարել համապարտ պարտականության լրիվ կատարման արդյունքում՝ այլ կերպ ասած վնասի ամբողջական հատուցումից հետո:

**§2.2. Պատասխանատվությունը հիմքերը**

Իրավունքի տեսությունն ամեն  
 պատասխանատվությունն ինչ ազատումը բնորոշվում է  
 որպես իրավունքի վերականգնման, վնասի  
 հատուցման պարտականության կամ կատարված  
 իրավախախտման համար նախատեսված այլ բացասական  
 ներգործություն միջոցների կիրառման  
 անհրաժեշտությունն վերացում:  
 Պատասխանատվությունն ինչ ազատելու նորմերը  
 կոչված են ապահովելու քաղաքացիաիրավական  
 պատասխանատվության միջոցների կիրառման  
 օրինականությանը և նպատակահարմարությունը,  
 նպաստելու քաղաքացիական իրավունքների  
 պաշտպանության մեխանիզմների իրացմանը,  
 քաղաքացիական շրջանառության կայունությունը:  
 Պատասխանատվությունն ինչ ազատվելու ինստիտուտը  
 կարևոր դերակատարում ունի նաև իրավունքի  
 արդարության սկզբունքի իրացման  
 տեսանկյունից<sup>154</sup>: Պատասխանատվությունն ինչ  
 ազատելու ինստիտուտը իրավական նորմերի  
 համակցությունն է, որը կապված է քաղաքացիական  
 շրջանառության մասնակիցներին պատճառած վնասի  
 հատուցման պարտականությունն ինչ ազատելու հետ<sup>155</sup>:  
 Ըստ այդմ, պատասխանատվությունն ինչ ազատվելու  
 հիմքերն այն իրավաբանական փաստերն են, որոնց  
 հետ կապվում է կատարված իրավախախտման համար  
 ներգործությունն ինչ ազատվելու պարտականությունն ինչ  
 ազատումը<sup>156</sup>:  
 Քաղաքացիաիրավական պատասխանատվությունն ինչ  
 ազատումը տեղի է ունենում այն դեպքում, երբ առկա

<sup>154</sup> Տե՛ս **Богданов Д.В.**, "Освобождение от ответственности и ее исключение в российском гражданском праве": автореф. дис. канд. юрид. наук, Пермь, 2012, էջ 3, էջ 16:

<sup>155</sup> Տե՛ս **Розина С.В.**, "Институт освобождения от гражданско-правовой ответственности.": автореф. дис. канд. юрид. наук, Москва, 2006, էջ 7:

<sup>156</sup> Տե՛ս **Богданов Д.В.**, նշված աշխատ., էջ 17:

են դրավրահասնելու բոլոր պայմանները, բայց որոշ պատճառներով այն չի կարող իրացվել <sup>157</sup>:

Հաշվի առնելով այն, որ Ապրանքների թերույթյունների հետևանքով պատճառված վնասի դեպքում օրենսդրորեն սահմանվում է պատասխանատվության առանձնահատուկ կարգ՝ առանց մեղքի պատասխանատվության, հատուկ ուսումնասիրության կարիք ունի վնաս պատճառած անձի պատասխանատվության հիմքով ելնու հարցը: Ապրանքների թերույթյունների հետևանքով պատճառված վնասի դեպքում վնաս պատճառած անձի պատասխանատվության հիմքերին անդրադարձ է կատարվում Քաղաքացիական օրենսգրքի 1091-րդ հոդվածում, որը սահմանում է, որ Ապրանք վաճառողը (արտադրողը, աշխատանքներ կատարողը կամ ծառայություններ մատուցողը) ազատվում է պատասխանատվությունից, եթե ապացուցում է, որ վնասը ծագել է անհաղթահարելի ուժի կամ սպառողի կողմից Ապրանքների օգտագործման կամ դրանց պահպանման համար սահմանված կանոնները խախտելու հետևանքով:

Այսպիսով, Քաղաքացիական օրենսգրքը, որպես վնաս պատճառած անձի պատասխանատվության հիմք ազատվելու հանգամանքներ առանձնացնում է անհաղթահարելի ուժը կամ սպառողի կողմից Ապրանքների օգտագործման, պահպանման կանոնների խախտում թույլ տալը: Ընդ որում, վնաս պատճառած անձը պատասխանատվության հիմքով ազատվելու հանգամանքները վնաս պատճառած անձին պատասխանատվության հիմքեր են՝ հաշվի առնելով այն,

---

<sup>157</sup> Տե՛ս **Огнева К.О.**, "Исключение и освобождение от ответственности за нарушение договора": автореф. дис. канд. юрид. наук, Москва, 2012, էջ 13:



որ քաղաքացիական օրենսգրքի 60-րդ գլուխը, կարգավորելով վնասի հատուցման ընդհանուր դրույթները, նախատեսում է նաև վնասի հատուցման մերժման կամ պատասխանատվության չունից ազատման այլ ընդհանուր հիմքեր<sup>158</sup>: Այս տեսանկյունից մենք համամիտ ենք Ա.Ռ. Թովմասյանի հետ, ով անդրադառնալով ՌԴ քաղաքացիական օրենսգրքի համանման նորմի վերլուծությանը, գտնում է, որ այն չպետք է մեկնաբանվի որպես վնաս պատճառած անձին պատասխանատվության չունից ազատելու՝ քաղաքացիական օրենսդրությամբ նախատեսված այլ հիմքերի կիրառման հնարավորությունը բացառող նորմ<sup>159</sup>:

Ինչպես վերը նշեցինք, Ապրանքների թերությունների հետևանքով պատճառված վնասի դեպքում վնաս պատճառած անձը կարող է ազատվել պատասխանատվության չունից անհաղթահարելի ուժի առկայության դեպքում: Մասնագիտական գրականության մեջ անհաղթահարելի ուժի առկայությունը բազմիցս դարձել է քննարկման առարկա: Այն սովորաբար բնորոշվում է որպես այնպիսի որակյալ պատահար, որն աչքի է ընկնում օբյեկտիվ անկասելիությամբ և արտակարգությամբ: Օբյեկտիվորեն անկասելի լինելու հանգամանքը նշանակում է, որ խոսքը այնպիսի երևույթի մասին է, որի վնասակար հետևանքներից անձը իր ունեցած

<sup>158</sup> Օրինակ՝ վնասի հատուցումը կարող է մերժվել, եթե վնասը պատճառվել է տուժողի խնդրանքով կամ համաձայնությամբ (1058 հոդված 4-րդ մաս), վնասը չի հատուցվում, եթե այն ծագել է տուժողի դիտավորության հետևանքով (1076-րդ հոդված 1-ին մաս), տուժողի կոպիտ անզգուշության առկայության և վնաս պատճառողի մեղքի բացակայության այն դեպքերում, երբ պատասխանատվության չունը վրա է հասնում մեղքից անկախ, հատուցման չափը կարող է նվազեցվել կամ վնասի հատուցումը կարող է մերժվել, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով (1076-րդ հոդվածի 2-րդ մաս 2-րդ պարբերության), վնասը ենթակա չէ հատուցման, եթե այն պատճառվել է անհրաժեշտ պաշտպանության վիճակում և եթե չեն գերազանցվել դրա սահմանները (1060 հոդված):

<sup>159</sup> Տե՛ս **Товмасын А.Р.**, "Обязательства по возмещению вреда, причиненного недостатками товара (работы, услуги).", дис. канд. юрид. наук, Москва, 1999, էջեր՝ 183-184:

միջոցներով խուսափել չի կարող: Արտակարգ դեպքերի  
հատկանիշը ընդգծում է, որ այդ երևույթները  
համեմատաբար սակավ են տեղի ունենում և չեն  
մտնում այն սովորական երևույթների շրջանակում,  
որոնցով ընթանում է մարդկանց բնական  
գործունեությանը<sup>160</sup>:

Անհաղթահարելի ուժի առկայության դեպքում  
պատասխանատվությունն իր արգիս  
անդրադարձել է նաև ՀՀ վճռաբեկ դատարանը, նշելով,  
որ անհաղթահարելի ուժի հիմքով  
պատասխանատվությունն իր արգիս  
պայմանավորված է արտակարգ և անկանխելի,  
այսինքն՝ այնպիսի բացառիկ, անսովոր, եզակի  
հանգամանքների հայտ գալով, որոնք  
հաղթահարելը տվյալ պարագայում օբյեկտիվորեն  
անհնարին է<sup>161</sup>:

Անհաղթահարելի ուժի տարկվող երևույթները  
սովորաբար բաժանվում են երեք հիմնական խմբի՝ 1)  
բնական երևույթներ (երկրաշարժ, ջրհեղեղ,  
ցունամի, սողանք, հրաբուխ, հրդեհ և այլն), 2)  
սոցիալական բնույթի հանգամանքներ  
(խռովություններ, զանգվածային  
անկարգություններ, գործադուլներ, պատերազմներ,  
ահաբեկչական գործողություններ և այլն), 3)  
պետական մարմինների գործողություններ  
(արտահանման և ներմուծման արգելք,  
սահմանափակում, բեռնափոխադրումների արգելում  
և այլն)<sup>162</sup>:

Արտապայմանագրային պատասխանատվության՝  
այդ թվում Ապրանքների թերությունների

<sup>160</sup> Տե՛ս **Բարսեղյան Տ.Կ.**, Հայաստանի Հանրապետության  
քաղաքացիական իրավունք, Առաջին մաս. չորրորդ  
հրատարակություն, Երևանի պետ. համալս., Եր.: Սիգրան Մեծ  
հրատ., 2014, էջ 538:

<sup>161</sup> Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 27.11.2015թ. թիվ ԵԵԴ/0888/02/14  
քաղաքացիական գործով արտահայտած դիրքորոշումը:

<sup>162</sup> Տե՛ս **Богданов Д.В.**, նշված աշխատ., էջ 28:

հետևանքով վնաս պատճառելու դեպքում, որպես  
անհաղթահարելի ուժ կարող են դիտարկվել տվյալ  
պայմաններում այնպիսի արտակարգ և անկանխելի  
հանգամանքները, որոնց ազդեցությունը  
հանգեցրել է վնասի պատճառմանը: Ըստ այդմ, վնաս  
պատճառած անձի պատասխանատվությունն ի  
ագատվելու հարցը քննելիս պետք է պարզել, թե  
արդյոք տվյալ հանգամանքն իր բնույթով արտակարգ  
կամ այլ կերպ ասած արտասովոր, բացառիկ է եղել,  
այնուհետ պետք է պարզել, թե արդյոք այն  
անկանխելի է եղել՝ գնահատելով և՛ տվյալ  
հանգամանքի վրա հասնելու  
անխուսափելիությունը, և՛ դրա հետևանքների  
անկանխելիությունը, անկասելիությունը: Վնաս  
պատճառած անձի պատասխանատվությունն ի  
ագատվելու հարցը քննարկելիս անհրաժեշտ է նաև  
գնահատել, թե արդյոք արտակարգ և անկանխելի  
հանգամանքի ազդեցությունն է հանգեցրել վնասի  
պատճառմանը, և արդյոք վնաս պատճառած անձը  
ձեռնարկել է իրենից կախված բոլոր անհրաժեշտ  
միջոցները, որոնք կկանխեին կամ նվազագույնի  
կհասցնեին պատճառված վնասը:

Հարկ է նշել, որ Ապրանքների թերությունների  
հետևանքով վնաս պատճառելու դեպքում այս կամ այն  
հանգամանքի՝ որպես անհաղթահարելի ուժ  
որակումը պետք է իրականացվի ոչ թե ընդհանրապես  
տվյալ հանգամանքի արտակարգ և անկանխելի բնույթ  
ունենալու տեսանկյունից, այլ և տվյալ  
իրադրությունում դրա արտակարգ և անկանխելի  
հանդիսանալու տեսանկյունից:

Վերը նշվածը հիմնավորվում է նաև  
Քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 3-րդ մասի,  
339-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի  
իրավակարգավորման ընդհանուր տրամաբանության  
ներքո, որտեղ համապատասխանաբար հայցային

վաղեմ ու թյան ժամկետի ընթացքը կասեցնելը,  
 ձեռնարկատիրական գործունեություն  
 իրականացնող սուբյեկտին  
 պատասխանատվությունից ազատելը  
 պայմանավորված է միայն տվյալ պայմաններում  
 արտակարգ և անկանխելի հանգամանքի վրահասնելու  
 հետ: Ըստ այդմ, տվյալ հանգամանքի որպես  
 անհաղթահարելի ու ժ դիտարկումը պետք է  
 իրականացվի՝ հաշվի առնելով կոնկրետ  
 իրադրությունը, ժամանակը, վայրը, գիտություն և  
 տեխնիկայի զարգացման մակարդակը: Մենք համամիտ  
 ենք մասնագիտական գրականության մեջ  
 արտահայտված այն տեսակետին, որ այս կամ այն  
 երևույթը անհաղթահարելի ու ժ պետք է դիտարկել՝  
 ելնելով կոնկրետ ժամանակաշրջանից և գիտություն  
 զարգացման աստիճանից: Անհաղթահարելի ու ժ ի  
 հարցը քննելիս պետք է ելնել տվյալ  
 ժամանակահատվածի գիտություն և մարդկանց կողմից  
 այդ ու ժը կանխելու հնարավորություններից, և  
 նոր միայն որոշել՝ արդյոք երևույթը կանխելի է  
 եղել, թե ոչ<sup>163</sup>:

Քննարկելով անհաղթահարելի ու ժ ի  
 առկայությունը դեպքում վնաս պատճառած անձի  
 պատասխանատվությունից ազատվելու հարցը,  
 անդրադառնանք նաև վնաս պատճառած անձի  
 պատասխանատվությունից ազատվելու մյուս  
 հիմքին: Քաղաքացիական օրենսգրքի 1091-րդ  
 հոդվածով որպես այդպիսին առանձնացվում է  
 սպառողի կողմից Ապրանքների օգտագործման կամ  
 պահպանման կանոնները խախտելը: Քաղաքացիական  
 օրենսգրքի 1091-րդ հոդվածի վերլուծությունը  
 թույլ է տալիս եզրահանգել, որ որպես վնաս

<sup>163</sup> Տե՛ս **Բեքմեզյան Գ.Յ.**, Արտապայմանագրային պարտավորություններ, մենագրություն, Եր., Երևանի պետ.համալս.հրատ., 2009, էջեր՝ 185-186:

պատճառած անձի պատասխանատվությունը  
ազատվելու հիմք վերոնշյալ հոդվածի համաձայն  
կարող է ծառայել տուժողի կողմից այն կանոններ  
խախտումը, որոնք վերաբերելի են Ապրանքների  
օգտագործմանը կամ պահպանմանը:

Այսպես, նշված եզրահանգումը սերտորեն  
փոխկապակցված է տուժողի վարքագծի և, ըստ այդմ,  
վնաս պատճառելու հարցում վերջինիս մեղքի  
հիմնահարցի հետ: Ընդհանուր առմամբ, վնասի  
հատուցման հարաբերությունը ներկայումս  
գնահատական պետք է տրվի նաև տուժողի  
գործողությունը և վերջինիս մեղքի ձևին՝  
հաշվի առնելով դրա հնարավոր ազդեցությունը  
վնասի հատուցման մեթոդի կամ հատուցման չափի  
նվազեցման վրա:

Այսպես, պրոֆեսոր S.4. Բարսեղյանը,  
անդրադառնալով մեղքի ձևի հետ կապված հարցերին,  
որպես դիտավորություն է դիտարկում  
պարտականությունների պատշաճ կատարման համար  
անհրաժեշտ գործողությունների կատարումից  
միտումնավոր ձեռնպահ մնալը՝  
անպատասխանատվությունը: Յեղիսակի բնորոշմամբ  
անզգուշության դեպքում անձը  
պարտականությունների կատարման նկատմամբ չի  
ցուցաբերում պարտավորությունների բնույթով և  
շրջանառության պայմաններով պահանջվող  
հոգատարությունը և շրջահայացությունը: Կոպիտ  
անզգուշության պարագայում անձը  
պարտականությունների կատարման նկատմամբ չի  
ցուցաբերում տարրական հոգատարություն,  
հասարակական անզգուշության դեպքում՝ այնպիսի  
շրջահայացություն և հոգատարություն, ինչպիսին

ց ու ց աբ եր ու մ է ս ե փ ա կ ան գ ո ռ ծ ե թ ի ն կ ա տ մ ա մ ք <sup>164</sup>:  
Գրական ու թյան մեջ սովորական անզգուշ ու թյունը կոպիտ անզգուշ ու թյունն ից տարանջատելու հիմք է ընդունվել այն, որ առաջինը դրսևորվում է այն ժամանակ, երբ անձը չի գիտակցել վրա հասնող վտանգը, սակայն պետք է իմանար այդ մասին, իսկ կոպիտ անզգուշ ու թյան դեպքում տուժողը գիտակցում է վերահաս վտանգը, եթե անգամ չի գիտակցում, ապա պարտավոր է նկարող է գիտակցել, սակայն անփուլ թե հետևանքների նկատմամբ <sup>165</sup>:

Ինչպես վերը նշեցինք, Քաղաքացիական օրենսգրքի 1091-րդ հոդվածով Ապրանք վաճառողը (արտադրողը, աշխատանքներ կատարողը կամ ծառայող ու թյուններ մատուցողը) ազատվում է պատասխանատվությունից սպառողի կողմից Ապրանքների օգտագործման կամ պահպանման կանոնները խախտելու հետևանքով:

Քաղաքացիական օրենսգրքի 1091-րդ հոդվածի ն ու յ ն օրենսգրքի 1076-րդ հոդվածով ամրագրված՝ տուժողի մեղքի տարբեր ձևերի դրսևորման հետ կապված առանձնահատկություններին ու ս ու մ ն ա ս ի թ ու թ յ ու ն ը թ ու յ լ է տալիս եզրահանգել, որ սպառողի կողմից Ապրանքների օգտագործման կամ պահպանման կանոններին խախտումը կարող է հետևանք լինել տուժողի դիտավորություն կամ կոպիտ անզգուշ ու թյան: Այս տեսանկյունից մենք համամիտ ենք մասնագիտական գրական ու թյան մեջ արտահայտված այն տեսակետին, որ սովորական անզգուշ ու թյունը չի կարող վնաս պատճառողի՝ տուժողի նկատմամբ ունեցած

<sup>164</sup> Տե՛ս **Բարսեղյան Տ.Կ.**, Գ ու յ ք ա յ ի ն պատասխանատվության ինստիտուտի էվոլյուցիան և արդիական հիմնահարցերը, Երևան, Երևանի համալս.հրատ., 2006, էջեր՝ 266-267:

<sup>165</sup> Տե՛ս **Բեքմեզյան Գ.Յ.**, Տ ու ժ ող ի մեղքը որպես վնասի հատուցման ծավալների նվազեցման պայման, Պ Բ անբեր Երևանի Յ ամալ սարանի, Իրավագիտություն, Երևան, 2011, N 135.3, էջեր՝ 46-47:

պատասխանատվությունը անհատական և ընդհանուր հիմք  
հանդիսանալ <sup>166</sup>:

Ուշադրություն է արժանի նաև այս հարցի վերաբերյալ ընդհանուր իրավունքի համակարգի երկրներում զարգացած Ապրանքի սխալ գործածություն կամ այլ կերպասած՝ Ուշ իրավաչափ վարքագծից պաշտպանություն ղոկտրինը <sup>167</sup>, որի հիմնական իմաստն այն է, որ ապրանքները պատրաստվում են որոշակի սահմանափակ միջավայրում որոշակի ֆունկցիա կատարելու նպատակով, և դրանք չեն կարող անվտանգ լինել ցանկացած նպատակի կամ օգտագործման ցանկացած ձևի համար: Ըստ այդմ, անձի պատասխանատվությունը սահմանափակվում է ողջամտորեն «կանխատեսելի» օգտագործման հետևանքներով, իսկ ապրանքի սխալ գործածությունը սովորաբար հիմք է վնասների հատուցման չափի նվազեցման, ոչ թե հատուցումը մերժելու համար: Միայն սպառողի կողմից ապրանքի Անկանխատեսելի սխալ օգտագործումն է հանգեցնում վնասի հատուցման մերժմանը <sup>168</sup>: Մասնագիտական գրականության մեջ այս կապակցությամբ նաև նշվում է, որ Ատուժողի անփութությունը վնաս պատճառած անձի կողմից չի կարող օգտագործել որպես Ապաշտպանություն միջոց՝ այն դեպքում, երբ այն ընդամենը արտահայտվել է նրանում, որ ատուժողը չի հայտնաբերել ապրանքի թերությունը կամ չի պաշտպանվել դրա առկայություն հնարավորությունից: Ապրանքի սխալ գործածություն մասին կարող է վկայել այն, որ անձը

<sup>166</sup> Այդ մասին առավել մանրամասն տե՛ս **Բեքմեյզյան Գ.Յ.**, նշված աշխատ., էջ 46:  
<sup>167</sup> Դոկտրինի ընդհանուր բնորոշումը տրվել է 1980-1990-ական թվականներին դատարանների և տեսաբանների կողմից: Այս մասին առավել մանրամասն տե՛ս **Owen David G.**, "Products Liability: User Misconduct Defenses.", SCL Rev, 2000, N 52:1, էջ 48:  
<sup>168</sup> Տե՛ս **Owen David G.**, նշված աշխատ., էջեր՝ 45-48:

կամ ով ին և ոչ ողջամտորեն է առնչվում ակնհայտ  
□վտանգ □-ի հետ: Եթե սպառնողը հայտնաբերում է  
ապրանքի թերույթյունը՝ տեղյակ լինելով վտանգի  
մասին, բայց, այնուամենայնիվ, ոչ ողջամտորեն է  
այն օգտագործում և վնաս կրում, ապա վնասի  
հատուցումը պետք է մերժվի <sup>169</sup>:

Ինչպես արդեն իսկ նշել ենք, Քաղաքացիական  
օրենսգրքի 1091-րդ հոդվածով նախատեսված  
հանգամանքները Ապրանքների թերույթյունների  
հետևանքով պատճառված վնասի համար  
պատասխանատվությունից ազատվելու հատուկ  
հիմքեր են, ինչը չի բացառում Քաղաքացիական  
օրենսգրքի այլ հոդվածների կիրառման  
հնարավորությունը: Այսպես, Քաղաքացիական  
օրենսգրքի 1076-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի  
համաձայն.

□1. Տուժողի դիտավորության հետևանքով ծագած  
վնասը չի հատուցվում:

2. Եթե տուժողի կոպիտ անզգուշությունը  
նպաստել է վնասի առաջացմանը կամ մեծացմանը,  
հատուցման չափը պետք է նվազեցվի՝ կախված  
տուժողի և վնաս պատճառողի մեղքի աստիճանից:  
Տուժողի կոպիտ անզգուշության անկայության և  
վնաս պատճառողի մեղքի բացակայության այն  
դեպքերում, երբ պատասխանատվությունը վրա է  
հասնում մեղքից անկախ, հատուցման չափը կարող է  
նվազեցվել կամ վնասի հատուցումը կարող է  
մերժվել, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով:  
Քաղաքացու կյանքին կամ առողջությանը վնաս  
պատճառելու դեպքում վնասի հատուցումը չի կարող  
մերժվել □:

Նշված դրույթներից բխում է, որ տուժողի  
հասարակ անզգուշությունը իրավական որևէ  
հետևանք չի կարող առաջացնել, և, ըստ այդմ, հիմք

<sup>169</sup> Տե՛ս **Owen David G.**, նշված աշխատ., էջ 18:



ծ առ ա յ ե լ վ ն ա ս ի հ ա տ ու ց ու մ ը մ եր ժ ե լ ու կ ամ հ ա տ ու ց մ ա ն չ ա փ ը ն վ ա զ ե ց ն ե լ ու հ ամ ար <sup>170</sup>, ի ս կ Ա պր ա ն ք ն եր ի թ եր ու թ յ ու ն ն եր ի հ ե տ ն ա ն ք ո վ պ ա տ ճ առ վ ա ծ վ ն ա ս ի դ ե պ ք ու մ վ ն ա ս ը չ ի հ ա տ ու ց վ ի տ ու ժ ո ղ ի դ ի տ ա վ ո թ ու թ յ ա ն դ ե պ ք ու մ : Ի ն չ վ եր ա ք եր ու մ է տ ու ժ ո ղ ի կ ո պ ի տ ա ն զ գ ու շ ու թ յ ա ն ը , ա պ ա գ տ ն ու մ ե ն ք , ո թ ն ու յ ն հ ո դ վ ա ծ ի 2-ր դ մ ա ս ի 1-ին պ ար ք եր ու թ յ ա ն իր ա վ ա կ ար գ ա վ ո թ մ ա ն լ ու յ ս ի ն եր ք ո վ ն ա ս ի հ ա տ ու ց մ ա ն չ ա փ ը չ ի կ ար ո ղ ն վ ա զ ե ց վ ե լ , ք ա ն ի ո թ օ թ ե ն ս դ ի թ ը հ ա տ ու ց մ ա ն չ ա փ ը ն վ ա զ ե ց ն ե լ ու հ ամ ար ն ա խ ա տ ե ս ու մ է եր կ ու պ ա յ մ ա ն ն եր ի մ ի ա ժ ա մ ա ն ա կ յ ա առ կ ա յ ու թ յ ու ն <sup>171</sup>՝ և՛ տ ու ժ ո ղ ի և՛ վ ն ա ս պ ա տ ճ առ ո ղ ի մ ե ղ ք ի , մ ի ն չ դ ե ռ , ի ն չ պ ե ս ն շ ե լ ե ն ք , տ վ յ ա լ դ ե պ ք ու մ ն ա խ ա տ ե ս վ ու մ է առ ա ն ց մ ե ղ ք ի պ ա տ ա ս խ ա ն ա տ վ ու թ յ ու ն :

Մ ի ա ժ ա մ ա ն ա կ , գ տ ն ու մ ե ն ք , ո թ Ա պր ա ն ք ն եր ի թ եր ու թ յ ու ն ն եր ի հ ե տ ն ա ն ք ո վ վ ն ա ս պ ա տ ճ առ ե լ ու դ ե պ ք ու մ դ թ ա չ ա փ ի ն վ ա զ ե ց մ ա ն կ ամ վ ն ա ս ի հ ա տ ու ց մ ա ն մ եր ժ մ ա ն հ ամ ար ո թ պ ե ս հ ի մ ք (ք ա ց ի Ք ա ղ ա ք ա ց ի ա կ ա ն օ թ ե ն ս գ ր ք ի 1091-ր դ հ ո դ վ ա ծ ի ց ) կ ար ո ղ է ծ առ ա յ ե լ Ք ա ղ ա ք ա ց ի ա կ ա ն օ թ ե ն ս գ ր ք ի 1076-ր դ հ ո դ վ ա ծ ի 2-ր դ մ ա ս ի 2-ր դ պ ար ք եր ու թ յ ու ն ը :

Ա յ ս պ ե ս , գր ա կ ա ն ու թ յ ա ն մ ե ջ ար տ ա հ ա յ տ վ ա ծ տ ե ս ա կ ե տ ի հ ամ ա ձ ա յ ն Ք ա ղ ա ք ա ց ի ա կ ա ն օ թ ե ն ս գ ր ք ի 1076-

<sup>170</sup> Մ ա ս ն ա գ ի տ ա կ ա ն գր ա կ ա ն ու թ յ ա ն մ ե ջ ն շ վ ու մ է , ո թ ս ո վ ո թ ա կ ա ն ա ն զ գ ու շ ու թ յ ու ն ը դ թ ս ս ո թ վ ու մ է ա յ ն ժ ա մ ա ն ա կ , եր ք ա ն ձ ը չ ի գ ի տ ա կ ց ե լ վր ա հ ա ս ն ո ղ վ տ ա ն գ ը , ս ա կ ա յ ն պ ե տ ք է ի մ ա ն ար ա յ դ մ ա ս ի ն : Ա յ դ մ ա ս ի ն առ ա վ ե լ մ ա ն թ ա մ ա ս ն տե՛ս **Բ ե ք մ ե գ յ ա ն Գ.Զ.** , Տ ու ժ ո ղ ի մ ե ղ ք ը ո թ պ ե ս վ ն ա ս ի հ ա տ ու ց մ ա ն ծ ա վ ա լ ն եր ի ն վ ա զ ե ց մ ա ն պ ա յ մ ա ն ,  Բ ա ն ք եր եր ն ա ն ի Յ ա մ ա լ ս ար ա ն ի . Իր ա վ ա գ ի տ ու թ յ ու ն  , Եր ն ա ն , 2011, N135.3, է ջ 46:

<sup>171</sup> Յ ար կ է ն շ ե լ , ո թ Յ Յ ս ա հ մ ա ն ա դ թ ա կ ա ն դ ա տ ար ա ն ը 02.02.2016թ. Ս Դ Ո -1253 ո թ ո շ մ ա ն մ ե ջ , ա ն դ թ ա դ առ ն ա լ ո վ «Իր ա վ ա կ ա ն ա կ տ եր ի մ ա ս ի ն» Յ Յ օ թ ե ն ք ի (ը ն դ ու ն վ ե լ է 03.04.2002թ. , ու ժ ը կ ո թ ց թ ե լ է 07.04.2018թ. , Յ Յ Պ Տ 2002.05.21/15(190)Յ ո դ .344) 45-ր դ հ ո դ վ ա ծ ի 10-ր դ մ ա ս ի 2-ր դ պ ար ք եր ու թ յ ա մ ք ն ա խ ա տ ե ս վ ա ծ կ ա ն ո ն ն եր ի ն , ար տ ա հ ա յ տ ե լ է դ ի թ ք ո թ ո շ ու մ ա յ ն մ ա ս ի ն , ո թ դ թ ա ն ք կ ի թ առ ե լ ի չ ե ն ի ն ք ն ու թ ու յ ն իր ա վ ա կ ար գ ա վ ո թ մ ա ն օ ք յ ե կ տ ն եր ի թ վ ար կ ու մ ն եր ի ն կ ա տ մ ա մ ք , մ ի ն չ դ ե ռ Ք ա ղ ա ք ա ց ի ա կ ա ն օ թ ե ն ս գ ր ք ի 1076-ր դ հ ո դ վ ա ծ ի 2-ր դ մ ա ս ի 1-ին պ ար ք եր ու թ յ ա մ ք տ վ յ ա լ ն ո թ մ ի կ ի թ առ մ ա ն հ ամ ար ա մ թ ա գ թ վ ա ծ է եր կ ու մ ի ա ժ ա մ ա ն ա կ յ ա պ ա յ մ ա ն ն եր ի առ կ ա յ ու թ յ ա ն պ ա հ ա ն ջ , և առ կ ա չ ե ն ի ն ք ն ու թ ու յ ն իր ա վ ա կ ար գ ա վ ո թ մ ա ն օ ք յ ե կ տ ն եր ի թ վ ար կ ու մ ն եր :

րդ հոդվածը (2-րդ մասի 2-րդ կետ) կիրառելի է շրջապատի համար առավել վտանգ ստեղծող գործունեությունների ամբողջական պատճառելու դեպքում<sup>172</sup>:

Այս տեսանկյունից խնդիրը նրանում է, որ Քաղաքացիական օրենսգրքի 1076-րդ հոդվածը վնասի հատուցման հարցերի կարգավորմանն ուղղված ընդհանուր դրույթ է, այնուամենայնիվ, օրենսդիրը, միայն Քաղաքացիական օրենսգրքի 1072-րդ հոդվածի 1-ին մասում է ուղղակիորեն նախատեսում այդ հիմքով առավել վտանգի աղբյուրի սեփականատիրոջը պատասխանատվությունից ազատելու հնարավորություն, ինչը կարող է իրավակիրառ պրակտիկայում հանգեցնել վերոնշյալ դրույթների տարածական մեկնաբանման: Մասնավորապես, հարց կարող է առաջանալ, թե արդյոք նման կարգավորումը նշանակում է միայն առավել վտանգի աղբյուրի դեպքում Քաղաքացիական օրենսգրքի 1076-րդ հոդվածի 2-րդ մասի կիրառման հնարավորություն, թե ոչ: Քաղաքացիական օրենսգրքի 1076-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերությունից բխում է, որ դրա կիրառման համար պարտադիր են հետևյալ պայմանների միաժամանակյա առկայությունը՝

1. տուժողի գործողությունն ենթում կոպիտ անզգուշության առկայություն.
2. մեղքից անկախ պատասխանատվության առաջացում.
3. նշված կանոնից օրենսդրությամբ ուղղակիորեն նախատեսված բացառություն:

Համադրելով վերը թվարկված պայմանները Քաղաքացիական օրենսգրքի 60-րդ գլխի 3-րդ պարագրաֆի հետ՝ կարող ենք արձանագրել, որ

<sup>172</sup> Տե՛ս **Բեքմեզյան Գ.Յ.**, Տուժողի մեղքը որպես վնասի հատուցման ծավալների նվազեցման պայման,  Բանբեր Երևանի Համալսարանի .իրավագիտություն , Երևան, 2011, N 135.3, էջ 43:

Ապրանքների թերությունների հետևանքով պատճառված վնասի համար և նախատեսվում է առանց մեղքի պատասխանատվություն, առկա չէ որևէ դրույթ, որը կբացառի Քաղաքացիական օրենսգրքի 1076-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերության կիրառումը, հետևաբար Ապրանքների թերությունների հետևանքով պատճառված վնասի դեպքում տուժողի կոպիտ անզգուշության դեպքում վնասի հատուցումը այս հիմքով ևս կարող է մերժվել կամ դրա չափը կարող է նվազեցվել <sup>173</sup>:

Այժմ անդրադառնանք այն խնդրի քննարկմանը, որ Քաղաքացիական օրենսգրքի 1091-րդ հոդվածով վնաս պատճառած անձը կարող է ազատվել պատասխանատվությունից բացառապես այն կանոնների խախտման դեպքում, որոնք վերաբերելի են Ապրանքների օգտագործմանը կամ պահպանմանը:

Ուշադրություն է արժանի այն, որ Օրենքը նույն խնդրի կապակցությամբ որդեգրել է այլ մոտեցում՝ մասնավորապես Օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ մասով վաճառողը (արտադրողը, կատարողը) պատասխանատվությունից ազատվում է սպառողի կողմից Ապրանքի օգտագործման, պահման և փոխադրման կանոնների խախտման դեպքում:

Այսինքն՝ ի տարբերություն Օրենսգրքի՝ Օրենքը պատասխանատվությունից ազատվելու հնարավորություն է նախատեսում նաև Ապրանքի փոխադրման կանոնների խախտման դեպքում: Կարծում ենք՝ Օրենքով որդեգրված մոտեցումը առավել հիմնավոր է, քան ի որ սպառողի կողմից Ապրանքի

<sup>173</sup> Ընդ որում, անգամ տուժողի կոպիտ անզգուշության պարագայում վերջինիս կյանքին կամ առողջությանը վնաս պատճառելու դեպքում վնասի հատուցումը չի կարող մերժվել, այլ դրա չափը կարող է նվազեցվել, ինչը բխում է Քաղաքացիական օրենսգրքի 1076-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերության վերջին նախադասությամբ ամրագրված պահանջից, և պայմանավորված է կյանքի և առողջության՝ որպես բարձրագույն արժեքների պատշաճ պաշտպանության անհրաժեշտությամբ:

փոխադրման կանոնների խախտումը ևս կարող է հանգեցնել Ապրանքի թերուժյան ի հայտ գալուն (հատկապես այն հանգամանքի հաշվառմամբ, որ Ապրանքների բաղադրամասային թերուժյունների առաջացումը ուղղակիորեն կարող է փոխկապակցված լինել դրանց փոխադրման կանոնների խախտման հետ): Յաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում ենք, որ Քաղաքացիական օրենսգրքի 1091-րդ հոդվածում վնաս պատճառողին պատասխանատվությունից ազատվելու հնարավորություն պետք է ընձեռվի նաև սպառողի կողմից Ապրանքների փոխադրման կանոնների խախտման պարագայում:

Ըստ այդմ, առաջարկում ենք Քաղաքացիական օրենսգրքի 1091-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

□Ապրանք վաճառողը կամ արտադրողը, աշխատանքներ կատարողը կամ ծառայությունների մատուցողը ազատվում է պատասխանատվությունից, եթե ապացուցում է, որ վնասը ծագել է անհաղթահարելի ուժի կամ սպառողի կողմից ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) օգտագործման, փոխադրման կամ դրանց պահպանման համար սահմանված կանոնները խախտելու հետևանքով:□

Վերլուծելով ՀՀ օրենսդրությամբ նախատեսված՝ վնաս պատճառած անձի պատասխանատվությունից ազատվելու հիմքերը, կցանկանայինք նաև նշել, որ պատասխանատվությունից ազատվելու հարցի շուրջ եվրոպական երկրների մոտեցումը էապես տարբերվում է ՀՀ օրենսդրի մոտեցումից, քանի որ վնաս պատճառած անձին ընձեռվում է պատասխանատվությունից ազատվելու այն

հնարավորություն<sup>174</sup>: Եվրոպական երկրներում վնաս  
պատճառած անձը ազատվում է  
պատասխանատվությունից նաև այն դեպքերում, երբ  
ապացուցում է, որ`

1. Ապրանքը շրջանառության մեջ չի դրել կամ  
Ապրանքի թերությունն առկա չի եղել այն  
շրջանառության մեջ դնելու պահին կամ առաջացել է  
շրջանառության մեջ դնելուց հետո: Այս վերջին  
դեպքում, նշում է Յ.Բերնարդը, գործում է ապրանքի  
թերության առկայության կանխավարկածը, իսկ  
արտադրողը պետք է ապացուցի, որ ապրանքը  
թերություն չի ունեցել շրջանառության մեջ  
դնելու պահին, կամ թերությունն առաջացել է  
երրորդ անձի պատճառով<sup>175</sup>: Կործում ենք` նշված  
հիմքի հատուկ առանձնացման անհրաժեշտությունը  
բացակայում է, քանի որ մինչև արտադրողի  
հսկողությունից դուրս գալը ապրանքի թերության  
բացակայությունը արդեն իսկ վկայում է, որ  
բացակայում է վնասի հատուկ մասն պարտադիր պայման  
հանդիսացող հակաիրավական վարքագիծը:

2. Ապրանքը չի արտադրվել վնաս պատճառողի  
կողմից վաճառքի կամ այլ եղանակով բաշխման  
համար` հետապնդելով տնտեսական նպատակ, կամ չի  
արտադրվել և բաշխվել վերջինիս կողմից` կապված  
իր կողմից իրականացվող ձեռնարկատիրական  
գործունեության հետ: Այլ կերպասած` եվրոպական  
երկրներում ապրանքի վաճառքը պետք է հետապնդի  
շահույթ ստանալու նպատակ կամ պայմանավորված  
լինի տվյալ սուբյեկտի ձեռնարկատիրական  
գործունեության հետ:

---

<sup>174</sup> Տե՛ս **Council Directive** 85/374/EEC of 25 July 1985 on the approximation of the laws, regulations and administrative provisions of the Member States concerning liability for defective products, Official Journal L 210, 07/08/1985, P.0029-0033, հոդված 7:

<sup>175</sup> Տե՛ս **Hanotiau Bernard**, "The Council of Europe Convention on Products Liability." Ga. J. Int'l & Comp., 1978, N 8, էջ 337:

3. Ապրանքի թերու թյու նը պայմանավորված է պետական մարմինների սահմանած պարտադիր կարգավորումներին դրա համապատասխանությունը ապահովելու անհրաժեշտությունը: Ինչպես նշում է Մ.Ռեյմանը, «պաշտպանություն այս միջոցը կարող է կիրառվել միայն այն դեպքում, երբ պարտադիր կարգավորումներին համապատասխանեցման պահանջով պայմանավորված՝ պատասխանողը պարտադրված (ոչ թե թույլատրված) է եղել ապրանքը պատրաստել որոշակի ձևով (օրինակ՝ ռազմական գնումներին դեպքում պետությունը սահմանում է ապրանքների արտադրման տեխնիկական կարագրեր)»<sup>176</sup>:

4. Ապրանքի բաղկացուցիչ մասի թերու թյու նը պայմանավորված է հիմնական ապրանքի պատրաստմամբ (դիզայնի) կամ բաղկացուցիչ մասը արտադրողին տրված ցուցումներով: Գրականության մեջ նշվում է, որ այս բացառությունն ախատեսումը պայմանավորված է նրանով, որ ապրանքի բաղկացուցիչ մասն ինքնին թերու թյու ն չունի: Բաղկացուցիչ մաս արտադրողը պետք է ապացուցի, որ եթե այն պատշաճ ձևով օգտագործվեր այլ արտադրողի կողմից, ապա վնաս չէր պատճառի, կամ պետք է ապացուցի, որ այդ թերու թյու նը առաջացել է իրեն տրված ցուցումների պատճառով<sup>177</sup> (պատասխանատվությունն իր վրա ազատվելու վկայակոչված հիմքերը նախատեսված են օրինակ՝ Իտալիայի<sup>178</sup>, Գերմանիայի<sup>179</sup>, Իսպանիայի

<sup>176</sup> Տե՛ս **Reimann Mathias**, "Liability for defective products at the beginning of the twenty-first century: Emergence of a worldwide standard?", *The American Journal of Comparative Law*, 2003, N 51, էջ 781:

<sup>177</sup> Տե՛ս **Dreyfuss Richard H.**, նշված աշխատ., էջեր՝ 74-75:

<sup>178</sup> Տե՛ս **Dreyfuss Richard H.**, նշված աշխատ., էջեր՝ 69-70: Ընդ որում, վնաս պատճառած անձը չի կարող ազատվել պատասխանատվությունից նույնիսկ այն դեպքում, եթե ապացուցի, որ ձեռնարկել է վնաս պատճառելը կանխող բոլոր արդյունավետ միջոցները:

<sup>179</sup> Տե՛ս **Dielmann Heinz J.**, "The New German Product Liability Act." *Hastings Int'l & Comp. Rev.*, 1989, N 13, էջեր՝ 430-431:

օրենսդրությունը<sup>180</sup>, որոշ  
առանձնահատկություններով՝ նաև Կորեայում<sup>181</sup>):

5. Ապրանքը շրջանառության մեջ դնելու ժամանակ գիտատեխնիկական գիտելիքի մակարդակը հնարավորությունն չի տվել հայտնաբերել դրա թերությունը:

Առանձին կցանկանայինք անդրադառնալ վնաս պատճառած անձի պատասխանատվությունն իր ցածր ակտիվությանը հիմքին, քան ի որ այս հարցը լայն քննարկումներին առարկա է դարձել նաև մասնագիտական գրականության մեջ: Վնաս պատճառած անձին պատասխանատվությունն իր ցածր ակտիվությանը հայտնի է  2 արգացման ռիսկեր  (Development Risks) կամ  Տեխնիկայի մակարդակ  (State of Art) անվանումով<sup>182</sup>: Այս դոկտրինին նախատեսումը հետազոտությունը և զարգացումը խթանելու նպատակ է հետապնդում<sup>183</sup>, բայց դրա առկայությունը նաև բազմաթիվ վեճերի առիթ է հանդիսացել<sup>184</sup>:

Ինչպես նշում է Ռ.Դրեյֆոսը, այս հիմքով պատասխանատվությունն իր ցածր ակտիվությանը համարվնապատճառած անձը պետք է ապացուցի, որ այդ պահին առկա (հասանելի) գիտելիքը հնարավորությունն չի

<sup>180</sup> Տե՛ս **Ansaldo Michael**, "The Spanish Products Liability Act of 1994." *ILSA J. Int'l & Comp.*, 1995, N 2, էջեր՝ 428-429:

<sup>181</sup> Կորեայի 2001 թվականի  Ապրանքների թերություններին համար պատասխանատվության մասին  6109 ակտի 4-րդ հոդվածի համաձայն վնաս պատճառած անձը կարող է ազատվել պատասխանատվությունից այն դեպքում, եթե ապացուցի, որ ապրանքը չի դրել շրջանառության մեջ, եթե ապրանքի թերությունը չէր կարող հայտնաբերվել՝ հաշվի առնելով այն շրջանառության մեջ դնելու պահին գիտատեխնիկական առաջընթացի մակարդակը, եթե թերությունը պայմանավորված է օրենսդրական պահանջներին համապատասխանեցման անհրաժեշտությամբ, եթե ապրանքի բաղկացուցիչ մասի թերությունը պայմանավորված է հիմնական ապրանքը արտադրողի ցուցումներին կամ դրա պատրաստման հետ: Այդ մասին նաև ավելի մանրամասն տե՛ս **Kim Chan Jin**, "The Korean Product Liability Act." *Korean J. Int'l & Comp.*, 2005, N 33, էջ 113:

<sup>182</sup> Դոկտրինին հիմքը դրվել է Եվրոպական Միության 1985 թվականի հունիսի 25-ի Դիրեկտիվի ընդունման արդյունքում:

<sup>183</sup> Տե՛ս **Kim Chan Jin**, նշված աշխատ., էջ 88:

<sup>184</sup> Տե՛ս **Griffiths Lord, De Val Peter, Dornier RJ.**, "Developments in English Product Liability Law: A Comparison with the American System." *Tul. L. Rev.*, 1987, N 62, էջ 384:

տվել իրագրել լինել ապրանքի իրականում վտանգավոր լինելու մասին, կամ ռիսկը առկա է եղել, սակայն գիտելիքը բավարար չի եղել այն վերացնելու համար: Միայն այն փաստի վկայակոչումը, որ որևէ այլ արտադրող չի ձեռնարկել վտանգի վերացմանն ուղղված նախազգուշական միջոցներ, բավարար չէ պատասխանատվություն նից ազատվելու համար<sup>185</sup>:

□2 արգացման ռիսկեր □ դոկտրինին վերաբերելի են այն իրավիճակները, երբ ապրանքները պատրաստվել են առավել վաղ ժամանակահատվածի ստանդարտներին համապատասխան, բայց հետագայում դրանք այնքան են փոխվել, որ ապրանքները պատրաստվել են այլ, որպես կանոն, առավել լավ եղանակով: Օրինակ՝ ինչպես արձանագրել է ԱՄՆ վերաքննիչ դատարանը Bruce և դուքեմ Martin-Marietta Corp. գործով, ճամփորդները չեն կարող 1952 թվականին կառուցված օդանավից ակնկալել այն նույն անվտանգությունը, ինչ 1970 թվականին կառուցված ից: Այս դոկտրինին են վերաբերելի նաև այն իրավիճակները, երբ ապրանքի թերությունները անհայտ են և անճանաչելի (օրինակ՝ դեղի արտադրող թյան ժամանակ դրա կողմնակի ազդեցություն մասին տեղեկություն չունենալը)<sup>186</sup>:

Անդրադառնալով վերը նշված դոկտրինին՝ Ուեյդը նշում է, որ □տեսնելի կայի մակարդակ □ տերմինը նման է □քամել եոն □-ի, քանի որ այն կարող է վերաբերելի լինել ամեն ինչին՝ սկսած առևտրի սովորույթներից մինչև տնտեսական իրագործելիության համար անհրաժեշտ տեսնելու գիական տեղեկատվության առկայությունը<sup>187</sup>:

<sup>185</sup> Տե՛ս Dreyfuss Richard H., նշված աշխատ., էջեր՝ 72-73:  
<sup>186</sup> Տե՛ս Griffiths Lord, De Val Peter, Dorner RJ., նշված աշխատ., էջեր՝ 385-386:  
<sup>187</sup> Տե՛ս այս հեղինակի կարծիքը Griffiths Lord, De Val Peter, Dorner RJ., նշված աշխատ., էջ 384:



Դոկտրինի տարածական մեկնաբանման մասին է վկայում նաև Եվրոպական Միության Արդարադատության դատարանի կողմից դրան անդրադառնալու հանգամանքը: Մասնավորապես, անդրադառնալով  գիտական և տեխնիկական գիտելիքի մակարդակ  տերմինին, դատարանը նշել է, որ այն չի սահմանափակվում միայն այն անվտանգության ստանդարտներով, որոնք գործում են այն արտադրական հատվածում, որտեղ գործունեություն է ծավալում արտադրողը: Այն ներառում է նաև գիտատեխնիկական գիտելիքի զարգացման ամենաբարձր մակարդակը այն պահին, երբ ապրանքը դրվել է շրջանառության մեջ: Մեկայլ գործով նույն դատարանը արձանագրել է, որ գիտական և տեխնիկական գիտելիքը պետք է հասանելի լինի այն պահին, երբ ապրանքը դրվել է շրջանառության մեջ<sup>188</sup>: Այնուամենայնիվ, շատ տեսաբաններ ներկայումս էլ գտնում են, որ Դիրեկտիվի՝ այս հարցին վերաբերելի դրույթի խմբագրությունը շատ անորոշ է, և հանգեցնում է բազմաթիվ խնդիրների<sup>189</sup>:

Չնայած Եվրոպական երկրները օժտված են վերապահում կատարելու միջոցով դոկտրինի կիրառումից հրաժարվելու հնարավորությամբ, այնուամենայնիվ, այն կիրառելի է Եվրոպական երկրների մեծ մասում (բացառությամբ Ֆինլանդիայի, Լյուքսեմբուրգի): Չամանման է մոտեցումը նաև ամերիկյան նահանգների մեծ մասում: Կան նաև երկրներ, որոնք նախատեսում են այս դոկտրինի կիրառման որոշ սահմանափակումներ: Օրինակ՝ Իսպանիայում այն կիրառելի չէ

<sup>188</sup> Տե՛ս **Commission of the European Communities v United Kingdom of Great Britain and Northern Ireland**, գործ C-300/95, 29 մայիս 1997 թվականի Եվրոպական միության արդարադատության դատարանի վճիռ:

<sup>189</sup> Տե՛ս **Stapleton J.**, "Products Liability in the United Kingdom: The Myths of Reform." *Tex. Int'l LJ*, 1999, N 34, էջեր՝ 58-60:

ս ն ն դ ամ թ եր ք ի և դ ե ղ եր ի , Գ եր մ ան ի այ ու մ ` դ ե ղ եր ի և  
գ ե ն ե տ ի կ ո Ր ե ն մ շ ա կ վ ա ծ ա պր ան ք ն եր ի ,  
Ֆր ան ս ի այ ու մ ` մ ար դ կ այ ի ն ծ ա գ մ ան ն յ ու թ ի (ար յ ան )  
դ ե պ ք ու մ : Ա յ ն ու ամ ե ն այ ն ի վ , ի ն չ պ ե ս ն շ ու մ է  
Մ .Ռ ե յ մ ան ը , դ ո կ տր ի ն ը այ դ ք ան է լ ար դ ի ա կ ան չ է ,  
առ ն վ ա գ ն ե վ Ր ո պ ա կ ան եր կ Ր ն եր ու մ դ Ր ա հ ե տ կ ա պ վ ա ծ  
դ ա տ ա կ ան հ այ ց եր ը հ ա գ վ ա դ ե պ ե ն , և ս ո վ ո Ր ա ք ար  
վ եր ա ք եր ե լ ի ե ն այ ն դ ե ղ եր ի ն , ո Ր ո ն ց կ ո ղ մ ն ա կ ի  
ա գ դ ե ց ու թ յ ան հ ե տ ն ան ք ն եր ը ի հ այ տ ե ն ե կ ե լ մ ի այ ն  
այ ն ժ ա մ ան ա կ , եր ք ա պր ան ք ը ար դ ե ն ի ս կ վ ն աս է  
պ ա տ ճ առ ե լ ան ձ ի ն <sup>190</sup>:

Ը ն դ հ ան ու Ր գ ծ եր ո վ վ եր լ ու ծ ե լ ո վ ն շ վ ա ծ  
դ ո կ տր ի ն ը ` կ ց ան կ ան այ ի ն ք ն շ ե լ , ո Ր ո Ր պ ե ս ն ո Ր  
գ ար գ ա ց ո ղ ու ղ ո ղ ու թ յ ու ն այ ն կ ար ո ղ է կ ար ն ո Ր  
դ եր ա կ ա տ ար ու մ ու ն ե ն ա լ հ ա տ կ ա պ ե ս  
գ ի տ ա տ ե խ ն ի կ ա կ ան մ ե ծ առ ա ջ ը ն թ ա ց ա պր ո ղ  
եր կ Ր ն եր ու մ : Ա յ ն ու ամ ե ն այ ն ի վ , հ ա շ վ ի առ ն ե լ ո վ  
ն ա ն ն մ ան եր կ Ր ն եր ու մ այ ս ի ն ս տ ի տ ու տ ի կ ի Ր առ մ ան  
փ ո Ր ձ ի պ ա կ աս ը , ար ձ ան ա գ Ր վ ա ծ խ ն դ ի Ր ն եր ը , կ ար ծ ու մ  
ե ն ք ն եր կ ա պ ա հ ի ն վ ա ղ ա ժ ա մ է  
պ ա տ աս խ ան ա տ վ ու թ յ ու ն ի ց ա գ ա տ վ ե լ ու այ ս հ ի մ ք ի  
ն ա խ ա տ ե ս ու մ ը կ ա մ այ լ կ եր պ աս ա ծ դ Ր ա մ ե խ ան ի կ ա կ ան  
փ ո խ առ ն ու մ ը Ք ա ղ ա ք ա ց ի ա կ ան օ Ր ե ն ս դ Ր ու թ յ ու ն `  
հ ա շ վ ի առ ն ե լ ո վ ն ա ն և առ ա ջ ն մ ան ի Ր ա վ ա կ ան  
կ ար գ ա վ ո Ր ու մ ն ա խ ա տ ե ս ե լ ու պր ա կ տ ի կ  
ան հ Ր ա ժ ե շ տ ու թ յ ան պ ա կ աս ը :

Վ եր լ ու ծ ե լ ո վ վ ն աս պ ա տ ճ առ ա ծ ան ձ ի  
պ ա տ աս խ ան ա տ վ ու թ յ ու ն ի ց ա գ ա տ վ ե լ ու հ ի մ ք եր ը `  
ան հ Ր ա ժ ե շ տ ե ն ք հ ա մ ար ու մ ն շ ե լ , ո Ր օ Ր ե ն ս դ Ր ո Ր ե ն  
վ ն աս պ ա տ ճ առ ա ծ ան ձ ի ն է առ ա ջ ա դ Ր վ ու մ դ Ր ան ց  
ա պ ա ց ու ց մ ան ք ե ո ի պ ա հ ան ջ ը : Ա յ ս հ ա մ ա տ ե ք ս տ ու մ  
կ ց ան կ ան այ ի ն ք ն ա ն ան դ Ր ա դ առ ն ա լ Ա պր ան ք ն եր ի  
թ եր ու թ յ ու ն ն եր ի հ ե տ ն ան ք ո վ պ ա տ ճ առ վ ա ծ վ ն աս ի

<sup>190</sup>Տ ե ` ս Reimann Mathias, ն շ վ ա ծ ա շ խ ա տ ., է ջ եր ` 780-781:

հատուցման գործերով ապացուցման բեռի հետ կապված որոշ հիմնահարցերի:

Ընդհանուր առմամբ պետք է նշել, որ Ապրանքների թերուղյակների հետևանքով պատճառված վնասի դեպքում առանցքային հարցերից մեկը վնասի հատուցման իրավունքի լիարժեք և արդյունավետ իրացման նախադրյալների առկայությունն է, քանի որ հակառակ պարագայում այն կդառնա երևույթական և անիրական: Վնասի հատուցման իրավունքի արդյունավետ կենսագործման գրավականներից կարևորագույնը տուժողի և վնասի պատճառողի միջև ապացուցման բեռի համաչափ բաշխվածությունն է, ըստ այդմ, վերջիններիս շահերի արդարացի հավասարակշռության ապահովումն է:

Ինչպես բազմիցս արձանագրել է ՀՀ վճռաբեկ դատարանը, վնասի հատուցման պարտադիր պայման հանդիսացող տարրերից՝ վնասների առկայության, վնաս պատճառողի մոտ ոչ օրինաչափ վարքագծի առկայության, վնասների և ենթադրյալ վնաս պատճառող անձի ոչ օրինաչափ գործողության միջև պատճառահետևանքային կապի առկայության հանգամանքների ապացուցման բեռը կրում է վնաս կրած անձը, իսկ պատճառված վնասի հարցում իր մեղքի բացակայության հանգամանքի ապացուցման պարտականությունը կրում է ենթադրյալ վնաս պատճառած անձը: Ընդ որում, նշված պայմաններից որևէ մեկի բացակայության դեպքում վնասը ենթակա չէ հատուցման<sup>191</sup>:

Այս հանգամանքի հաշվառմամբ անհրաժեշտ է քննարկել այն հարցը, թե արդյոք վնասի հատուցման բոլոր պարտադիր պայմանների ապացուցման

<sup>191</sup>Տե՛ս օրինակ՝ ՀՀ վճռաբեկ դատարանի 04.10.2013թ. թիվ ԵԿԴ/2600/02/10, 30.04.2015թ. թիվ ԵԿԴ/2128/02/13, 30.04.2015թ. թիվ ԵԱԲԴ/1747/02/12 քաղաքացիական գործերով արտահայտած դիրքորոշումը:

պարտականությունը տուժողի վրա դնելը խոչընդոտ  
չի հանդիսանա վնասի հատուցման իրավունքի  
արդյունավետ իրացման տեսանկյունից: Նշված  
հարցը բազմիցս քննարկվել է նաև մասնագիտական  
գրականության մեջ:

Մասնավորապես, Վ. Մանֆրեդը գտնում է, որ  
տուժողին վնասի հատուցման բոլոր պայմանների  
ապացուցման պարտականությամբ ծանրաբեռնելը  
հաճախ հանգեցնում է անարդարացի իրավիճակի,  
քանի որ վերջինս սովորաբար չի տիրապետում  
արտադրողական և շրջանառողական պրոցեսների  
վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվության<sup>192</sup>: Ա.  
Ռիչարդը նշում է, որ հստակ չէ, թե արդյո՞ք  
ապացուցման բեռի նման բաշխումը տուժողի համար  
առաջացնում է լուրջ խոչընդոտներ, և արդյո՞ք  
վերջինս մշտապես (բարդ գործերով) ունի իր  
պահանջը հիմնավորող ապացույցներ  
ներկայացնելու հնարավորություն<sup>193</sup>: Ռ.Դրեյֆսը,  
իր հերթին, անդրադառնալով ապացուցման  
հիմնահարցին, նշում է, որ ապացուցման  
դժվարության պատճառով համանման գործերով  
հարցերի պարզաբանման համար հաճախ առաջանում է  
մասնագետներ գրավելու անհրաժեշտություն<sup>194</sup>:

Վկայակոչված խնդրին անդրադարձել է նաև  
եվրոպական երկրների իրավակիրառ պրակտիկայի  
մշտադիտարկում իրականացնող ԵՄ 85/374 Դիրեկտիվի  
հիման վրա գործող հանձնաժողովը, որն  
արձանագրել է ապացուցման բեռի հիմնահարցի՝  
վիճելի լինելու և իրական պրակտիկ  
նշանակություն ունենալու հանգամանքը:  
Հանձնաժողովի կողմից արձանագրվել է, որ  
սպառողները ապացուցման բեռի նման բաշխման

<sup>192</sup> Տե՛ս **Wandt Manfred**, "German Approaches to Products Liability", Tex. Int'l LJ, 1999, N 34, էջ 79:

<sup>193</sup> Տե՛ս **Epstein Richard A.**, "Products Liability: From Contract to Regulation in the United States and Europe", Tel Aviv U. Stud., 1989, N9, էջ 77:

<sup>194</sup> Տե՛ս **Dreyfuss Richard H.**, նշված աշխատ., էջ 86:

պայմաններում (թերությունները և պատճառահետևանքային կապի ապացուցման առումով) հայտնվում են անարդարացի իրավիճակում, ինչը պայմանավորված է կարևոր տեղեկատվությունների բերելու անհնարինությունով: Սահառակապես վառ է արտահայտվում բարձր տեխնոլոգիական ապրանքների կամ այն դեպքերում, երբ ենթադրյալ վնասը իր բնույթով բարդ է <sup>195</sup>:

Հաշվի առնելով Ապրանքների թերությունները հետևանքով պատճառված վնասի դեպքում ապացուցման հիմնահարցի կարևորությունը՝ որոշ երկրներ այս հարցի շուրջ դրսևորում են առանձնահատուկ մոտեցում:

Օրինակ՝ Իտալիայում տուժողը, ընդհանուր կանոնի համաձայն, կրում է վնասի, ապրանքի թերության և պատճառահետևանքային կապի ապացուցման պարտականությունը, իսկ արտադրողը՝ իր պատասխանատվությունը բացառող փաստերի ապացուցման պարտականությունը <sup>196</sup>, իսկ վտանգավոր ապրանքների հետևանքով վնաս պատճառելու դեպքում ապացուցման պարտականությունը կրում է պատասխանողը: Վերջինս կարող է ազատվել պատասխանատվությունից, եթե ապացուցի, որ ձեռնարկել է վնասի պատճառումը կանխող բոլոր անհրաժեշտ միջոցները <sup>197</sup>:

Հետաքրքիր միտում է նկատվում այդ հարցի կապակցությամբ Գերմանիայի դատական պրակտիկայում: Այստեղ ևս, ընդհանուր կանոնի

<sup>195</sup> Տե՛ս **Third Report** on the application of Council Directive on the approximation of laws, regulations and administrative provisions of the Member States concerning liability for defective products (85/374/EEC of 25 July 1985, amended by Directive 1999/34/EC of the European Parliament and of the Council of 10 May 1999), Brussels, 2006, էջ 9, հասանելի է՝ <http://eur-lex.europa.eu/legal-content/EN/ALL/?uri=CELEX:52006DC0496> հղումով՝ 24.09.2017 թվականի դրությամբ:

<sup>196</sup> Տե՛ս **Dreyfuss Richard H.**, նշված աշխատ., էջ 84:

<sup>197</sup> Տե՛ս **Third Report** on the application of Council Directive on the approximation of laws, regulations and administrative provisions of the Member States concerning liability for defective products (85/374/EEC of 25 July 1985, amended by Directive 1999/34/EC of the European Parliament and of the Council of 10 May 1999), Brussels, 2006, էջեր՝ 9-10, հասանելի է՝ <http://eur-lex.europa.eu/legal-content/EN/ALL/?uri=CELEX:52006DC0496> հղումով՝ 24.09.2017 թվականի դրությամբ:

համաձայն, հայցվորը պետք է ապացուցի վնասի հատուցման պարտադիր պայմանների առկայությունը, սակայն դատական պրակտիկայում այս կանոնը փոխվել է ի օգուտ տուժողի: Մասնավորապես, դատական պրակտիկայում տուժողին հատուցում տրամադրելու համար բավարար է վնաս պատճառելու փաստը հավաստող անուղղակի ապացույցի ներկայացումը: Օրինակ՝ գործերից մեկով որպես ապրանքի թերութայն առկայության բավարար անուղղակի ապացույց է դիտարկել վիրահատության ընթացքում բժշկական սարքավորման՝ առաքումից ընդամենը 7 ամիս անց կոտրվելը, մեկ այլ գործով՝ նույն արտադրողի կաթնամթերքը օգտագործելու արդյունքում մի քանի անձանց միանգամից թունավորվելու հանգամանքը<sup>198</sup>:

Ինչ վերաբերում է ՀՀ օրենսդրությամբ ապացուցման պարտականության բաշխման հարցին, պետք է նշել, որ ապացուցման պարտականությունը բաշխելու՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 62-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ընդհանուր կանոնի համաձայն գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պարտավոր է ապացուցել իր պահանջների և առարկությունների հիմքում դրված ու գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերը, եթե այլ բան նախատեսված չէ նույն օրենսգրքով կամ այլ օրենքներով:

Ինչպես նշում է Ս.Գ. Մեդրյանը քննարկված ընդհանուր կանոնից բացի, կան նաև հատուկ կանոններ՝ ապացուցողական կանխավարկածներ, որոնց ուժով որոշակի փաստվկայակոչող գործին մասնակցող անձն ազատվում է այն ապացուցելու պարտականությունից: Ապացուցողական

<sup>198</sup> Տե՛ս De Lousanoff Oleg, and Klaus P.Moessle, "German Products Liability Law and the Impact of the EC Council Directive", The International Lawyer, 1988, N 22, էջեր՝ 677-678:

կան խավար կածներն ամրագրվում են առավել ապես  
 նյութական օրենսդրության նորմերում, սակայն  
 դատական պրակտիկայում ևս մշակվել են  
 ապացուցման պարտականությունն քաջ խելու հատուկ  
 կանոններ: ԶԶ վճռաբեկ դատարանը տարբեր  
 գործերով կայացված որոշումների  
 շրջանակներում նշել է, որ աշխատանքները  
 պատշաճ ծավալով կատարված լինելու հանգամանքն  
 ապացուցելը կապալառուի պարտականությունն է ,  
ծառայության մատուցված լինելու հանգամանքի  
 ապացուցման բեռն ամբողջությամբ կրում է  
 կատարողը , փոխառության գումարը  
 վերադարձնելու փաստի ապացուցման  
 պարտականությունը կրում է այն կողմը, որի վրա  
 օրենքով դրված է փոխառության մե ստացված գումարը  
 վերադարձնելու պարտականությունը ,  
աշխատողին հասանելիք գումարների վճարված  
 լինելու հանգամանքն ապացուցելու  
 պարտականությունը կրում է գործատուն, քանի որ  
 այն հաստատող ապացույցներ կարող է ներկայացնել  
 միայն ինքը , իր մոտ աշխատողի մասնագիտական  
 պատրաստվածությունը, որակավորմանը, առողջական  
 վիճակին համապատասխան այլ աշխատանքի  
 բացակայությունն ապացուցելու  
 պարտականությունը կրում է գործատուն, քանի որ  
 տվյալ դեպքում նման ապացույց կարող է ձեռք  
 բերվել միայն գործատուից <sup>199</sup>:

Ինչպես տեսնում ենք, ապացուցման  
 պարտականությունը քաջ խելու հատուկ կանոնների  
 նախատեսումը նպատակ է հետապնդում կողմերի միջև  
 ապահովել ողջամիտ և արդարացի  
 հավասարակշռություն՝ հաշվի առնելով

<sup>199</sup> Տե՛ս **Մեղրյան Ս.Գ.**, Ապացուցումը Հայաստանի  
 Հանրապետության քաղաքացիական դատավարությունում:  
 Դասախոսություններ: Երևանի պետ. համալս.: Եր., ԵՊՀ հրատ., 2012,  
 Էջեր՝ 104-107, 109-112:

գործնականում այս կամ այն կողմի համար որոշակի փաստերի ապացուցման դժվարությունը կամ անհնարիությունը: Յաշվի առնելով նյութական և դատավարական իրավունքի նորմերով Ապրանքների թերությունների հետևանքով վնաս պատճառելու դեպքում ապացուցման պարտականության բաշխման հատուկ կանոնների բացակայությունը՝ կարող ենք արձանագրել, որ տուժողը պետք է ապացուցի իր կյանքին, առողջությանը կամ գույքին պատճառված վնասի առկայությունը, Ապրանքների արտադրական, կառուցվածքային (և այլ) թերությունների, վնասի և ոչ իրավաչափ գործողության միջև պատճառահետևանքային կապի առկայությունը<sup>200</sup>:

Տուժողի կողմից վերը նշված՝ վնասի հատուցման պարտադիր պայմաններից որևէ մեկի ապացուցման անհնարիության դեպքում վնասը ենթակա չի լինի հատուցման: Մինչդեռ, ինչպես արդեն իսկ նշել էինք, վնասի հատուցման իրավունքի լիարժեք և արդյունավետ իրացման գրավականը տուժողի և վնաս պատճառողի շահերի արդարացի հավասարակշռության ապահովումն է: Ըստ այդմ, մի կողմից խնդրահարույց է տուժողին՝ վնասի հատուցման բոլոր պարտադիր պայմանների ապացուցման անհամաչափ պարտականությամբ ծանրաբեռնելը, մյուս կողմից՝ վնաս պատճառողին ապացուցման պարտականության տեսանկյունից լրացուցիչ անհիմն պահանջ առաջադրելը:

Մեր կարծիքով, տուժողի և վնաս պատճառողի շահերի պատշաճ հավասարակշռության ապահովման տեսանկյունից թերևս խնդրահարույց է վնասի հատուցման պարտադիր պայմաններից՝ Ապրանքների բոլոր թերությունների առկայության ապացուցման պարտականությունը սպառողի վրա

---

<sup>200</sup> Ապրանքների թերությունների հետևանքով պատճառված վնասը ենթակա է հատուցման՝ անկախ վնաս պատճառողի մեղքից:



դնելը՝ հաշվի չառնելով այդ թերուղթյունների  
առանձնահատուկ բնույթը: Այս տեսանկյունից հարց  
է առաջանում, թե արդյոք սպառողը, որպես ոչ  
արհեստավարժ սուբյեկտ, ունի Ապրանքների բոլոր  
թերուղթյունների առկայությունը ապացուցելու  
արդյունավետ հնարավորություն, և արդյոք  
վերջինիս տիրապետության տակ առկա են այդ  
թերուղթյունների առկայությունը հավաստող  
բավարար ապացույցներ:

Ըստ այդ, օրինակ Ապրանքների վերաբերյալ ոչ  
հավաստի կամ ոչ ամբողջական տեղեկություն  
տրամադրելու հետ կապված թերուղթյունների  
առկայության ապացուցումը սպառողից, որպես  
կանոն, ընդամենը պահանջում է ներկայացնել  
Ապրանքներին կցվող տեխնիկական փաստաթղթերը,  
պիտակները (կամ այլ փաստաթղթեր)՝ ապացուցելով,  
որ Ապրանքների մասին տրամադրվել են  
իրականությունը չհամապատասխանող  
տեղեկություններ կամ չի տրամադրվել  
ամբողջական ծավալով անհրաժեշտ  
տեղեկատվություն: Ապրանքների կառուցվածքային  
թերուղթյունների դեպքում տուժողը, որպես կանոն,  
պետք է մատնացույց անի Ապրանքների կառուցվածքի  
շեղումը համանման Ապրանքներին սովորաբար  
ներկայացվող պահանջներից: Մինչդեռ, Ապրանքների  
արտադրական թերուղթյունների առկայության  
ապացուցումը կարող է հանգեցնել որոշակի  
դժվարությունների հետևյալ  
պատճառաբանությամբ՝

1. սպառողը, որպես վնաս կրած անձ, մասնակից  
չլինելով Ապրանքների արտադրության,  
պատրաստման գործընթացին, զրկված է այդ  
պատճառով առաջացած Ապրանքների  
թերուղթյունների հավաստող անհրաժեշտ

ապացույցներ  
հնարավորությունից.

ներկայացնելու

2. Ապրանք արտադրողը, հանդիսանալով արտադրություն պրոցեսի նկատմամբ վերահսկողություն իրականացման անմիջական պատասխանատու, տիրապետում է Ապրանքների արտադրական թերութայնների բացակայությունը ապացուցելու անհրաժեշտ գործիքակազմի.

3. Հատկապես տեխնիկապես բարդ Ապրանքների թերութայնների դեպքում դրանց ապացուցումը սպառողի համար դառնում է անհնարին:

Այսպիսով, կարող ենք եզրահանգել, որ Ապրանքների արտադրական թերութայնների դեպքում, որպես կանոն, տուժողը օբյեկտիվորեն չի կարող ներկայացնել այդ թերութայնների առկայությունը հիմնավորող բավարար ապացույցներ, քանի որ դրանք, որպես կանոն, գտնվում են արտադրողի տիրապետության ներքո:

Հետևաբար, տուժողին ապացուցման տեսանկյունից նման պահանջ առաջադրելը վնաս պատճառողի համեմատ վերջինիս կդնի նվազ բարենպաստ պայմանում, իսկ ինչպես արձանագրել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանը դատավարությունում կողմերի իրավահավասարության սկզբունքը՝ կողմերի միջև «արդարացի հավասարակշռության» իմաստով, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի<sup>201</sup> 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված արդար դատաքննություն հիմնական տարրերից մեկն է և պահանջում է, որ յուրաքանչյուր կողմին տրամադրվի ողջամիտ հնարավորություն՝ ներկայացնելու իր գործնայնպիսի պայմաններում,

<sup>201</sup> Այսուհետ՝ Կոնվենցիա: Ընդունվել է 04.11.1950թ.: Ուժի մեջ է մտել 26.04.2002թ.: ՀՀ ԱԳՆ ՊՏ 2004.12.20/5(13):

այդ թվում՝ ապացույցներ ներկայացնելու, որոնք նրան իր հակառակորդի նկատմամբ չեն դնի էականորեն նվազ բարենպաստվիճակում<sup>202</sup>:

Այսպիսով, հաշվի առնելով նշվածը, կարևորելով տուժողի և վնաս պատճառողի միջև արդարացի, ողջամիտ հավասարակշռության ապահովման անհրաժեշտությունը՝ գտնում ենք, որ Ապրանքների արտադրական թերությունների դեպքում որպես ապացուցման պարտականությունը բաշխելու հատուկ կանոն, վնաս պատճառողի վրա պետք է դրվի դրանց բացակայության ապացուցման պարտականությունը, քանի որ նման ապացույցների ներկայացումը, որպես կանոն, տուժողի համար դժվարին է կամ անհնարին, և դրանք սովորաբար գտնում են վնաս պատճառողի տիրապետության ներքո:

---

<sup>202</sup> Տե՛ս **Ankerl v. Switzerland**, Գանգատ N 17748/91, 23 հոկտեմբեր 1996 թվականի ՄԻԵԴ վճիռ, կետ 38:

**Գ Լ ՈՒ Խ3.ԱՊՐԱՆՔՆԵՐԻ,ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ,  
ՃԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՅԵՏԵՎԱՆՔՈՎ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ  
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**§3.1. Ապրանքների, աշխատանքների,  
ծառայողների և ներքին թերոլթյունների հետևանքով  
գոլջքին պատճառված վնասի հատուցումը**

Քաղաքացիական օրենսդրության 2րջանառության մասնակցների իրավունքների և օրինական շահերի պատշաճ պաշտպանության, իրավահարաբերության մասնակցի կողմից իրավահարաբերության մյուս մասնակցի վրա ներգործելու արդյունավետ հնարավորությունների առկայության և դրանց կենսագործման հանգամանքով է մեծապես պայմանավորված Ապրանքների թերոլթյունների հետևանքով պատճառված վնասի հատուցման համակարգի կենսունակությունը: Ըստ այդմ, անձին ընձեռվող պաշտպանության ցանկացած համակարգ նախևառաջ պետք է լինի արդյունավետ, կենսունակ, ինչպես նաև համարժեք պաշտպանվող շահի էությունը և բնույթին:

Այս տեսանկյունից պատահական չէ եվրոպական դելիկտային իրավունքի սկզբունքներով (2:102 հոդված) այն կարևորագույն գաղափարի շեշտադրումը, որ արտապայմանագրային հարաբերությունների շրջանակում անձի շահերի պաշտպանության ծավալը կախված է պաշտպանվող շահի բնույթից: Որքան բարձր է շահի արժեքը, որքան այն ակնհայտ է և որոշակի, այնքան առավել ընդարձակ է դրան տրվող պաշտպանությունը: Ըստ այդմ, անձի կյանքը, ֆիզիկական և հոգեկան առողջությունը, արժանապատվությունը,

ազատութեան իրավունքը, սեփականության իրավունքը պետք է վայելեն ամենաընդարձակ պաշտպանութեան իսկ Լատինական և Ասիական շահը կարող են վայելել առավել սահմանափակ պաշտպանութեան<sup>203</sup>:

Քաղաքացիական օրենսդրությունը, նպատակ ունենալով պաշտպանել քաղաքացիաիրավական հարաբերությունները մասնակիցների իրավունքներն ու ազատությունները, սահմանել է դրոյթներ, որոնք կոչված են ապահովելու այդ մասնակիցների հավասար մասնակցությունը քաղաքացիաիրավական շրջանառությանը, ինչպես նաև պաշտպանելու վերջիններիս այդ հարաբերությունների շրջանակներում: Այստեղ, մեծ կարևորություն է տրվում այնպիսի արժեքների պաշտպանությանը, ինչպիսիք են սեփականությունը, կյանքը և առողջությունը<sup>204</sup>: Սեփականության պաշտպանության կարևորությունն արդեն իսկ ընդգծվում է դրա՝ սահմանադրական մակարդակով ամրագրված և երաշխավորված լինելով: Կյանքը և առողջությունը ևս կարևորագույն բարիքներ են, իսկ կյանքին և առողջությանը վնաս պատճառելու դեպքում խախտվում են անձի բացարձակ իրավունքները (բարիքները)<sup>205</sup>: Առողջությունը մարդու ֆիզիկական, հոգեկան և սոցիալական բարեկեցիկ վիճակն է, իսկ առողջության առավելագույն հասանելի մակարդակի

<sup>203</sup> Տե՛ս Principles of European Tort Law, European Group on Tort Law, 2005, էջեր՝ 1-2, հասանելի է՝ <http://civil.udg.edu/php/biblioteca/items/283/PETL.pdf> հղումով՝ 03.04.2018 թվականի դրությամբ:

<sup>204</sup> Տե՛ս **Բեքմեզյան Գ.Յ.**, Արտապայմանագրային պարտավորություններ, մենագրություն, Եր., Երևանի պետ. համալս. հրատ., 2009, էջ 197:

<sup>205</sup> Տե՛ս **Титаренко Д.Н.**, "К вопросу о юридической природе обязательства по возмещению вреда, причиненного жизни или здоровью работника", Бизнес в законе, Экономико-юридический журнал, Москва, 2011, N 3, էջ 70:

տիրապետու մը համարվում է յուրաքանչյուր մարդու հիմնական իրավունքներին ցմեկը <sup>206</sup>:

Նշված բարիքների իրավական պաշտպանության հրատեղությունը յամբ է պայմանավորված նաև Քաղաքացիական օրենսգրքի 60-րդ գլխի 3-րդ պարագրաֆով Ապրանքների թերությունների հետևանքով անձի կյանքին, առողջությանը և գույքին պատճառված վնասի հատուցման ինստիտուտի ամրագրումը: Յարկ է նշել, որ արտասահմանյան երկրների օրենսդրությունը ևս Ապրանքների թերությունների հետևանքով վնաս պատճառելու դեպքում հատուցման ենթակա է դիտարկվում՝

1) անձի մահվամբ ծագած վնասը, 2) առողջությանը պատճառված վնասը, 3) սեփականության իրավունքի ցանկացած օբյեկտին պատճառված վնասը (կամ դրան չնչացումը)<sup>207</sup>: Այսինքն, որպես պաշտպանության ենթակա հիմնական բարիքներ այլ երկրներում ևս առանձնացվում են անձի կյանքը, առողջությունը <sup>208</sup> և սեփականությունը:

---

<sup>206</sup> Տե՛ս Յայաստանի Յանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ, **Գ.Յարուկյանի** և **Ա.Վաղարշյանի խմբ.**, «Իրավունք» հրատ., 2010, էջեր՝ 454-455:

<sup>207</sup> Տե՛ս **Council Directive 85/374/EEC** of 25 July 1985 on the approximation of the laws, regulations and administrative provisions of the Member States concerning liability for defective products, Official Journal L 210, 07/08/1985, P.0029-0033, հոդված 9:

<sup>208</sup> Ուշադրություն է արժանի նաև այն, որ եվրոպական երկրները հնարավորություն ունեն են անձի կյանքին և առողջությանը համանման ապրանքի նույն թերությունը վնաս պատճառելու դեպքում նախատեսել տրամադրվող հատուցման առավելագույն շեմ, որը չի կարող պակաս լինել 70 միլիոն ECU-ից (եվրոպական դրամային միավոր): Եվրոպական երկրների մեծ մասը հրատարակել է այս մոտեցումից, սակայն կան երկրներ, որոնք նախատեսել են նման առանձնահատկություն: Օրինակ Գերմանիայում նախատեսվում է մինչև 160 միլիոն DM (80 միլիոն եվրո) հատուցում տրամադրելու հնարավորություն այն դեպքում, երբ անձին կամ նրա կյանքին վնաս է պատճառվել համանման ապրանքի (ապրանքների) նույն թերության պատճառով: Այդ մասին առավել մանրամասն տե՛ս **Council Directive 85/374/EEC** of 25 July 1985 on the approximation of the laws, regulations and administrative provisions of the Member States concerning liability for defective products, Official Journal L 210, 07/08/1985, P.0029-0033, հոդված 16 և **De Lousanoff Oleg** and **Klaus P. Moessle**, "German Products Liability Law and the Impact of the EC Council Directive", The International Lawyer, 1988, N 22, էջ 684:

Ապրանքների թերու թյու ների հետևանքով վնաս պատճառելու դեպքում անձին տրվող իրավական պաշտպանությունն է դանակների արդյունավետությունը պայմանավորված է այդ հարաբերությունների բնույթից բխող, դրանց էությունը արտահայտող ներգործության համարժեք և համաչափ միջոցների կիրառման հանգամանքով, ինչի արդյունքում առավելագույնս պետք է ապահովվի հակաիրավական վարքագծի դրսևորմամբ անձին պատճառված վնասների ամբողջական հատուցումը:

Այս տեսանկյունից պատահական չէ Քաղաքացիական օրենսգրքի 14-րդ հոդվածով, ի թիվս քաղաքացիական իրավունքների պաշտպանությունն այլ է դանակների, վնասների հատուցումը որպես իրավունքների պաշտպանություն ինքնուրույն է դանակ առանձնացնելը: Քաղաքացիական իրավունքների պաշտպանության այս է դանակի կարևորությունն առավել ընդգծվում է քաղաքացիական օրենսդրությամբ վնասների լրիվ հատուցման սկզբունքի ամրագրմամբ:

Իրավագետները, մատնանշելով վնասների լրիվ հատուցման սկզբունքի նշանակությունը, ընդգծում են, որ միայն այդ սկզբունքով առաջնորդվելու դեպքում է հնարավոր վերականգնել այն վիճակը, որը գոյություն ուներ իրավախախտման պահին, միայն այդ սկզբունքի շնորհիվ է ապահովվում այն անձանց շահերի համակողմանի պահպանությունը, որոնք վնասներ են կրում: Վնասների հատուցումը որպես իրավունքների պաշտպանություն ընդհանուր միջոց կիրառվում է ցանկացած իրավախախտմամբ առաջացած գույքային (որոշ դեպքերում նաև՝ անձնական ոչ գույքային) կորուստները փոխհատուցելու համար: Որպես պատասխանատվության ունիվերսալ միջոց

այն քաղաքացիական օրենսգրքի ընդհանուր նորմերի ուժով կիրառվում է յուրաքանչյուր իրավախախտման դեպքում, անկախ նրանից տվյալ խախտման համար դրա կիրառությունը իրավական հատուկ նորմով կամ պայմանագրով նախատեսված է, թե ոչ: Դրա կիրառությամբ ապահովվում է երկու խնդիր: Նախ իրավախախտումից տուժած սուբյեկտը հնարավորություն է ստանում փոխհատուցել իր գույքի կորուստը, կատարած ծախսերը և լրացնել իրավախախտման հետևանքով չստացված եկամուտները, ապա՝ նվազեցնում է իրավախախտողի եկամուտները դրանից բխող բոլոր հետևանքներով<sup>209</sup>:

Նշված հանգամանքի հաշվառմամբ առավել մանրամասն անդրադառնալով Ապրանքների թերությունների հետևանքով գույքին պատճառված վնասի հատուցման առանձնահատկությունների քննարկմանը: Այս խնդիրը ուսումնասիրությունների առարկա է դարձել ինչպես գիտական հարթությունում, այնպես էլ իրավակիրառությունում:

Ապրանքների թերությունների հետևանքով գույքին պատճառված վնասի հատուցման առանձնահատկությունների վերլուծության համար անհրաժեշտ է քննարկել հետևյալ հարցերը՝

1. ո՞ր դեպքում թերություն ունեցող Ապրանքի ձեռքբերումը կարող է դիտարկվել որպես անձի □գույքին □պատճառված վնասի առկայություն.

2. արդյո՞ք Ապրանքի թերության հետևանքով ցանկացած գույքին պատճառված վնասի հատուցումը կարող է իրականացվել քաղաքացիական օրենսգրքի 60-րդ գլխի 3-րդ պարագրաֆի դրույթների հիման վրա (առանց մեղքի պատասխանատվություն, տուժողի և

<sup>209</sup> Տե՛ս **Քարտեղյան Տ.Կ.**, Գույքային պատասխանատվության ինստիտուտի էվոլյուցիան և արդիական հիմնահարցերը, Երևան, Երևանի համալս.հրատ., 2006, էջեր՝ 154-155, 145-147:



վնաս պատճառողի միջև պայմանագրային հարաբերությունների մեջ գտնվելու հանգամանքից անկախ պատասխանատվություն և այլն)։

Այսպես, Քաղաքացիական օրենսգրքի 1088-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է, որ Ապրանքների կառուցվածքային կամ այլ թերույթությունների, ինչպես նաև դրանց մասին ոչ ճիշտ կամ ոչ բավականաչափ ճշգրիտ տեղեկատվություն տրամադրելու հետևանքով անձի գույքին պատճառված վնասը ենթակա է հատուցման։

Նախ և առաջ անդրադառնանք առաջին հարցին, քննարկելով, թե արդյոք Քաղաքացիական օրենսգրքի 1088-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով որպես գույք կարող է դիտարկվել ձեռքբերված այն Ապրանքը, որն ունի արտադրական, կառուցվածքային կամ այլ թերույթություն, թե որպես գույք կարող է դիտարկվել միայն ձեռքբերված Ապրանքի թերույթյան հետևանքով անձին պատկանող այլ գույքը, որին վնաս է պատճառվել։

Օրինակ, անձը ձեռք է բերում օդորակիչ և պարզվում է, որ այն ունի արտադրական թերույթություն, ինչի պատճառով չի աշխատում։ Յարգեառաջանում, թե արդյո՞ք անձը կարող է Քաղաքացիական օրենսգրքի 60-րդ գլխի 3-րդ պարագրաֆի դրույթների հիման վրա ներկայացնել վնասի հատուցման պահանջ այն հիմնավորմամբ, որ ձեռք է բերել թերույթուն ունեցող ապրանք, ինչը արդեն իսկ վկայում է վնաս պատճառելու մասին։

Մենք հակված են այն տեսակետին, որ Քաղաքացիական օրենսգրքի 1088-րդ հոդվածի 1-ին մասում օգտագործվող «գույքին պատճառված վնաս» հասկացությունը պետք է բացառապես մեկնաբանվի որպես ձեռք բերված Ապրանքի թերույթյան հետևանքով անձին պատկանող «այլ գույքին»

պատճառված վնաս, իսկ միայն թերու թյու ն ու ն ե ց ո ղ Ապրանքի ձեռքբերումը (առկայությունը) առանց այլ գույքին վնաս պատճառելու չի կարող հիմք հանդիսանալ արտապայմանագրային պատասխանատվության կանոններով գույքին պատճառված վնասի հատուցում պահանջելու համար: Նշված եզրահանգումը պայմանավորված է նրանով, որ Քաղաքացիական օրենսգրքի 1088-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված «գույքին պատճառված վնաս» արտահայտությունը պետք է դիտարկվի արտապայմանագրային պատասխանատվության պայմաններին՝ մասնավորապես հակաիրավական վարքագծի, վնասի և դրանց միջև անհրաժեշտ պատճառահետևանքային կապի առկայության ողջամիտ տրամաբանության պահպանման տեսանկյունից:

Քաղաքացիական օրենսգրքի 1088-րդ հոդվածի 1-ին մասի իրավակարգավորման լույսի ներքո Ապրանքի թերու թյան առկայությունը վկայում է Ապրանքվաճառողի (արտադրողի, ծառայություն մատուցողի, աշխատանք կատարողի) հակաիրավական վարքագծի դրսևորման մասին, որը պատճառահետևանքային կապի տեսանկյունից պետք է հանգեցնի այլ վնասի պատճառմանը: Հակառակ պարագայում, արտադրական, կառուցվածքային կամ այլ թերու թյու ն ու ն ե ց ո ղ Ապրանքի առկայությունը որպես գույքին պատճառված վնաս որակելը կհանգեցնի արտապայմանագրային պատասխանատվության պայմաններին հակաիրավական վարքագծի, դրահետևանքով պատճառված վնասի նույնացմանը և պատճառահետևանքային կապի բացակայության պայմաններում վնասի հատուցում տրամադրելու հնարավորությունը:

Բացի այդ, հարկ է նշել, որ պայմանագրով Ապրանք ձեռք բերելու պարագայում դրա թերու թյան

առկայությունը (հայտնաբերումը), որպես կանոն, վկայում է պայմանագրով Ապրանքի որակին կամ այլ հատկանիշներին առաջադրվող պահանջների խախտման մասին, և հետևաբար այս պարագայում գործում են քաղաքացիական օրենսգրքի՝ պայմանագրային պարտավորությունների կարգավորմանն ուղղված այն դրույթները, որոնք կապված են գույքի որակի կամ դրա այլ հատկանիշների հետ:

Ուշադրություն է արժանի այն, որ բազմաթիվ երկրներում Ապրանքների թերությունների հետևանքով պատճառված վնասի հատուցման հարաբերությունները կարգավորող ակտերում շեշտադրվում է այն գաղափարը, որ միայն թերություն ունեցող Ապրանքի ձեռքբերումը չի կարող հիմք ծառայել արտապայմանագրային պատասխանատվություն նախատեսող դրույթների հիման վրա վնասի հատուցման պահանջներ կայացնելու համար<sup>210</sup>: Օրինակ՝ նման մոտեցում է դրսևորվում Ավստրիայում<sup>211</sup>, Իսպանիայում<sup>212</sup>, Գերմանիայում<sup>213</sup>, Իտալիայում<sup>214</sup>, Ֆինլանդիայում<sup>215</sup>, Մեծ Բրիտանիայում<sup>216</sup>, Իռլանդիայում<sup>217</sup> և այլ երկրներում:

<sup>210</sup> Այդ մասին առավել մանրամասն տե՛ս **Council Directive 85/374/EEC of 25 July 1985 on the approximation of the laws, regulations and administrative provisions of the Member States concerning liability for defective products**, Official Journal L 210, 07/08/1985, P.0029-0033:

<sup>211</sup> Տե՛ս The Federal Act of Austria Governing the Liability for a Defective Product (Product Liability Act), (Federal Law Gazette No.99/1988), (21.01.1988), հոդված 1, հասանելի է՝ [https://www.ris.bka.gv.at/Dokument.wxe?Abfrage=Erv&Dokumentnummer=ERV\\_1988\\_99](https://www.ris.bka.gv.at/Dokument.wxe?Abfrage=Erv&Dokumentnummer=ERV_1988_99) հղումով՝ 08.06.2018 թվականի դրությամբ:

<sup>212</sup> Տե՛ս **Sanchez Antonio J. Vela**, նշված աշխատ., էջ 1005:

<sup>213</sup> Տե՛ս **Wandt M.**, "German Approaches to Products Liability", Tex. Int'l LJ, 1999, N 34, էջ 86:

<sup>214</sup> Տե՛ս **Dreyfuss Richard H.**, նշված աշխատ., էջ 62:

<sup>215</sup> Տե՛ս The Act of Finland on Product Liability, (1990), հոդված 2, հասանելի է՝ <http://finlex.fi/en/laki/kaannokset/asiasanat.php?start=a&id=1142> հղումով՝ 03.04.2018 թվականի դրությամբ:

<sup>216</sup> Տե՛ս The UK Act on Consumer Protection, (1987), մաս 1-ին, հոդված 5, հասանելի է՝ <https://www.legislation.gov.uk/ukpga/1987/43/contents> հղումով՝ 03.04.2018 թվականի դրությամբ:

<sup>217</sup> Տե՛ս The Act of Ireland on Liability For Defective Products, (1991), հոդված 1, հասանելի է՝ <http://www.irishstatutebook.ie/eli/1991/act/28/enacted/en/print.html> հղումով՝ 03.04.2018 թվականի դրությամբ:

Ամերիկյան իրավական համակարգում այս հարցն իր լուծումը ստացել է դատական պրակտիկայի կողմից: Այս տեսանկյունից հետաքրքրություն է ներկայացնում *East River Steamship Corp. v. Transamerica Delaval Inc* գործը<sup>218</sup>, որի շրջանակում հայցվորը ներկայացնում է վնասի՝ ներառյալ բաց թողնված օգուտի հատուցման պահանջ այն հիմնավորմամբ, որ, որպես նավաշինարար, պայմանավորվածություն է ձեռք բերել *Transamerica Delaval* կազմակերպության հետ ջրանիվեր նախագծելու, արտադրելու և տեղադրելու վերաբերյալ: Ջրանիվերը պետք է օգտագործվեին նավթատար նավերի համար, սակայն հետագայում պարզվում է, որ ջրանիվերը ունեցել են թերություններ, որի արդյունքում վնասվել են: Քննելով վնասի հատուցման պահանջը՝ դատարանը այն մերժում է, նշելով, որ արտադրողը արտապայմանագրային հարաբերությունների շրջանակում չի կրում ապրանքի՝ ինքն իրեն վնասելը կանխելու պարտականություն: Դատարանն ընդգծում է, որ նման վեճերի լուծման դեպքում իրավական պաշտպանության պատշաճ միջոցը պայմանագրային իրավունքն է: Դատարանը մտահոգություն է հայտնում առ այն, որ նման պահանջի բավարարումը արտապայմանագրային պատասխանատվության դրոյթների հիման վրա կհանգեցնի պայմանագրային իրավունքի՝ դեֆիկտի օժովի օմեջ փետղովելուն<sup>219</sup>:

Այսպիսով՝ իրականացված վերլուծությունը վկայում է, որ միջազգային իրավական ասպարեզում ևս ընդունված մոտեցումն այն է, որ թերությունն ունեցող Ապրանքի առկայությունը (ձեռքբերումը)

<sup>218</sup> Այդ մասին առավել մանրամասն տե՛ս *East River Steamship Corp. v., Transamerica Delaval Inc*, 476 U.S. 858, 106 S. Ct. 2295, 90 L. Ed. 2d 865 (1986), 16 հունիս 1986 թվականի ԱՄՆ գերագույն դատարանի որոշում:

<sup>219</sup> Տե՛ս *Sawaya Danielle*, "Not Just for Products Liability: Applying the Economic Loss Rule Beyond Its Origins", *Fordham L. Rev.*, 2014, N 83, էջ 1086, էջ 1093:

չի կարող որակվել որպես գոլթին պատճառված վնաս, և, ըստ այդմ, հիմք հանդիսանալ արտապայմանագրային պատասխանատվության համար:

Այժմ անդրադառնանք այն հարցի քննարկմանը, թե արդյո՞ք Ապրանքի թերութային հետևանքով ցանկացած գոլթին վնաս պատճառելու դեպքում վնասի հատուցումը կարող է իրականացվել Քաղաքացիական օրենսգրքի 60-րդ գլխի 3-րդ պարագրաֆի դրույթների հիման վրա:

Այս հարցը բազում քննարկումների առարկա է դարձել նաև մասնագիտական գրականության մեջ՝ պայմանավորված տարբեր մոտեցումների առկայությամբ: Մասնավորապես՝ որոշ երկրներում Ապրանքների թերութայնների հետևանքով գոլթին պատճառված վնասի հատուցումը պայմանավորված է այդ գոլթի կարգավիճակով, իսկ որոշ երկրներում (սահմանափակ թվով)՝ ոչ:

Այսպես, եվրոպական երկրների մեծ մասի օրենսդրությամբ Ապրանքների թերութայնների հետևանքով գոլթին պատճառված վնասի հատուցումը թույլատրվում է իրականացնել Ապրանքների թերութայնների հետևանքով պատճառված վնասի հատուցման հարաբերութայնները կարգավորող ակտերի դրույթների հիման վրա միայն այն դեպքում, երբ վնաս է պատճառվել, որպես կանոն, մասնավոր (անձնական) օգտագործման համար նախատեսված գոլթին: Այլ կերպ ասած՝ արտապայմանագրային պատասխանատվություն սահմանող նորմերի հիման վրա գոլթին պատճառված վնասի հատուցումը թույլատրվում է այն դեպքում, երբ նման գոլթի կարգավիճակն այնպիսին է, որ կապված չէ անձի մասնագիտական կամ ձեռնարկատիրական գործունեության հետ: Այս մոտեցումը ամրագրված

Ե քաղաքում երկրներին՝ այդ թվում Գերմանիայի <sup>220</sup>,  
 Իտալիայի <sup>221</sup>, Իսպանիայի <sup>222</sup>, Ավստրիայի <sup>223</sup>,  
 Ֆինլանդիայի <sup>224</sup>, Մեծ Բրիտանիայի <sup>225</sup>, Իռլանդիայի <sup>226</sup> և  
 այլ երկրներին օրենսդրությամբ: Օրինակ՝  
 Գերմանիայում գոլյքին պատճառված վնասը  
 հատուցվում է այն դեպքում, երբ նման գոլյքը,  
 որպես կանոն, օգտագործվել է մասնավոր  
 նպատակով <sup>227</sup>: Որոշ երկրներ առավել խիստ  
 պահանջներ են նախատեսում գոլյքին պատճառված  
 վնասի հատուցման կապակցությամբ: Մասնավորապես,  
 Իսպանիայում գոլյքին պատճառված վնասը  
 հատուցվում է, եթե այդ գոլյքը ակնհայտորեն  
 նախատեսված է մասնավոր օգտագործման կամ  
 սպառման համար, և որպես այդպիսին առավել ապես  
 օգտագործվել է տուժողի կողմից <sup>228</sup>:

Ինչպես տեսնում ենք, երկրներին մի խումբ  
 գոլյքին պատճառված վնասի հատուցումը  
 պայմանավորում են այդ գոլյքի կարգավիճակով, և  
 թույլատրում վնասի հատուցումը միայն  
 մասնագիտական կամ ձեռնարկատիրական  
 գործունեության հետ առնչությունն չունեցող  
 գոլյքին վնաս պատճառելու դեպքում, իսկ այլ

<sup>220</sup> Տե՛ս The Act of Germany on Product Liability, (Federal Law Gazette I, p. 2198), (15.12.1989), հոդված 1, հասանելի է՝ [https://www.gesetze-im-internet.de/englisch\\_prodhaftg/englisch\\_prodhaftg.html](https://www.gesetze-im-internet.de/englisch_prodhaftg/englisch_prodhaftg.html) հղումով՝ 03.04.2018 թվականի դրությամբ:

<sup>221</sup> Տե՛ս **Dreyfuss Richard H.**, նշված աշխատ., էջ 62:

<sup>222</sup> Տե՛ս **Sanchez Antonio J. Vela**, նշված աշխատ., էջ 1005:

<sup>223</sup> Տե՛ս The Federal Act of Austria Governing the Liability for a Defective Product (Product Liability Act), (Federal Law Gazette No.99/1988), (21.01.1988), հոդված 2, հասանելի է՝ [https://www.ris.bka.gv.at/Dokument.wxe?Abfrage=Erv&Dokumentnummer=ERV\\_1988\\_99](https://www.ris.bka.gv.at/Dokument.wxe?Abfrage=Erv&Dokumentnummer=ERV_1988_99) հղումով՝ 08.06.2018 թվականի դրությամբ:

<sup>224</sup> Տե՛ս The Act of Finland on Product Liability, (1990), հոդված 1, հասանելի է՝ <http://finlex.fi/en/laki/kaannokset/asiasanat.php?start=a&id=1142> հղումով՝ 03.04.2018 թվականի դրությամբ:

<sup>225</sup> Տե՛ս The UK Act on Consumer Protection, (1987), մաս 1-ին, հոդված 5, հասանելի է՝ <https://www.legislation.gov.uk/ukpga/1987/43/contents> հղումով՝ 03.04.2018 թվականի դրությամբ:

<sup>226</sup> Տե՛ս The Act of Ireland on Liability For Defective Products, (1991), հոդված 1, հասանելի է՝ <http://www.irishstatutebook.ie/eli/1991/act/28/enacted/en/print.html> հղումով՝ 03.04.2018 թվականի դրությամբ:

<sup>227</sup> Տե՛ս The Act of Germany on Product Liability, (Federal Law Gazette I, p.2198), (15.12.1989), հոդված 1, հասանելի է՝ [https://www.gesetze-im-internet.de/englisch\\_prodhaftg/englisch\\_prodhaftg.html](https://www.gesetze-im-internet.de/englisch_prodhaftg/englisch_prodhaftg.html) հղումով՝ 03.04.2018 թվականի դրությամբ:

<sup>228</sup> Տե՛ս **Sanchez Antonio J. Vela**, նշված աշխատ., էջ 1005:

երկրներում (օրինակ՝ Իսպանիայում) Պորտուգալական Պաահանջը փոխակերպվում է մասնավոր օգտագործման համար գույքի Պակնհայտորեն նախատեսված լինելու պահանջով: Սակավաթիվ երկրներ՝ օրինակ Կորեան դրսևորում են այլ մոտեցում, և գույքին պատճառված վնասի հատուցումը այստեղ պայմանավորված չէ այդ գույքի կարգավիճակով<sup>229</sup>: Բացառիկ է այս հարցում եվրոպական երկրներից Ֆրանսիան, որի օրենսդրությամբ հատուցվում է նաև ոչ մասնավոր օգտագործման համար նախատեսված գույքին պատճառված վնասը<sup>230</sup>:

Այս կապակցությամբ գրականության մեջ հաճախ քննարկվում է գույքին պատճառված վնասի հատուցումը այդ գույքի կարգավիճակով պայմանավորելու հարցի հիմնավորվածությունը: Ըստ այդմ, հաճախ բարձրացվում է այն հարցը, թե արդյոք անհրաժեշտ չէ հատուցման պահանջներ կայացնելու հնարավորությունն նախատեսել նաև մասնագիտական կամ առևտրային գործունեության հետ առնչություն ունեցող գույքին վնաս պատճառելու դեպքում<sup>231</sup>: Այս մոտեցման դեմ արտահայտված կարծիքները գերակշռող են գրականության մեջ, և այդ կապակցությամբ նշվում է, որ այլ՝ մասնագիտական կամ առևտրային գործունեության հետ կապված գույքին պատճառված վնասի դեպքում անձը կարող է պահանջել վնասի հատուցում պայմանագրի կամ վնասի հատուցումը կարգավորող այլ դրույթների

<sup>229</sup> Տե՛ս **Kim Chan Jin**, նշված աշխատ., էջ 112:

<sup>230</sup> Տե՛ս **Green Paper** "Liability for Defective Products, Commission of the European Communities", Brussels, 1999, էջ 32, հասանելի է՝ [http://aei.pitt.edu/1217/1/defective\\_products\\_gp\\_COM\\_99\\_396.pdf](http://aei.pitt.edu/1217/1/defective_products_gp_COM_99_396.pdf) հղումով՝ 03.04.2018թվականի դրությամբ:

<sup>231</sup> Տե՛ս նույն տեղում:

հիման վրա<sup>232</sup>: Մեր կարծիքով, նշված հարցին լիարժեք պատասխան տալու համար անհրաժեշտ է հաշվի առնել ստորև նշված երկու կարևորագույն հանգամանքները.

Նախ, արտապայմանազրային պատասխանատվությունը սահմանող նորմերի հիման վրա վնաս պատճառած անձի առանց մեղքի պատասխանատվությունը (որն առավել խստագված է) կարող է վրա հասնել, իսկ վնասի հատուցման պահանջը բավարարվել միայն այն պարագայում, երբ պահպանված է այնպիսի կարևորագույն նախապայման, ինչպիսին՝ Ապրանքները ի սկզբանե բացառապես անձնական, ընտանեկան, տնային կամ համանման այլ օգտագործման համար ձեռք բերելը (1088-րդ հոդված 2-րդ մաս) և ըստ այդ նպատակի օգտագործելն է:

Այլ կերպասած՝ Ապրանքի որոշակի նպատակային նշանակությունը ամբ ձեռք բերումը ենթադրում է դրա օգտագործման ռեժիմի առանձնահատկություն, որից էլ բխում է, որ Ապրանքների թերությունների հետևանքով պատճառված վնասի հատուցման կանոնների կիրառումը պայմանավորված է ոչ միայն Ապրանքի՝ բացառապես սպառողական օգտագործման նպատակով ձեռք բերելով, այլև փաստացի այդ նպատակի համար օգտագործելու հանգամանքով:

Այլ կերպասած՝ ապրանքի որոշակի նպատակային նշանակությունը ամբ օգտագործումը ենթադրում է այն միջավայրի (գույքի) կարգավիճակի առանձնահատկություն, որտեղ այն տեղադրվել կամ որում օգտագործվում է: Սա իր հերթին, որպես կանոն, ենթադրում է սպառողական նպատակով ձեռք բերված ապրանքի օգտագործում այնպիսի միջավայրում, որը անմիջականորեն կապված չէ անձի մասնագիտական

---

<sup>232</sup> Տե՛ս **Report** from the Commission on the Application of Directive 85/374 on Liability for Defective Products, Brussels, 2001, էջ 25, հասանելի է՝ <http://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=CELEX%3A52000DC0893> հղումով՝ 03.04.2018 թվականի դրությամբ:



կամ ձեռնարկատիրական գործունեության հետ:

Մեր կարծիքով, ուշադրության արժանի մյուս հանգամանքն այն է, որ գույքին պատճառված վնասի հատուցումը այդ գույքի կարգավիճակով չպայմանավորելը կարող է հանգեցնել վնաս պատճառած անձի անսահմանափակ պատասխանատվության: Նշվածը հիմնավոր է նաև այն տեսանկյունից, որ վնասի հատուցման ինստիտուտը տրամաբանական շղթայով կապված է ապրանք արտադրողին (վաճառողին) առաջադրվող հիմնական պարտականության երկրորդ աստիճանի հետ, որը հանգում է նրան, որ արտադրողը (վաճառողը) պետք է ապահովվի սպառողական նպատակով արտադրված (իրացված) և շրջանառության մեջ դրված ապրանքների համապատասխանությանը (նախատեսված որոշակի միջավայրում որոշակի գործառնությունից համար) անվտանգության նվազագույն չափանիշներին, որպեսզի չստեղծվեն անձի կյանքին, առողջությանը կամ գույքին վնաս պատճառելու ռիսկեր: Յակառակ պարագայում, եթե արտադրողը (վաճառողը) պատասխանատվություն կրի նաև բիզնես միջավայրում (այդ թվում՝ մասնագիտական) ապրանքի անվտանգ գործածության համար, ապավերջինիս պատասխանատվությունը կկրի անսահմանափակ, անկանխատեսելի բնույթ:

Իրականացված վերլուծության հաշվառմամբ՝ գտնում ենք, որ ապրանքների թերություններին հետևանքով գույքին պատճառված վնասը կարող է հատուցվել Քաղաքացիական օրենսգրքի 60-րդ գլխի 3-րդ պարագրաֆի դրույթների հիման վրա այն դեպքում, երբ վնաս է պատճառվել այն գույքին, որը անմիջականորեն կապված չէ անձի մասնագիտական կամ ձեռնարկատիրական գործունեության հետ:

Ըստ այդմ, ցանկացած գործով անհրաժեշտ է ինքնուրույն գնահատման առարկա դարձնել

Ապրանքի թերու թյան հետևանքով գոլյքին պատճառված վնասի հատուցման հարցը՝ պարզելով սպառողական նպատակով ձեռք բերված Ապրանքի առնչությունը ձեռնարկատիրական կամ մասնագիտական միջավայրի և ըստ այդմ պատճառված վնասի հետ: Ընդ որում, դատարանները նման եզրահանգման գալու համար որպես ուղենիշներ կարող են օգտագործել այնպիսի հանգամանքներ, ինչպիսիք են՝ տվյալ գոլյքի կարգավիճակը, թերու թյունը և նեցող Ապրանքի և վնասված գոլյքի փոխկապվածությունը աստիճանը իրականացվող ձեռնարկատիրական, մասնագիտական գործունեության և դրանց արդյունքում հետապնդվող նպատակների միջև:

**§3.2. Բաց թողնված օգուտի հատուցումը ապրանքների, աշխատանքների, ծառայությունների թերու թյունների հետևանքով գոլյքին վնաս պատճառելու դեպքում**

Վերլուծելով Ապրանքի թերու թյան հետևանքով գոլյքին պատճառված վնասի հատուցման առանձնահատկությունների հարցը, կցանկանայինք անդրադառնալ նաև գոլյքին վնաս պատճառելու դեպքում բաց թողնված օգուտի հատուցման խնդրին՝ հաշվի առնելով այս երկու հարցերի սերտ փոխկապվածությունը:

Ապրանքների թերու թյունների հետևանքով պատճառված վնասի դեպքում բաց թողնված օգուտի հատուցման հարցը քննարկման առարկա է դարձել նաև գրականության մեջ, և դրա վերաբերյալ արտահայտվել են տարբեր տեսակետներ: Որոշ հեղինակներ գտնում են, որ սպառողը անխտիր բոլոր դեպքերում ունի բաց թողնված օգուտի հատուցման իրավունք, իսկ հեղինակների մյուս խումբը բացառում են այդ հնարավորությունը, կամ բաց

թողնված օգուտի հատուցումը պայմանավորում են որոշակի պայմաններով <sup>233</sup>:

Ինչպես գիտենք, Քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածով վնասների շարքում, ի թիվս վնասների այլ տեսակների, առանձնացվում են անբաց թողնված օգուտը: Ինչպես նշում է Ե.Ա.Սուխանովը, վնասների կազմի մեջ առաջին հերթին մտնում են այն ծախսերը, որոնք տուժողը կատարել է կամ պետք է կատարի իրավախախտման հետևանքները վերացնելու համար, երկրորդ՝ տուժողի կորցրած կամ վնասված գույքի արժեքը, երրորդ՝ տուժողի չստացված եկամուտները, որոնք վերջինս կստանար իրավախախտման բացակայության դեպքում <sup>234</sup>:

Գ.Ֆ. Շերշենևիչը բաց թողնված օգուտը բնորոշում է որպես «կորցրած եկամուտ»: Գույքի արժեքի նվազեցման հետ կապված վնասները համեմատած այն արժեքի հետ, որն գույքն ուներ մինչև իրավախախտումը, հեղինակը բնորոշում է որպես իրական վնաս, իսկ գույքի արժեքի նվազեցման հետ կապված վնասները համեմատած այն արժեքի հետ, որն գույքը կարող էր ունենալ իրավախախտման տեղի չունենալու պարագայում՝ որպես բաց թողնված օգուտ <sup>235</sup>: Յու. Ժարիկովը իր հերթին բաց թողնված օգուտը բնորոշում է որպես կողմի այն չստացված եկամուտները, որոնք առաջացել են մեկ այլ կողմի հակաիրավական գործողությունների արդյունքում <sup>236</sup>: Անդրադառնալով դեղիկտային հարաբերությունների շրջանակում բաց թողնված օգուտի հատուցմանը՝ Ա.Ն.Կուլչերը նշում է, որ

<sup>233</sup> Այդ մասին առավել մանրամասն տե՛ս **Богдан В.В.**, "Гражданско-правовые способы защиты прав потребителей в сфере торговли и услуг", Юрист, Москва, 2003, N 7, հասանելի է՝ <https://www.lawmix.ru/comm/3874> հղումով՝ 03.04.2018թվականի դրությամբ:

<sup>234</sup> Տե՛ս **Суханов Е.А.**, "Гражданское право: В 4 т. Т. 1. Общая часть: Учебник. 3-е изд., перераб. и доп." М.: Волтерс Клувер, 2004, էջեր՝ 601-602:

<sup>235</sup> Տե՛ս **Шершеневич Г.Ф.**, "Учебник русского гражданского права", Т. 2. М.: Статут, 2005, էջեր՝ 210-212:

<sup>236</sup> Տե՛ս **Жариков Ю.Г.**, "Понятие убытков в гражданском и земельном праве", Журнал российского права, Москва, 2013, N 1 (193), էջ 72:

տու ժողի նոր պեսս վնասի պատճառման հետևանք պետք է ընձեռվի բաց թողնված օգուտի հատուցման հնարավորությունը<sup>237</sup>:

Բաց թողնված օգուտի հատուցման խնդիրը բազմիցս քննարկվել է նաև դատական պրակտիկայում: ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով բաց թողնված օգուտի հատուցմանը, նշել է, որ բաց թողնված օգուտն այն եկամուտն է, որը սեփականատերը քաղաքացիական շրջանառության սովորական պայմաններում կստանար, եթե չխախտվեր նրա իրավունքը, և այն չի կարող նույնանալ կազմակերպության շրջանառության կամ հասույթի հետ: ՀՀ վճռաբեկ դատարանը արձանագրել է, որ անձի իրավունքի չխախտման պարագայում եկամտի ստացման իրական հնարավորությունը որոշելը յուրաքանչյուր գործով ինքնուրույն գնահատման ենթակա հարց է, որի ընթացքում պետք է հաշվի առնվեն տվյալ գործի առանձնահատկությունները: ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային պրակտիկայի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս առանձնացնել այն հանգամանքները, որոնք սահմանվել են որպես բաց թողնված օգուտի հատուցման ժամանակ հաշվի առնվող հանգամանքներ: Մասնավորապես, դրանք են՝

1. մինչև իրավունքի խախտումը քաղաքացիական շրջանառությունում համապատասխան գույքի ունեցած կարգավիճակը կամ
2. սեփականատիրոջ իրական մտադրության և հնարավորության միաժամանակյա առկայությունը այդ գույքի տնօրինման եղանակների առնչությամբ.
3. իրական մտադրության գույքորդումը (կարող է հաստատվել ընկերության գործունեության

<sup>237</sup> Տե՛ս այս հեղինակի կարծիքը՝ **Шакиров Д.Ф.**, "Возмещение упущенной выгоды при нарушении обязательств в преддоговорных отношениях", Бизнес в законе, Экономико-юридический журнал, Москва, 2010, №3, էջ 130:

բնույթի ուսումնասիրությամբ, պայմանագրային հարաբերությունների բնույթը բացահայտելով և այլն) իրական հնարավորության հետ (կարող է հաստատվել օգուտ ստանալու վերաբերյալ իրական կամ ոչ ամտորեն հավանական ապացույցներով)<sup>238</sup>:

Պետք է նշել, որ բաց թողնված օգուտի հատուցման պահանջները դատական պրակտիկայում հազվադեպ են բավարարվում, և սովորաբար բավարարվում են այն դեպքում, երբ նման պահանջներ կայացնողը ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող է: Սրանով է պայմանավորված նաև այն, որ ՀՀ վճռաբեկ դատարանը բաց թողնված օգուտի հատուցման խնդրի վերլուծությունը և ըստ այդմ նման պահանջների քննման ժամանակ հաշվի առնվող հանգամանքների առանձնացումը իրականացրել է առավելապես ձեռնարկատիրական գործունեության իրականացման առանձնահատկությունների հաշվառման լույսի ներքո: Անհրաժեշտ է ինկատի ունենալ, որ չնայած բաց թողնված օգուտի հատուցման պահանջ առավելապես ներկայացնում են ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող սուբյեկտները, այնուամենայնիվ, Քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածով բաց թողնված օգուտի հատուցման պահանջը չի դիտարկվում որպես բացառապես ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող սուբյեկտի կողմից ներկայացման ենթակա պահանջ: Այսինքն՝ իրավունքը խախտված ցանկացած անձ եկամտի ստացման իրական հնարավորության և մտադրություն ապացուցման դեպքում կարող է պահանջել բաց թողնված օգուտի հատուցում:

<sup>238</sup> Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 19.10.2012թ. թիվ ԵԾԴ/0177/02/11, 23.04.2008թ. թիվ 3-273(ՎԴ), 13.03.2009թ. թիվ ԵԲԴ/0036/02/08, 30.04.2015թ. թիվ ԵԿԴ/2128/02/13 քաղաքացիական գործերով արտահայտած դիրքորոշումը:

Բաց թողնված օգուտի հատուցման կանոնների ճիշտ կիրառումը կարևոր է ոչ միայն տուժողի շահերի պաշտպանության, այլև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ ՄԻԵԴ) իրավական դիրքորոշումներին դրանց համահնչության ապահովման տեսանկյունից: Համանման տեսակետ է արտահայտել նաև ՀՀ վճռաբեկ դատարանը՝ արձանագրելով, որ բաց թողնված օգուտի հատուցման կանոնները դատարանների կողմից պետք է կիրառվեն Կոնվենցիայի դրույթների պահպանմամբ<sup>239</sup>: Սա պայմանավորված է նրանով, որ վնասի՝ այդ թվում բաց թողնված օգուտի հատուցման հարաբերությունները սերտորեն փոխկապակցված են Կոնվենցիային կից թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի հետ:

Այսպես, Կոնվենցիային կից թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածը բաղկացած է երեք ամանձի կանոնից: Այս վերլուծությանն առաջին անգամ կիրառության է գտել *Sporrong and Lönnroth v. Sweden*<sup>240</sup> գործում, որը Կոնվենցիայի այդ հոդվածի վերաբերյալ ՄԻԵԴ կայացրած ամենանշանակալի որոշումներից է: Առաջին կանոնը, որն ընդհանուր բնույթի է, ձևակերպում է գույքից անարգել օգտվելու սկզբունքը: Երկրորդ սկզբունքը վերաբերում է գույքի առգրավման հարցերին, և այդ առնչությամբ հստակ պայմաններ է սահմանում: Երրորդ սկզբունքն ընդունում է, որ պետությունը, ի թիվս այլ իրավասությունների, իրավունք ունեն հանրային շահից ելնելով վերահսկել գույքի

<sup>239</sup> Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 19.10.2012թ. թիվ ԵՃԴ/0177/02/11 քաղաքացիական գործով արտահայտած դիրքորոշումը:

<sup>240</sup> Այս գործի մասին առավել մանրամասն տե՛ս *Sporrong and Lönnroth v. Sweden*, Գանգատ N7151/75; 7152/75, 23 սեպտեմբեր 1982թվականի ՄԻԵԴ վճիռ:

օգտագործումը՝ այդ օրենքների կիրառման  
անհրաժեշտության պարագայում<sup>241</sup>:

Չնայած Կոնվենցիային կից թիվ 1  
Արձանագրության 1-ին հոդվածը, որպես կանոն, չի  
վերաբերում մասնավոր սուբյեկտների գուտ  
պայմանագրային բնույթ կրող  
հարաբերությանների կարգավորմանը,  
այնուամենայնիվ, Կոնվենցիոն օրգանները  
ստուգում են, որ օրենքը չհանգեցնի այնպիսի  
անհավասարության, որ մեկ անձ կամ այլ անհատ  
անարդարացի զրկվի սեփականությանից մեկ այլ  
անձի օգտին: Ըստ այդմ, որոշակի հանգամանքներում  
մասնավոր սուբյեկտների գործողությունները  
կարգավորելու համար պետությանը կարող է կրել  
միջամտելու պարտականություն<sup>242</sup>:

Արձանագրության 1-ին հոդվածի կիրառումը չի  
սահմանափակվում միայն սեփականության  
միջամտության այն դեպքերով, որոնք հանգեցնում  
են պետությանը որոշակի օգուտի փոխանցման: Այս  
հոդվածը կարող է կիրառվել պետության ձեռնարկած  
այն միջոցառումների նկատմամբ, որոնք  
ազդեցություն ունեն անձի սեփականության  
իրավունքի վրա (այն մեկ անձից մյուսին  
փոխանցելու, այլ կերպ օգուտ տալու միջոցով, կամ  
որոնք որևէ այլ կերպ կարգավորում են անձի  
սեփականության կապակցությամբ առաջացող  
հարաբերությունները)<sup>243</sup>:

Արձանագրության 1-ին հոդվածի լայն  
կիրառությունը տարաբնույթ  
իրավահարաբերությունների նկատմամբ

<sup>241</sup> Տե՛ս **Ենգիբարյան Վ.Գ.**, Սեփականության իրավունքը մարդու  
իրավունքների եվրոպական կոնվենցիայում., Եր.: «Անտարես»  
հրատ., 2008, էջ 18:

<sup>242</sup> Տե՛ս **Grgiæ Aida, Zvonimir Mataga, Matija Longar and Ana Vilfan**, "The Right to Property under the European Convention on Human Rights", Council of Europe, Strasbourg, 2007, Handbook N 10, էջ 6:

<sup>243</sup> Տե՛ս **Carss-Frisk M.**, "The right to property: A guide to the implementation of Article 1 of Protocol No. 1 to the European Convention on Human Rights", Council of Europe, Strasbourg, 2001, Human rights handbooks N 4, էջ 45:

պայ մանավորված է նրանով, որ ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքի շրջանակներում □տիրապետում□ հասկացու թյանը տրվել է լայն մեկնաբանություն՝ ընդգրկելով ոչ միայն սեփականության իրավունքը, այլև գույքային իրավունքների միամբողջ շարք (այդ թվում՝ բաժնետոմսերից բխող իրավունքները, արտոնագրերը, կենսաթոշակ ստանալու իրավունքը, արբիտրաժային հատուցումները<sup>244</sup>, վարձավճարի իրավունքը, ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու հետ կապված իրավունքները): Որպես □տիրապետում□ են որակվել նաև այլ ակտիվները՝ այդ թվում այն պահանջները, որոնց իրացման կապակցությամբ հայցվորը կարող է հիմնավորել, որ ունի օրինական սպասելիք<sup>245</sup>:

Դելիկտային պարտավորություններից ծագող իրավունքները նույնպես հանդիսանում են □սեփականություն□<sup>246</sup> Կոնվենցիայի հիմաստով: Սա իր

<sup>244</sup> Տե՛ս **Stran Greek Refineries and Stratis Andreadis v. Greece**, Գանգատ N 13427/87, 09 դեկտեմբեր 1994 թվականի ՄԻԵԴ վճռի 62-րդ կետը, որով դատարանն արձանագրել է, որ արբիտրաժի որոշման հիման վրա դիմողները ունեցել են իրենց հասանելիք դրամական գումարը ստանալու իրավունք, ըստ այդմ դատարանը գտել է, որ այդ իրավունքը Կոնվենցիայի 1-ին հոդվածի հիմաստով հանդիսացել է սեփականություն:

<sup>245</sup> Տե՛ս **Grgiæ Aida, Zvonimir Mataga, Matija Longar and Ana Vilfan.**, նշված աշխատ., էջ 7:

<sup>246</sup> ՄԻԵԴ-ի կողմից □սեփականություն□ հասկացու թյան լայն մեկնաբանումը գրականության մեջ բացատրվում է այդ հասկացության տնտեսական-արժեքային և իրային-իրավական կոնցեպցիաների տարբերություններով, քանի որ ՄԻԵԴ ընդունած՝ սեփականության հասկացության տնտեսական-արժեքային կոնցեպցիան չի համընկնում այլ երկրների՝ այդ թվում՝ քաղաքացիական օրենսգրքի իրավական կարգավորումներում ամրագրված գույքային իրավունքների շրջանակի հետ: Տնտեսական-արժեքային կոնցեպցիային բնութագրական են սեփականության իրավունքի տարածումը շրջանառության մեջ գտնվող բոլոր այն օբյեկտների նկատմամբ, որոնք իրենցից տնտեսական արժեք են ներկայացնում՝ անկախ դրանց նյութական և ոչ նյութական բնույթից, սեփականության իրավունքի տարբերակված ռեժիմների գոյությունը տարբեր օբյեկտների համար: Իրային-իրավական կոնցեպցիայի բնութագրական գծերն են նյութական իրերին ուղղվածությունը, սեփականատիրոջ ենթադրյալ իրավագործությունների գոյությունը, բացարձակ և հարաբերական իրավահարաբերությունների հստակ տարանջատումը: Ըստ այդմ, գրականության մեջ հիմնավորվում է, որ ՄԻԵԴ դիրքորոշումներին հաշվառմամբ անհրաժեշտ է ՀՀ իրավական համակարգը ևս համահունչ դարձնել արժեքային կոնցեպցիային: Այս մասին առավել մանրամասն տե՛ս **Կարապետյան Ն.Ա.**, Սեփականության անձեռնմխելիության



արտացոլումն է գտել Almeida Garrett Mascarenhas Falcao and others v Portugal գործում, որտեղ սահմանվել է, որ իրավաբանորեն ճանաչված և հայցային վաղեմության շրջանակներում գործող պարտավորությունը «գույք» է, և հետևաբար Արձանագրության 1-ին հոդվածի իմաստով հանդիսանում է սեփականություն: Այսինքն՝ պահանջի իրավունքն անկախ դրա ծագման հիմքից հանդիսանում է սեփականություն Կոնվենցիայի 1-ին Արձանագրության 1-ին հոդվածի իմաստով <sup>247</sup>:

Մեկ այլ՝ *Pressos Compania Naviera S.A. and others v. Belgium* գործով <sup>248</sup>, ՄիեԴ-ը, անդրադառնալով վնասի հատուցման պահանջին, արձանագրել է, որ Բելգիայի դելիկտային իրավունքի կանոններին համապատասխան այն ծագում է վնաս պատճառելու պահից: Դատարանը նշել է, որ նման բնույթ ունեցող պահանջը հանդիսանում է «ակտիվ», և հետևաբար «տիրապետում» Արձանագրության 1-ին հոդվածի իմաստով: Դատարանը, ըստ այդմ գտել է, որ գործով հայցվորները կարող էին ունենալ «օրինական սպասելիք», որ վթարով պայմանավորված վնասի հատուցման իրենց պահանջը կորոշվի դելիկտային իրավունքի նորմերին համապատասխան <sup>249</sup>: «Օրինական սպասելիքը» իր բնույթով պետք է կոնկրետ լինի,

---

սկզբունքը քաղաքացիական իրավունքում., ատեն., Երևան, 2010, էջեր՝ 29-32, էջ 35:

<sup>247</sup>Տե՛ս **Կարապետյան Ն.Ա.**, նշված աշխատ., էջեր՝ 27-28:

<sup>248</sup>Սույն գործի շրջանակում նաև սեփականատեր հանդիսացող հայցվորները վնասի հատուցման պահանջ են ներկայացնում պետության դեմ՝ գտնելով, որ իրենց նավերը Բելգիայի տարածքային ջրերում բախման մեջ են հայտնվել օդաչուների անփութության պատճառով (վերջիններիս համար պատասխանատվություն էր կրում պետությունը): Սակայն 1988 թվականի օգոստոսի 30-ին Բելգիայի օրենսդիր մարմինը օրենք ընդունելու և դրան հետադարձ ուժ տալու արդյունքում պետությանը ազատում է պատասխանատվությունից: Ըստ այդմ, դիմողները պնդում են, որ խախտվել է Կոնվենցիային կից թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածով երաշխավորված՝ սեփականության իրավունքը, իսկ պետությանը իր հերթին գտնում է, որ Կոնվենցիայի վկայակոչված հոդվածի իմաստով վերջիններս չեն ունեցել սեփականություն:

<sup>249</sup>Տե՛ս **Pressos Compania Naviera S.A. and others v. Belgium**, Գանգատ N 17849/91, 20 նոյեմբեր 1995 թվականի ՄիեԴ վճիռ, կետ 31:

քան հասարակ հույսը, և պետք է հիմնվի իրավական դրույթի կամ իրավական այնպիսի ակտի հիման վրա, ինչպիսին դատական ակտն է <sup>250</sup>: Դատարանը նշել է, որ Օպահանջը Օկարոդ է Արձանագրության 1-ին հոդվածի իմաստով հանդիսանալ Օսեփականության, եթե բավարար չափով հիմնավորված է, որ այն կարող է իրացվել <sup>251</sup>:

Այսպիսով, կարող ենք եզրահանգել, որ Ապրանքների թերությանն ենք հետևանքով պատճառված վնասի՝ այդ թվում բաց թողնված օգուտի հատուցման հարաբերությանն ենք ևս կարող են դիտարկել Կոնվենցիային կից թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի իրավակարգավորման լույսի ներքո այն դեպքում, երբ վնաս կրած անձը հիմնավորի, որ Օրինական սպասելիք է ունեցել վնասի հատուցում ստանալու տեսանկյունից: Ըստ այդմ, օրինական սպասելիքը պետք է բավարարի իրացվելիության չափանիշին, իսկ սանձանակում է, որ վնասի՝ այդ թվում բաց թողնված օգուտի հատուցման պահանջ ներկայացնելիս կարելի է խոսել Օրինական սպասելիքի առկայության մասին այն պարագայում, երբ առկա է քաղաքացիական շրջանառության մասնակցի իրավունքների խախտման արդյունքում վրահասնող անբարենպաստ հետևանքը՝ վնասը, այլապես հակառակ պարագայում օրինական սպասելիքը չի դիտարկվի որպես իրացվելի:

Վերլուծելով բաց թողնված օգուտի հատուցման և Կոնվենցիային կից թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի հարաբերակցության հարցը, առավել մանրամասն անդրադառնանք Ապրանքների

<sup>250</sup> Տե՛ս **Kopecký v. Slovakia**, Գանգատ N 44912/98, 28 սեպտեմբեր 2004 թվականի ՄԻԵԴ վճիռ, կետ 49:  
<sup>251</sup> Տե՛ս **Burdov v. Russia**, Գանգատ N 59498/00, 7 մայիս 2002 թվականի ՄԻԵԴ վճիռ, կետ 40:

թերու թյու ն ն երի հետևանքով գույքին վնաս պատճառելու դեպքում բաց թողնված օգուտի հատուցման խնդրին: Ինչպես արդեն իսկ նշել ենք, այս հարցի շուրջ մասնագետների շրջանում արտահայտվել են տարբեր տեսակետներ:

Օրինակ՝ Յա.Ի. Պարցիյը, անդրադառնալով ՌԴ Սպառողների իրավունքների պաշտպանության մասին օրենքի նախկին խմբագրությանը, որով սպառող էր դիտարկվում այն քաղաքացին, ով ձեռք է բերում Ապրանքներ անձնական, ընտանեկան և համանման այլ կարիքների համար, որոնք կապված չեն եկամուտ ստանալու հետ, նշում է, որ օրենքի այդ խմբագրությունից բխում էր, որ սպառողին հասցված վնասը կարող էր հատուցվել միայն իրական վնասի մասով: Ըստ այդմ, գրականության մեջ նաև նշվում է, որ սպառողի՝ բաց թողնված օգուտի հատուցման իրավունքի ճանաչումը կնշանակեր վերջինիս կողմից Ապրանքի օգտագործման արդյունքում շահույթ ստանալու հնարավորություն <sup>252</sup>: Վ.Վ. Բոգդանը, անդրադառնալով ՌԴ նշված օրենքով Սպառող հասկացության հետագա փոփոխությանը, որի արդյունքում եկամուտ ստանալու հետ կապված չլինելու պահանջը փոխարինվեց ձեռնարկատիրական գործունեության հետ կապված չլինելու պահանջով նշում է, որ այդ փոփոխության արդյունքում ճանաչվեց սպառողի՝ բաց թողնված օգուտի հատուցում պահանջելու իրավունքը: Յեղիևակը որպես սպառողի կողմից ստացվող հնարավոր եկամտի օրինակ մատնանշում է անձնական ամառանոցում գույքի օգտագործման արդյունքում ապագա բերքից ստացվող պտուղները, և ըստ այդմ

<sup>252</sup> Տե՛ս այս հեղինակի կարծիքը **Богдан В.В.**, "Гражданско-правовые способы защиты прав потребителей в сфере торговли и услуг", Юрист, Москва, 2003, N 7, հասանելի է՝ <https://www.lawmix.ru/comm/3874> հղումով՝ 03.04.2018 թվականի դրությամբ:

Եզրահանգում, որ առկա է բաց թողնված օգուտի հատուցում տրամադրելու հնարավորություն: Որպես բաց թողնված օգուտի օրինակ հեղինակը վկայակոչում է նաև սպառողի կողմից բուսական կուլտուրաների համար պարարտանյութերի ձեռքբերումը, որոնց օգտագործման, պահպանման, պիտանիության ժամկետի մասին ոչ ճիշտ տեղեկատվություն տրամադրելու արդյունքում բույսերը ոչնչանում են: Այս պարագայում, նշում է հեղինակը, առկա է այնպիսի եկամտի ստացման հնարավորություն (պտուղներ), որոնք անձը կստանար, եթե իր իրավունքը չխախտվեր: Ըստ այդմ, հեղինակը նշում է, որ բաց թողնված օգուտի հատուցում տրամադրելը առանձին դեպքերում հնարավոր է, եթե դա ուղղակիորեն բխում է պատճառված վնասի բնույթից, և առկա է եկամտի ստացման իրական հնարավորություն, այլ ոչ թե սուբյեկտիվ ընկալում<sup>253</sup>:

Յա.Ի. Պարցիյը իր հերթին նշում է, որ սպառողների իրավունքների պաշտպանության ակտերը կարող են կիրառվել այն դեպքում, երբ քաղաքացին սպառողական նպատակով ձեռք բերած Ապրանքի օգտագործման արդյունքում ստանում է մեկանգամյա բնույթ ունեցող բնական եկամուտ (օրինակ՝ նոր պտուղների աճեցման և կենդանիների ավելացման տեսքով): Եթե նույն բանն իրականացվում է պարբերաբար եկամտի ստացման նպատակով, ապա նման հարաբերությունների նկատմամբ պետք է կիրառվի ձեռնարկատիրական գործունեությանը վերաբերելի օրենսդրությունը: Հեղինակը նաև նշում է, որ հաշվի առնելով գույքի օգտագործման ռեժիմի հնարավոր փոփոխությունը, վեճի դեպքում

<sup>253</sup> Տե՛ս **Богдан В.В.**, նշված աշխատ., հասանելի է՝ <https://www.lawmix.ru/comm/3874> հղումով՝ 03.04.2018թվականի դրությամբ:

անհրաժեշտ է առաջնորդվել Ապրանքի սկզբնական օգտագործման նպատակով, ինչը պետք է հավաստվի օբյեկտիվ ապացույցներով<sup>254</sup>: Արտասահմանյան գրականության մեջ նշվում է նաև, որ Ապրանքի թերության հետևանքով այլ գույքին վնաս պատճառելու դեպքում բաց թողնված օգուտը պետք է հատուցվի<sup>255</sup>:

Բաց թողնված օգուտի հատուցման վերաբերյալ գրականության մեջ արտահայտված տեսակետների վերլուծությանը թույլ է տալիս եզրահանգել, որ հեղինակները սպառողի կողմից բաց թողնված օգուտի հատուցման պահանջ ներկայացնելու հնարավորությունը պայմանավորում են եկամտի՝ պարբերական կամ ոչ պարբերական ստացման հանգամանքով կամ Ապրանքի սկզբնական օգտագործման նպատակով: Ընդ որում, չի մատնանշվում այն հիմնական չափանիշը, որից ելնելով կարելի է որոշել Ապրանքների թերության հետևանքով գույքին վնաս պատճառելու դեպքում բաց թողնված օգուտի հատուցման թույլատրելիությունը: Արտահայտված կարծիքները թերևս խոցելի են այնքանով, որ Ապրանքների թերության հետևանքով պատճառված վնասի հատուցման կանոնների կիրառումը պայմանավորված է ոչ միայն Ապրանքի՝ որոշակի նպատակային նշանակությամբ (սպառողական նպատակով) ձեռք բերման, այլև դրա փաստացի՝ միայն այդ նպատակի համար օգտագործման հանգամանքով: Բացի այդ, անխտիր բոլոր դեպքերում, առանց որևէ չափանիշի առանձնացման սպառողի՝ բաց թողնված օգուտի հատուցման պահանջ ներկայացնելու հնարավորության ճանաչումը իր

<sup>254</sup> Տե՛ս **Парций Я.И.**, "Комментарий к Закону РФ "О защите прав потребителей"", М., 2007, հասանելի է՝ <https://www.lawmix.ru/commlaw/1133> հղումով՝ 03.04.2018 թվականի դրությամբ:

<sup>255</sup> Տե՛ս **Bellehumeur C.**, "Recovery for Economic Loss Under a Products Liability Theory: From the Beginning Through the Current Trend", Marq. L. Rev., 1987, N 70, էջ 346:

հ ե ռ թ ի ն խ ն դ ը ր ա հ ա թ ը ու յ ց Ե Բ ա ղ ա ք ա ց ի ա կ ա ն  
օ ռ ե ն ս գ ը ք ի 60-ր դ գ լ խ ի 3-ր դ պ ա թ ա գ ը ա Ֆ ի և ն ու յ ն  
օ ռ ե ն ս գ ը ք ի 1058-ր դ հ ո դ վ ա ծ ն ե թ ի  
փ ո խ հ ա թ ա ք ե թ ա կ ց ու թ յ ա ն ո ղ ջ ա մ ի տ  
տ ը ր ա մ ա ք ա ն ու թ յ ա ն պ ա հ պ ա ն մ ա ն տ ե ս ա ն կ յ ու ն ի ց :

Ա պ ը ր ա ն ք ն ե թ ի թ ե թ ու թ յ ու ն ն ե թ ի հ ե տ ն ա ն ք ո վ  
գ ու յ ք ի ն պ ա տ ճ առ վ ա ծ վ ն ա ս ի դ ե պ ք ու մ ք ա ց թ ո ղ ն վ ա ծ  
օ գ ու տ ի հ ա տ ու ց մ ա ն հ ա թ ց ի վ ե թ ա ք ե թ յ ա լ  
մ ի ջ ա գ գ ա յ ի ն փ ո թ ճ ի ու ս ու մ ն ա ս ի թ ու թ յ ու ն ը ց ու յ ց  
Ե տ ա լ ի ս , ո թ օ թ ի ն ա կ ` ա մ ե թ ի կ յ ա ն դ ա տ ա կ ա ն  
պ ը ա կ տ ի կ ա յ ու մ հ ա յ ց վ ո թ ը չ ի կ ա թ ո ղ ն ե թ կ ա յ ա ց ն ե լ  
ք ա ց թ ո ղ ն վ ա ծ օ գ ու տ ի հ ա տ ու ց մ ա ն պ ա հ ա ն ջ , ե թ ե  
վ ե թ ջ ի ն ի ս ա ն ձ ի ն կ ա մ գ ու յ ք ի ն վ ն ա ս չ ի  
պ ա տ ճ առ վ ե լ <sup>256</sup>:

Ա յ ս ի ն ք ն ` ք ա ց թ ո ղ ն վ ա ծ օ գ ու տ ը  
պ ա տ ճ առ ա հ ե տ ն ա ն ք ա յ ի ն կ ա պ ի տ ե ս ա ն կ յ ու ն ի ց պ ե տ ք Ե  
հ ա ն դ ի ս ա ն ա ա ն ձ ի ն կ ա մ գ ու յ ք ի ն պ ա տ ճ առ ա ծ վ ն ա ս ի  
ա թ դ յ ու ն ք , և ա յ ս պ ա յ մ ա ն ը ք ա վ ա թ ա թ ե լ ու դ ե պ ք ու մ  
մ ի ա յ ն ք ա ց թ ո ղ ն վ ա ծ օ գ ու տ ը կ ա թ ո ղ Ե հ ա տ ու ց վ ե լ :

Ա մ ե թ ի կ յ ա ն դ ա տ ա կ ա ն պ ը ա կ տ ի կ ա յ ի ն հ ա յ տ ն ի ե ն  
ն ա ն դ ե պ ք ե թ , ե թ ք ք ա վ ա թ ա թ վ ե լ ե ն ա ն գ ա մ առ ն տ ը ա յ ի ն  
գ ն ո թ դ ն ե թ ի ն ե թ կ ա յ ա ց ը ա ծ ` ք ա ց թ ո ղ ն վ ա ծ օ գ ու տ ի  
հ ա տ ու ց մ ա ն պ ա հ ա ն ջ ն ե թ ը <sup>257</sup>:

Ի ն չ վ ե թ ա ք ե թ ու մ Ե ե վ ը ո պ ա կ ա ն ե թ կ ը ն ե թ ու մ ք ա ց  
թ ո ղ ն վ ա ծ օ գ ու տ ի հ ա տ ու ց մ ա ն խ ն դ ը թ ի ն , ա պ ա  
ա ն հ ը ա ժ ե շ տ Ե ն շ ե լ , ո թ ա յ ս տ ե ղ օ ռ ե ն ս դ ը ո թ ե ն հ ս տ ա կ  
չ ի շ ե շ տ ա դ ը վ ու մ ի ը ա կ ա ն վ ն ա ս ի ց գ ա տ ն ա ն ք ա ց  
թ ո ղ ն վ ա ծ օ գ ու տ ի հ ա տ ու ց մ ա ն հ ն ա թ ա վ ո թ ու թ յ ա ն  
վ ե թ ա ք ե թ յ ա լ , ս ա կ ա յ ն առ կ ա չ ե ն ն ա ն ն ո թ մ ե թ , ո թ ո ն ք  
հ ա տ ու կ կ ք ա ց առ ե ն ա յ դ հ ն ա թ ա վ ո թ ու թ յ ու ն ը :  
Ա յ ն ու ա մ ե ն ա յ ն ի վ , ա յ ս հ ա թ ց ի պ ա թ գ ա ք ա ն մ ա ն հ ա մ ա թ  
ու ղ ե ն ի շ ա յ ի ն կ ա թ ո ղ Ե լ ի ն ե ն ե վ ը ո պ ա կ ա ն Մ ի ու թ յ ա ն

<sup>256</sup> Տ ե ' ս **Sawaya Danielle**, "Not Just for Products Liability: Applying the Economic Loss Rule Beyond Its Origins", *Fordham L. Rev.*, 2014, N 83, է ջ 1075:

<sup>257</sup> Տ ե ' ս **Irvin H.A.**, and **Carlson M.S.**, "Recovery of Pure Economic Loss in Product Liability Actions: An Economic Comparison of Three Legal Rules", *U. Puget Sound L. Rev.*, 1987, N 11, է ջ 301:

Արդարադատության դատարանի Henning Veedfald v Aarhus Amtskommune C-203/99 գործով արտահայտած դիրքորոշումը: Չնայած նշված գործով դատարանը ուղղակիորեն չի անդրադարձել բաց թողնված օգուտի հատուցման հարցին, սակայն սահմանել է որոշակի չափանիշներ, որոնք պետք է հաշվի առնվեն վնասի հատուցման հարաբերության ներքո: Մասնավորապես, Henning Veedfald v Aarhus Amtskommune C-203/99 գործի շրջանակում տուժողը ներկայացրել է երիկամի անհաջող փոխպատվաստման հետևանքով իրեն պատճառված վնասի հատուցման պահանջ: Անհաջող փոխպատվաստումը պայմանավորված է եղել նրանով, որ մինչև փոխպատվաստումը երիկամը հականեխվել է հատուկ այդ նպատակի համար նախատեսված հեղուկով: Յետագայում պարզվել է, որ հեղուկի թերության պատճառով հականեխման պրոցեսում երիկամային զարկերակը արգելափակվել է, ինչի պատճառով դարձել է փոխպատվաստման համար ոչ պիտանի: Գործի շրջանակում դատարանը, անդրադառնալով Դիրեկտիվի իրավակարգավորման լույսի ներքո վնաս հասկացության մեկնաբանմանը, նշել է, որ ի տարբերություն ապրանք , արտադրող  և թերության  ունեցող  ապրանք  հասկացություններին, որոնց հստակ բնորոշումները նախատեսված են Դիրեկտիվի 2-րդ, 3-րդ և 6-րդ հոդվածներում, վնաս  հասկացության հստակ բնորոշումը բացակայում է ինչպես Դիրեկտիվի 1-ին, այնպես էլ 9-րդ հոդվածում: Այնուամենայնիվ, Դիրեկտիվի 9-րդ հոդվածը մատնանշում է, որ հատուցման ենթակա է անձի մահվամբ ծագած վնասը կամ վերջինիս առողջությանը կամ գույքին պատճառված վնասը: Դատարանը նշել է, որ չնայած պետությանը վնաս  հասկացության հստակ բովանդակության

սահմանման իրավասու թյուն, այնուամենայնիվ, բացառությամբ ոչ նյութական վնասի, որի փոխհատուցումը կարգավորվում է բացառապես ազգային օրենսդրությամբ, վնասի մյուս տեսակների դեպքում տուժողին պետք է հասանելի լինի ամբողջական և պատշաճ հատուցման տրամադրումը: Դատարանը շեշտել է, որ ազգային իրավանորմերի կիրառումը չի կարող վնասել Դիրեկտիվի արդյունավետությանը, իսկ դատարանները պարտավոր են իրենց օրենսդրությանը մեկնաբանել Դիրեկտիվի նպատակի և տեքստի լույսի ներքո: Անդամ պետությունները չեն կարող սահմանափակել նյութական վնասի այն տեսակների հատուցումը, որոնք առանձին կամ վերջինիս գույքին վնաս պատճառելու արդյունքում: Ազգային դատարանները պետք է որոշեն, թե արդյոք պատճառված վնասը իր բնույթով հանդիսանում է անձի կյանքին, առողջությանը կամ գույքին պատճառված վնաս, կամ ոչ նյութական վնաս (կարող է նախատեսվել ազգային օրենսդրությամբ): Դատարանը անգամ չէլ է, որ ազգային դատարանները իրավասու են վնասի հատուցման պահանջը չմերժել նաև այն պատճառաբանությամբ, որ պատճառված վնասը իր բնույթով չի դասվում վերը նշվածներից որևէ մեկի շարքը <sup>258</sup>:

Եվրոպական Միության Արդարադատության դատարանի նշված դիրքորոշումը առանձնահատուկ է նրանով, որ դրանով շեշտադրվում է վնասների ամբողջական հատուցման գաղափարը: Այլ կերպ ասած՝ Ապրանքի թերության հետևանքով գույքին վնաս պատճառելու դեպքում վնասների՝ այդ թվում բաց թողնված օգուտի հատուցման հարցում չպետք է

<sup>258</sup> Տե՛ս **Henning Veedfald v Arhus Amtskommune**, գործ C-203/9910, մայիս 2001 թվականի ԵՄ արդարադատության դատարանի վճիռ:



լի նի որև է սահմանափակում: Միակ բացառությունը այս պարագայում ոչ նյութական վնասի հատուցումն է, որի նախատեսման իրավասությունը վերապահվում է բացառապես երկրների օրենսդիր մարմինների:

Ինչ վերաբերում է քաղաքացիական օրենսդրության մբ Ապրանքների թերությունների հետևանքով պատճառված վնասի դեպքում բաց թողնված օգուտի հատուցման խնդրին, ապա հարկ է նշել, որ քաղաքացիական օրենսգրքի 60-րդ գլխի 3-րդ պարագրաֆում նշվում է պատճառված վնասի հատուցման վերաբերյալ՝ առանց տարանջատում դնելու իրական վնասի կամ բաց թողնված օգուտի միջև: Մենք կարծում ենք, որ վերը նշված պարագրաֆի դրույթներով ևս հնարավոր է անձի գույքին վնաս պատճառելու դեպքում իրական վնասից զատ պահանջել նաև բաց թողնված օգուտի հատուցում: Մեր եզրահանգումը պայմանավորված է հետևյալով՝

1. քաղաքացիական օրենսդրության մբ ամրագրված կարևորագույն գաղափարներից մեկը վնասների լրիվ հատուցումն է, իսկ արտապայմանագրային հարաբերություններում քաղաքացիական օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված՝ խախտված իրավունքների վերականգնման ապահովման սկզբունքի լիարժեք իրացումը հնարավոր է վնասների լրիվ հատուցման գաղափարի հետ սերտփոխկապվածությամբ պարագայում:

2. քաղաքացիական օրենսգրքի ընդհանուր տրամաբանությունը հուշում է, որ այն դեպքերում, երբ հատուցման ենթակա է միայն իրական վնասը, քաղաքացիաիրավական համապատասխան նորմում դրավերաբերյալ կատարվում է ուղղակի նշում՝ օրինակ բաց սակարկությունների կազմակերպչի կողմից դրանք անցկացնելու օրենքով սահմանված ժամկետների խախտմամբ հրաժարվելու (464-րդ հոդված 3-րդ մաս), խաղերի կազմակերպչի կողմից սահմանված

Ժամկետով փոխառության անցկացնելուց հրաժարվելու (1040-րդ հոդված 4-րդ մաս), կողմի պահանջով համատեղ գործունեության պայմանագրի լուծման (1037-րդ հոդված), նվիրառուի կողմից նվերն ընդունելուց հրաժարվելու (597-րդ հոդված 3-րդ մաս), փոխատուի կողմից փոխառուին գույքը չհանձնելու (690-րդ հոդված) և այլ դեպքերում, երբ օրենսդրորեն հստակ սահմանվում է միայն իրական վնասի հատուցման մասին:

Քաղաքացիական օրենսգրքի ուսումնասիրությանը ցույց է տալիս, որ օրենսգրքի թվով 4 հոդվածներում՝ մասնավորապես 968.9 հոդվածի 1-ին (\$ոնդի կառավարչի պատասխանատվությանը), 1121-րդ հոդվածի 2-րդ (հեղինակի անձնական ոչ գույքային իրավունքները), 1136-րդ հոդվածի 1-ին (հեղինակային պայմանագրով պատասխանատվությանը), 1137-րդ հոդվածի 2-րդ (պատասխանատվությանը ստեղծագործությանն առանց թույլտվության օգտագործելու համար) մասերում է հատուկ շեշտադրվում ի թիվս այլ վնասների՝ նաև բաց թողնված օգուտի հատուցման վերաբերյալ, ինչը գուցե և նպատակ է հետապնդում առանձնահատուկ շեշտադրել բաց թողնված օգուտի հատուցման գաղափարը, սակայն, մեր կարծիքով առանց նման շեշտադրման էլ դա ենթադրվում է, քանի որ վնասների լրիվ հատուցման սկզբունքը արդեն իսկ իր արտացոլումն է ստացել Քաղաքացիական օրենսգրքի 17-րդ, 409-րդ և 1058-րդ հոդվածներում:

Այսպիսով, մենք գտնում ենք, որ Քաղաքացիական օրենսգրքի 60-րդ գլխի 3-րդ պարագրաֆի դրույթների հիման վրա սպառողը Ապրանքի թերութային հետևանքով գույքին վնաս պատճառելու դեպքում կարող է ներկայացնել բաց թողնված օգուտի հատուցման պահանջ այն պարագայում, երբ բաց

թողնված օգուտն առաջացել է այնպիսի գույքին վնաս պատճառելու արդյունքում, որն նախատեսված է եղել մասնավոր օգտագործման համար (կապված չէ անձի մասնագիտական կամ ձեռնարկատիրական գործունեության հետ): Այս պարագայում բաց թողնված օգուտի հատուցման պահանջը կարող է բավարարվել այն դեպքում, երբ տուժողը ապացուցի, որ այդ գույքին վնաս պատճառելու արդյունքում չի ստացել այնպիսի եկամուտներ, որոնց ստացման իրական հնարավորությունը և մտադրությունը առկա է եղել: Ընդ որում, բաց թողնված օգուտը կարող է արտահայտվել նաև Ապրանքի թերութայան հետևանքով գույքին վնաս պատճառելու արդյունքում դրա շուկայական արժեքի նվազեցմամբ:

Օրինակ՝ ենթադրենք անձը մասնավոր օգտագործման համար ձեռք է բերում համակարգիչ և այն հետագայում օգտագործում է իր գրասենյակում (բիզնես միջավայրում): Չամակարգիչը թերութայան պատճառով այրվում և վնասում է գրասենյակը, ինչի պատճառով հնարավոր չի լինում ապահովել գրասենյակի բնականոն գործունեությունը մեկ շաբաթվա ընթացքում: Այս պատճառով անձը զրկվում է որոշակի ժամանակահատվածի համար եկամուտ ստանալու հնարավորությունից: Այս պարագայում, մենք կարծում ենք՝ անձը չի կարող պահանջել բաց թողնված օգուտի հատուցում քաղաքացիական օրենսգրքի 60-րդ գլխի 3-րդ պարագրաֆի դրույթների հիման վրա, քանի որ չի բավարարվում սպառողական նպատակով Ապրանքի փաստացի օգտագործման և ըստ այդմ մասնավոր օգտագործման համար նախատեսված գույքին վնաս պատճառելու  չափանիշը: Իսկ օրինակ, եթե անձը ձեռք է բերում որևէ կենցաղային տեխնիկա, այն տեղադրում իր տանը, սակայն տեխնիկայի թերութայան պատճառով տանը բռնկվում է

հրդեհ, ինչի արդյունքում անձը զրկվում է նաև արդեն իսկ կնքված վարձակալության պայմանագրի հիման վրա գույքը վարձակալության հանձնելու, ըստ այդմ, նաև որոշակի ժամանակահատվածի համար եկամուտ ստանալու հնարավորությունից, կարծում ենք՝ վերջինս կարող է ներկայացնել բաց թողնված օգուտի հատուցման պահանջ քաղաքացիական օրենսգրքի 60-րդ գլխի 3-րդ պարագրաֆի դրույթների հիման:

Քննարկելով Ապրանքների թերութայնության հետևանքով անձի գույքին վնաս պատճառելու դեպքում իրական վնասի և բաց թողնված օգուտի հատուցման հարցը, կցանկանայինք նաև որոշ անդրադարձ կատարել ոչ նյութական վնասի հատուցման խնդրին:

Չնայած քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի 2-րդ մասը, ի թիվս իրական վնասի և բաց թողնված օգուտի, ոչ նյութական վնասը առանձնացնում է որպես վնասի ինքնուրույն, առանձին տեսակ, այնուամենայնիվ նույն հոդվածի 4-րդ մասը որպես ոչ նյութական վնասի հատուցման պարտադիր պայման սահմանում է դրա՝ օրենքով հատուկ նախատեսված լինելը: Ըստ այդմ, քաղաքացիական օրենսդրությամբ նախատեսվում է ոչ նյութական վնասի հատուցում տրամադրելու հնարավորություն հետևյալ դեպքերում՝

1) պատվին, արժանապատվությանը կամ գործարար համբավին պատճառված վնասի դեպքում (1087.1 հոդված).

2) ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով երաշխավորված հիմնարար իրավունքների խախտման և անարդարացի դատապարտման դեպքում (1087.2 հոդված).

3) խոշտանգումից տուժած անձ հանդիսանալու դեպքում (1087.3 հոդված).

Սա նշանակում է, որ բացառությամբ քաղաքացիական օրենսգրքի 1087.1, 1087.2 և 1087.3

հոդվածներով նախատեսված դեպքերի, քաղաքացիական օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում, երբ համապատասխան նորմում նշվում է պատճառված վնասի հատուցման վերաբերյալ, այն չի ներառում ոչ նյութական վնասը: Ասվածը հավասարապես վերաբերելի է նաև Ապրանքների թերությունների հետևանքով վնաս պատճառելու դեպքերին:

Հայրենական իրավագիտության մեջ նշվում է, որ չնայած քաղաքացիական օրենսգրքով արդեն իսկ նախատեսվում է ոչ նյութական վնասի հատուցման ինստիտուտը, սակայն այն նախատեսված է միայն սահմանափակ դեպքերի համար: Նման մոտեցումը գնահատվում է սխալ և չհիմնավորված, քանի որ կտրուկ սահմանափակվում են ոչ նյութական վնասի կիրառման սահմանները: Ոչ նյութական վնասի հատուցման սահմանումը խիստ սահմանափակ դեպքերի համար չի բխում արդարության շահերից, չի ապահովում տուժողներին պատճառված վնասի ամբողջական հատուցումը, վնասի հատուցման ինստիտուտի կանխարգելիչ բնույթը: Գրականության մեջ նշվում է, որ վերջին ժամանակներս բավականին շատացել են սպառողներին անորակ ապրանքներ վաճառելու կամ անորակ ծառայություններ մատուցելու հետևանքով պատճառվող համատարած վնասի դեպքերը, որոնք չնչին նյութական վնասի հետ մեկտեղ կարող են առաջացնել էական անհանգստություններ, զրկանքներ<sup>259</sup>:

Ուշադրության է արժանի այն, որ անգլոամերիկյան իրավական համակարգում

<sup>259</sup>Տե՛ս **Բեքմեզյան Գ.Յ.** „ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ ոչ նյութական վնասի հատուցման մի շարք հարցերի շուրջ, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու ., Եր.: ԵՊՀ հրատ., 2015, էջեր՝ 194-196:

Ապրանքների թերությունների հետևանքով պատճառված վնասի պարագայում նախատեսվում է պատժիչ վնասի (punitive damage) հատուցման հնարավորություն: Սա, ըստ էության, ոչ նյութական վնասի առանձնահատուկ տեսակ է՝ իր հետապնդած ուրույն նպատակներով և ֆունկցիաներով: Պատժիչ վնասի դոկտրինը (այսուհետ՝ Դոկտրին) անգլիական ընդհանուր իրավունքի բնորոշ հիմնդոկտրին է: Այն ճանաչում<sup>260</sup> է ստացել Անգլիայում դեռևս 1278 թվականին, երբ Gloucester-ի ստատուտի ուժի մեջ մտնելու արդյունքում տուժողին տրամադրվել է հատուցում թափոնների հետևանքով պատճառված վնասի համար: Զեռագայում Դոկտրինը փոխառնվել է ԱՄՆ-ի կողմից: 1851 թվականի դրությամբ Դոկտրինը այնքան էր արմատավորվել և ընդունվել ԱՄՆ-ում, որ ԱՄՆ Գերագույն դատարանը հատուկ նշել է, որ այլևս չի կարելի պնդել, որ պատժիչ վնասի հատուցումը սխալ է<sup>261</sup>: Մինչև 1850-ական թվականները պատժիչ վնասը դարձել է անգլո-ամերիկյան քաղաքացիական իրավունքի բաղկացուցիչ մասը<sup>262</sup>: Պատժիչ վնասի հատուցման հնարավորություն նախատեսվում է նաև Ավստրալիայում, Կանադայում, Անգլիայում, Նոր Զելանդիայում<sup>263</sup>, Չինաստանում<sup>264</sup>:

Այս Դոկտրինի կիրառությունը թե՛ տեսական, թե՛ պրակտիկ բնագավառում բազմաթիվ վեճերի տեղիք է տվել:

Զեղինակները հիմնականում առանձնացնում են պատժիչ վնասի չորս հիմնական ֆունկցիա՝ պատժիչ-նորսնդոված է հակաիրավական վարքագիծ դրսևորած

<sup>260</sup> Զստակ ճանաչում է ստացել 1763 թվականին Անգլիայում: Այդ մասին առավել մանրամասն տե՛ս **Owen David G.**, "Punitive damages in Products Liability Litigation", *Michigan Law Review*, 1976, N 74, էջ 1263:  
<sup>261</sup> Տե՛ս **Schuster Richard D.**, "Punitive Damages Awards in Strict Products Liability Litigation: The Doctrine, the Debate, the Defenses", *Ohio St. L.J.*, 1981, N 42, էջերը՝ 771-772:  
<sup>262</sup> Տե՛ս **Բեքմեյլան Գ.Յ.**, նշված աշխատ., էջ 197:  
<sup>263</sup> Տե՛ս **Slawotsky J.**, "Liability for Defective Chinese Products Under the Alien Tort Claims Act", *Wash. U. Global Stud. L. Rev.*, 2008, N 7, էջ 540:  
<sup>264</sup> Տե՛ս **Brüggemeier Gert**, "European Civil Liability Law Outside Europe. The Example of the Big Three: China, Brazil, Russia", *Tulane European & Civil L.F.*, 2011, N 26, էջ 105:

անձին պատժելուն, զսպման - ուր ըսաստու մ, զսպում է ապագայում նման վարքագծի դրսևորումը վնաս պատճառած և այլ անձանց կողմից, փոխհատուցման - ուր նուղղված է այն վնասների հատուցմանը, որոնք որպես նյութական վնաս չեն հատուցվում, կամ այն փաստացի վնասների հատուցմանը, որոնք հայցվորը չի կարող ապացուցել <sup>265</sup>: Որոշ հեղինակներ առանձնացնում են նաև մեկ այլ՝ իրավապահպան ֆունկցիան, որն արտահայտվում է նրանում, որ զգալի չափի պատժիչ վնասի նախատեսումը խթանում է տուժողների՝ որպես □մասնավոր փաստաբան □ հանդես գալը, և ըստ այդմ նպաստում նաև իրավական նորմերի իրացմանը: Պատժիչ վնասը, որպես կանոն, հատուցվում է այն դեպքում, երբ հայցվորը հստակ և համոզիչ ապացույցների հիման վրա ապացուցում է, որ պատճառված վնասը արդյունք է սպառողների անվտանգության խնդրի կապակցությամբ վնաս պատճառողի ցուցաբերած անշրջահայաց (անխոհեմ) անտարբերության <sup>266</sup>:

Ուշադրության է արժանի այն, որ և՛ մասնագիտական գրականության մեջ, և՛ իրավակիրառ պրակտիկայում արտահայտվել են տարբեր, միմյանց հետ չհամընկնող տեսակետներ Դոկտրինի հիմնավորվածության և դրա նպատակահարմարության վերաբերյալ: Յեղիևակներին առաջին խումբը դեմ է դրա կիրառմանը, իսկ մյուսը՝ բարձրաձայնում է դրա կարևորությունը սպառողների իրավունքների պաշտպանության տեսանկյունից:

Այսպես, հեղինակների առաջին խումբը նշում է, որ պատժիչ և զսպման ֆունկցիաները բնորոշ չեն քաղաքացիական իրավունքին, առկա չէ քաղաքացիաիրավական հարաբերություններում

<sup>265</sup> Տե՛ս **Owen David G.**, "Punitive Damages in Products Liability Litigation", *Michigan Law Review*, 1976, N 74, էջ 1296:

<sup>266</sup> Տե՛ս **Schuster Richard D.**, նշված աշխատ., էջեր՝ 773-776:

դրանց կիրառման անհրաժեշտություն՝ հաշվի առնելով այն, որ վնասների հատուցումը, զսպելով արտադրողներին՝ հակաիրավական վարքագծի դրսևորումը, արդեն իսկ ուղղված է այդ ֆունկցիայի իրացմանը: Յեղիսակները նաև նշում են, որ պատժիչ վնասի նախատեսումը կարող է հանգեցնել ոչ ցանկալի տնտեսական հետևանքների Ապրանք արտադրողներին և վաճառողներին համար: Մյուս պատճառաբանությունն այն է, որ առանց մեղքի<sup>267</sup> պատասխանատվության սկզբունքի գաղափարը անհամատեղելի է Դոկտրինի հետ, քանի որ այս դեպքում պետք է ապացուցվի վնաս պատճառողի մեղքը: Նշված տեսակետը չկիսող հեղիսակների մյուս խումբը իրենց հերթին նշում են, որ քաղաքացիական իրավահարաբերություններին և սբնորոշ են դրսևորած վարքագծի համար անձին պատժելու որոշակի տարրեր: Վերջիններս գտնում են, որ զսպման գործառույթը արդյունավետ չի գործում, երբ արտադրողները գիտակցում են, որ ստացված շահույթը, այնուամենայնիվ, գերազանցում է դատական կամ վնասի հատուցման հետ կապված իրենց կրած ծախսերը, և հետևաբար վերջիններս առավել ձեռնտու է հատուցել պատճառված վնասները, քան փոխել իրենց գործարար պրակտիկան: Մեղքի և Դոկտրինի անհամատեղելիություն տեսակետի կապակցությամբ հեղիսակները նշում են, որ Ապրանքների թերություններին հետևանքով վնաս պատճառելու հարաբերություններում մեղքը արտահայտվում է թերություն ունեցող Ապրանքի առկայությամբ: Այլ կերպասած՝ արտադրողը կամ վաճառողը □մեղավոր□ են այն քանի համար, որ շրջանառության մեջ են դրել այնպիսի Ապրանք, որն թերության պատճառով չի

<sup>267</sup> Այդ մասին առավել մանրամասն տե՛ս **Wertheimer E.**, "Punitive damages and strict products liability: An essay in oxymoron", *Vill.L.Rev.*, 1994, N 39, էջ 506-523:



համապատասխանում հասարակության համար  
ընդունելի անվտանգության և որակի  
պահանջներին<sup>268</sup>:

Մեզ համար առավել ընդունելի է հեղինակների  
երկրորդ խմբի մոտեցումը, քանի որ վնասների  
հատուցման՝ որպես վնաս պատճառած անձի նկատմամբ  
կիրառվող ներգործության միջոցի հիմնական  
ֆունկցիան ոչ միայն պետք է դիտարկվի բացառապես  
փոխհատուցման գործառույթի, այլ նաև  
կանխարգելիչ (հակաիրավական վարքագծի  
դրսևորելու դեպքում բացասական հետևանքների  
նախատեսման և դրանց կիրառման հնարավորության),  
պատժիչ (հանրային շահերի պաշտպանության,  
իրավաչափ վարքագծի խթանման) գործառույթների  
արդյունավետ իրացման տեսանկյունից: Սա  
պայմանավորված է նաև այն պարզ իրողությանը, որ  
հասարակական հարաբերությունների զարգացման  
յուրաքանչյուր փուլում ներգործության  
միջոցների համակարգը պետք է վերանայվի,  
որպեսզի համարժեք լինի պաշտպանվող շահի  
էությանը, ինչպես նաև կատարված իրավախախտման  
բնույթին, դրավտանգավորությանը:

Արտասահմանյան երկրների դատական  
պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է  
տալիս, որ պատժիչ վնասը հատուցվում է  
հիմնականում այն գործերի շրջանակում, որոնցով  
պարզվում է, որ.

1) առկա է եղել ընդհանուր տեղեկացվածություն և  
Ապրանքի հնարավոր վտանգի մասին.

2) ընթացքի մեջ գտնվող դատավարություններից զատ  
Ապրանքի թերության պատճառով այլ անձանց  
նախկինում ևս պատճառվել է վնաս.

3) Ապրանքի թերության վերացման կամ  
հասարակությանը Ապրանքի թերության մասին

<sup>268</sup>Տե՛ս Schuster Richard D., նշված աշխատ., էջեր՝ 779-782:

տեղեկացնելու հարցում նկատվել է հապաղում, ձգձգում:

4) ապացուցվել է, որ Ապրանքի այլընտրանքային նախագծումը տնտեսապես առավել պիտանի է: Ընդ որում, պատժիչ վնասը սովորաբար հատուցվում է այն դեպքում, երբ առկա են վկայական չափեր կողմից արված դեպքերի համակցությունը<sup>269</sup>:

Օրինակ՝ *Grimshaw v. Ford Motor Co.* գործով<sup>270</sup> Կալիֆոռնիայի վերաքննիչ դատարանը բավարարել է պատժիչ վնասի հատուցում տրամադրելու պահանջը, քանի որ Ֆորդը նկատարությունը անվտանգության միջոցներ չի տեղադրել *Ford Pinto* ավտոմեքենաներում, իսկ պատժիչ վնասի հատուցումը նպատակ է հետապնդել ապագայում կանխել նման դեպքերը<sup>271</sup>: Մեկ այլ՝ *Gryc v. Dayton-Hudson Corp* գործի<sup>272</sup> շրջանակում դատարանը բավարարել է 1 մլն դոլարի չափով պատժիչ վնասի հատուցման պահանջը, քանի որ չորս տարեկան երեխայի գիշերազգեստը հաղորդակցման մեջ մտնելով վառարանի այրիչի հետ այրվել է, որի արդյունքում ծանր վնաս է պատճառվել երեխայի առողջությանը: Դա պայմանավորված է եղել գիշերազգեստի կտորի բաղադրությունամբ, որը որևէ վերամշակման չի ենթարկվել դյուրավառությունը նվազեցնելու համար: Բացի այդ, պատասխանողը իմանալով նման ռիսկի վերաբերյալ, որևէ միջոց չի ձեռնարկել սպառողներին նախագգուշացնելու համար<sup>273</sup>:

Դոկտրինի կարկանդակն ջատագովներին Դեվիդ Օուենը նշում է, որ ամերիկյան դատական

<sup>269</sup> Տե՛ս *Schuster Richard D.*, նշված աշխատ., էջ 774:  
<sup>270</sup> Այդ մասին առավել մանրամասն տե՛ս *Grimshaw v. Ford Motor Co.*, 119 Cal. App. 3d 757, 174 Cal. Rptr. 348, (Ct. App. 1981), 29 մայիս 1981 թվականի Կալիֆոռնիայի վերաքննիչ դատարանի որոշում:  
<sup>271</sup> Տե՛ս *Behr Volker*, "Punitive Damages in America and German Law-Tendencies towards Approximation of Apparently Irreconcilable Concepts", Chi.-Kent L. Rev, 2003, N 78, էջ 121:  
<sup>272</sup> Այդ մասին առավել մանրամասն տե՛ս *Gryc v. Dayton-Hudson Corp.*, 297 N.W.2d 727 (Minn. 1980), 23 մայիս 1980 թվականի Մինեսոտայի գերագույն դատարանի որոշում:  
<sup>273</sup> Տե՛ս *Schuster Richard D.*, նշված աշխատ., էջեր՝ 777-778:

պրակտիկայում վերջին շրջանում պատժիչ վնասի հատուցումը բավական մեծ չափերի է հասել, ինչից ելնելով՝ ԱՄՆ Գերագույն դատարանը *Pacific Mutual Life Insurance Co. v. Hasli* գործով<sup>274</sup> արձանագրել է, որ պատժիչ վնասի հատուցման չափերը պետք է լինեն ողջամիտ և իրատեսական՝ պատժելու և կանխելու նպատակի համատեքստում<sup>275</sup>: Դատական պրակտիկային հայտնի են դեպքեր, երբ բավարարվել են օրինակ 17.25 միլիոն, 10.5 միլիոն, 5 միլիոն դոլարի պատժիչ վնասի հատուցման պահանջներ<sup>276</sup>:

Ինչ վերաբերում է ՀՀ օրենսդրությամբ պատժիչ վնասի հատուցման նախատեսմանը, հարկ է նշել, որ նման կարծիք է ներկայացրել Գ.Բեքմեզյանը, նշելով, որ ՀՀ օրենսդրությունն անհրաժեշտ է ներառել այնպիսի վնասի ինստիտուտ՝ կանխարգելիչ վնաս, որը կլինի պատժիչ և կոմպենսացիոն վնասների միաձուլումը և ուղղված կլինի ոչ նյութական վնասի հատուցմանը, իսկ կանխարգելիչ վնասի հատուցում շնորհելու համար պետք է հաշվի առնել իրավախախտման բնույթը, վտանգավորությունը, հասարակական հնչեղությունը, արարքի տնտեսական բացասական արժեքը, այն, թե ինչ եկամուտ է ստացել դրանից իրավախախտը և այլ<sup>277</sup>: Ըստ այդմ, գրականության մեջ կարևորվում է քաղաքացիական օրենսգրքում առկա թերությունների շուտափուլ լվերացումը, որն ավելի արդյունավետ կդարձնի ապրանքների, ծառայությունների և աշխատանքների կատարման հետևանքով պատճառված վնասի հատուցումը<sup>278</sup>:

